Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց հրահանգ

Մունիցիպալիտետի մարմինների 2025 թվականի հոկտեմբերի 4-ի ընտրություններ

Նախատեսված է այն ընտրական տեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ:

2025

Հաստատված է ԿԸՀ 2025 թվականի ապրիլի 29-ի N31/2025 որոշումով:

Օժանդակ ձեռնարկը պատրաստվել է ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսումնական կենտրոնի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 4-ին կայանալիք մունիցիպալիտետի մարմինների հերթական ընտրությունների համար: Նախատեսված է այն ընտրատեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ:

Ռեսուրսը մշակվել է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքի և «Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ քվեարկության անցկացման կարգի և պայմանների որոշման մասին» ԿԸՀ 2023 թվականի փետրվարի 6-ի №7/2023 որոշման հիման վրա:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների և գործունեության կարգի հետ կապված օրենսդրական կարգավորումներին ամբողջական տեսքով ծանոթանալու համար տեսե՛ք «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքը և ԿԸՀ-ի համապատասխան իրավական ակտերը:

ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը, ներառական ընտրական միջավայրին նպաստելու նպատակով, ՀԻԻԱ Վրաստանի միջազգային պայմանագրերի թարգմանությունների բյուրոյի միջոցով ապահովել է ԿԸՀ 2025 թվականի ապրիլի 29-ի N31/2025 որոշումով հաստատված Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց հրահանգի թարգմանությունը հայերեն:

ԿԸՀ որոշումով հաստատված ուղեցույց հրահանգի տեքստի և թարգմանված խմբագրության միջև որևէ տարբերության առկայության դեպքում առավելությունը շնորհվում է վրացերեն տարբերակին:

2025 թվականի հոկտեմբերի 4-ին
Վրաստանի քաղաքացիները կընտրեն մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմին՝ սակրեբուլո, և ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետ/համայնքապետ։

Տեղամասային ընտրական հանձնաժողովը, ճանաչելով ժողովրդավարական ընտրությունների կարևորությունը, առաջնորդվում է օրինականության, քաղաքական չեզոքության և արհեստավարժության սկզբունքներով, իր գործունեությունն իրականացնում է վարքագծի բարձր էթիկական չափորոշիչներով և ստեղծում է միջավայր, որտեղ.

- պաշտպանված է ընտրողի ազատ կամարտահայտումը և ընտրության գաղտնիությունը,
- ապահովված են հավասար և մատչելի ընտրական ծառայությունները,
- երաշխավորված է դիտորդների և ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների օրինական իրավունքների օգտագործումը։

Նորաստեղծ տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությունը և նրա անդամների լիազորության ժամկետը սկսվում է ընտրությունների օրվանից 30 օր առաջ (4 սեպտեմբերի) և դադարում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելուց անմիջապես հետո։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ իրեն նշանակած/ընտրած անձի ներկայացուցիչը չէ։ Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին արգելվում է նախընտրական քարոզարշավ իրականացնել և մասնակցել ընտրական քարոզչությանը, ազդել ընտրական հանձնաժողովի անդամի վրա կամ միջամտել նրա գործունեությանը՝ որոշումների կայացման վրա ներգործելու նպատակով, և պատժվում է օրենքով։

Թեմատիկ բովանդակություն

Գլուխ I. Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությունը մինչև քվեարկության օրն ընկած ժամանակահատվածում 3

01 Ինչ ծառայություններ է տրամադրում տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրողներին մինչև քվեարկության օրն ընկած ժամանակահատվածում 4

02 Ինչպես է նախապատրաստվում տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվան 9

Գլուխ II. Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությունը քվեարկության օրը 15

03 Ինչպես է տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրը նախապատրաստվում քվեարկության գործընթացը սկսելու համար 16

04 Ինչպես է սպասարկում տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրողին քվեարկության գործընթացում 29

05 Ինչպես է ընթանում տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը 51

06 Ինչպես է արձագանքում տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվա դիմումներին և բողոքներին 74

N1 **Հավելված.** Էլեկտրոնային սարքերը հավաքելու մասին տեղեկատվական փաստաթուղթ 77

N2 **Հավելված.** Ընտրողների հատուկ ցուցակի մեջ ընդգրկված ընտրողների քանակի հաշվառման ձևաթղթի նմուշ 80

N3 **Հավելված.** Քվեարկության գործընթացի շարունակումն առանց էլեկտրոնային միջոցների կիրառման 81

N4 **Հավելված.** Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվելիք հիմնական միջոցառումների օրացույց 94

Գլուխ I

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությունը մինչև ընտրությունների օրն ընկած ժամանակահատվածում

01

Ինչ ծառայություններ է տրամադրում տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրողներին մինչև քվեարկության օրն ընկած ժամանակահատվածում

Քվեարկությանն ընտրողների մասնակցության ապահովման համար տեղամասային ընտրական հանձնաժողովը, գործունեությունը սկսելուն պես, ընտրողներին առաջարկում է համապատասխան ծառայություն:

Ընտրողների միասնական ցուցակում տվյալների վերստուգման ծառայության իրականացման նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովն ապահովում է:

- Ընտրողների միասնական ցուցակի հանրայնացում
- Ընտրողի թերթիկների բաժանում

Ընտրողների միասնական ցուցակի հանրայնացումը

Տեղամասային ընտրական հանձնաժողովին ընտրություններից 30 օր առաջ (4 սեպտեմբերի) փոխանցվում է ԿԸՀ-ի կողմից վավերացված ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ՝ առանց ընտրողների լուսանկարների և անձնական համարների): Տեղամասային ընտրական հանձնաժողովը տվյալ ցուցակը և դրա հետ կապված բողոք ներկայացնելու կարգը անհապաղ փակցնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի շենքում տեսանելի տեղում, դրանով ապահովելով տեղեկությունների հասանելիություն ընտրողների, դիտորդական կազմակերպությունների և ընտրական գրանցում ունեցող կուսակցությունների/ընտրողների նախաձեռնող խմբերի (ընտրական սուբյեկտների) ներկայացուցիչների համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովին ոչ ուշ, քան ընտրություններից երկու օր առաջ (2 հոկտեմբերի) փոխանցվում է վերջնական, ճշգրտված ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը: Սկզբնական տարբերակը հանվում է, և հանձնաժողովը նույն տեղում փակցնում է ցուցակի ճշգրտված տարբերակը:

Ընտրողի թերթիկները բաժանելը

Ընտրողների ցուցակի տվյալների վերստուգմանը նպաստելու նպատակով քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 օր առաջ (4 սեպտեմբերի) և ոչ ուշ, քան 20 օր առաջ (14 սեպտեմբերի) տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրողներին իրենց հասցեներում բաժանում է տեղեկատվական թերթիկներ, որոնցում նշված են ընտրողների միասնական ցուցակում արտացոլված ընտրողի անձնական տվյալները և անճշտության հայտնաբերման դեպքում ցուցակում փոփոխություն պահանջելու կարգը:

Ընտրողի թերթիկը ներառում է նաև տեղեկություն՝ կապված հարմարեցված ընտրական տեղամասի հատուկ ցուցակի մեջ ընդգրկման և շարժական քվեատուփով քվեարկելու ծառայություն պահանջելու կարգի հետ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրողների վերջնական ցուցակի հիման վրա ընտրողներին իրազեկելու նպատակով հերթական փուլում բաժանում է թերթիկներ, որոնցում նշված են՝ քվեարկության ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և ժամը, քվեարկության շենքի հասցեն, հարկը և սենյակի համարները, ընտրական տեղամասի համարը, ընտրողների ցուցակում ընտրողի համարը և այլ անձնական տվյալներ: Թերթիկները բաժանվում են քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ (1 հոկտեմբերի): Ընտրողի թերթիկ չստանալը քվեարկությանը մասնակցելու իրավունքը սահմանափակելու հիմք չէ:

Ընտրողի թերթիկները բաժանվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից կազմված ժամանակացույցին համապատասխան՝ բաժանելու համար պատասխանատու խմբում/խմբերում տեղամասային ընտրական հանձնաժողովի/հատուկ խմբի անդամի/անդամների մասնակցությամբ:

Ընտրողների միասնական ցուցակում փոփոխություն կատարելու ծառայությանը նպաստելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովն ապահովում է.

- Դիմումների ընդունում և արձագանքման համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ուղարկում:
- Ցուցակում փոփոխություն կատարելու մասին կայացված որոշման հանրայնացում:

Ընտրողը, դիտորդական կազմակերպությունը, ընտրական գրանցում ունեցող կուսակցությունը և ընտրական գրանցում ունեցող ընտրողների նախաձեռնող խումբն ընտրողների միասնական ցուցակում անճշտություն հայտնաբերելու դեպքում իրավունք ունեն ոչ ուշ, քան ընտրությունների օրվանից 18 օր առաջ (16 սեպտեմբերի), համապատասխան փոփոխություն կատարելու պահանջով դիմում ներկայացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով անմիջականորեն կամ օգտվել տեղամասային ընտրական հանձնաժողովի ծառայությունից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը ստացված դիմումները (կից փաստաթղթերով՝ այսպիսինի առկայության դեպքում) անհապաղ փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ արձագանքելու համար:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ ընտրողների միասնական ցուցակում փոփոխություն կատարելու մասին կարգադրությունը փոխանցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովին, որը կարգադրությունը հանրայնացման նպատակով փակցնում է հանձնաժողովի շենքում տեսանելի տեղում:

Շարժական քվեատուփով քվեարկելու ծառայության իրականացման համար տեղամասային ընտրական հանձնաժողովն ապահովում է.

- Դիմումի հիման վրա ընտրողների ընդգրկում շարժական քվեատուփի ցուցակում:
- Շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկելու մասին կայացրած որոշման հանրայնացում:

Ընտրողը, որն առողջական վիճակի պատճառով չի կարող գնալ քվեարկության շենք կամ գտնվում է ընտրական տեղամասի տարածքում, բայց դժվարամատչելի վայրում, իրավունք ունի օգտվել շարժական քվեատուփով քվեարկելու ծառայությունից:

Շարժական քվեատուփով քվեարկելու ծառայությունից օգտվելու պահանջով ընտրողը պետք է դիմի տեղամասային ընտրական հանձնաժողով ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 11 օր առաջ (23 սեպտեմբերի) մինչև ժամը 18:00՝ գրավոր դիմումի կամ հեռախոսով բանավոր հայտարարության ձևով:

Գրավոր դիմումը գրանցելու նպատակով դիմումի մեջ պետք է նշվեն ընտրողի անունը, ազգանունը, անձնական համարը և այն հասցեն, որտեղ ընտրողը խնդրում է տանել շարժական քվեատուփը, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը անհրաժեշտության դեպքում դիմումատուին ճշգրտել է տալիս տեղեկությունը:

Հեռախոսային բանավոր հայտարարությունը գրանցելու նպատակով անհրաժեշտ է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանում նշի ընտրողի անունը, ազգանունը, անձնական համարը, հեռախոսային հաղորդագրությունը ստանալու ճշգրիտ ժամանակը, հեռախոսահամարը և այն հասցեն, ուր ընտրողը խնդրում է տանել շարժական քվեատուփը:

Եթե ընտրողը պահանջում է շարժական քվեատուփը տանել հասցեով, որը չի ընդգրկված այն ընտրական տեղամասի սահմաններում, որում ինքը գրանցված է, ընտրողին բացատրվում է, որ օրենսդրության համաձայն նա չի ընդգրկվի պահանջած ընտրական տեղամասի շարժական քվեատուփի ցուցակում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը ընտրողի գրավոր դիմումը/հեռախոսային բանավոր հայտարարությունը գրանցում է գրանցամատյանում և ստորագրությամբ հաստատում է դրա ստացումը:

Գրանցված դիմումների հիման վրա ընտրողներին շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովը, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հետ կապ հաստատելով (անհրաժեշտության դեպքում), ստուգում է ընտրատեղամասի միասնական ցուցակում ընտրողի գրանցման փաստը:

Ստուգման արդյունքների նախատեսմամբ, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը տեղամասային ընտրական հանձնաժողովի շենքում հանրայնացման համար փակցնում է.

- տեղեկություն շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկվելիք ընտրողների մասին (առանց անձնական համարների՝ նշելով միասնական ցուցակում ընտրողի հերթական համարը),
- տեղեկություն այն ընտրողների մասին, որոնց շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկումը մերժվել է:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները և դիտորդներն իրավունք ունեն վերստուգելու շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկվելիք ընտրողների պահանջի հիմնավորվածությունը և ոչ ուշ, քան ընտրությունների օրվանից 10 օր առաջ (24 սեպտեմբերի) տեղամասային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնել այս ընտրողներին ցուցակում ընդգրկելու նպատակահարմարության հարցը:

Առողջական վիճակի պատճառով շարժական քվեատուփի ցուցակում տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից ընդգրկվելիք ընտրողների թիվը չպետք է գերազանցի ընտրական տեղամասում ընտրողների միասնական ցուցակում եղած ընտրողների 3 տոկոսը: Նշված քանակը լրանալուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստացված դիմումները պետք է ուղարկի ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, որը որոշում է կայացնում ընտրողներին շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկելու նպատակահարմարության մասին: Տեղամասային ընտրական հանձնաժողովն ապահովում է ստացված արդյունքների մասին տեղեկությունների հանրայնացումը:

Շարժական քվեատուփի ցուցակի վերջնական, ճշգրտված տպագիր տարբերակը (պատի ցուցակը) տեղամասային ընտրական հանձնաժողովին կհանձնի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Նշված ցուցակում արտացոլված են այն ընտրողների տվյալները, որոնք.

- ✔ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից ընդգրկված են շարժական քվեատուփի ցուցակում,
- ✔ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընդգրկված են շարժական քվեատուփի ցուցակում նպատակահարմարության հարցի քննարկման արդյունքում,
- ✔ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված ընտրողների հատուկ ցուցակից տեղափոխվել են շարժական քվեատուփի ցուցակի մեջ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը շարժական քվեատուփի ցուցակի վերջնական, ճշգրտված տարբերակը փակցնում է հանձնաժողովի շենքում տեսանելի տեղում: Ինչպես նաև, հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի նախագահը ստորագրությամբ (փաստաթղթի վերջում ստորագրության համար նախատեսված տեղում) հաստատում են ընտրողների միասնական ցուցակում/հատուկ ցուցակում ընտրողի տվյալների երկայնքով առկա «Շարժական քվեատուփ» գրառումը:

Անվասայլակից օգտվող ընտրողի՝ քվեարկությանը մասնակցելուն նպաստելու ծառայություն իրականացնելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովն ապահովում է.

- Հարմարեցված ընտրական տեղամասի հատուկ ցուցակում ընդգրկելու պահանջով ընտրողներից դիմումների ընդունում և արձագանքման համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ուղարկում:
- Հատուկ ցուցակում ընդգրկվելու մասին կայացված որոշման հանրայնացում:

Անվասայլակից օգտվող ընտրողն իրավունք ունի հարմարեցված ընտրական տեղամասի ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկվելու համար ուղղակիորեն դիմել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կամ օգտվել տեղամասային ընտրական հանձնաժողովի ծառայությունից: Նշված հարմարեցված ընտրական տեղամասը պետք է լինի այն մեծամասնական ընտրատարածքի սահմաններում, որում գրանցված է ընտրողը:

Ընտրողը տեղամասային ընտրական հանձնաժողով պետք է դիմի ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 11 օր առաջ (23 սեպտեմբերի) մինչև ժամը 18:00, գրավոր դիմումի կամ հեռախոսով բանավոր հայտարարության ձևով:

Գրավոր դիմումը գրանցելու նպատակով անհրաժեշտ է դիմումի մեջ նշել ընտրողի անունը, ազգանունը, անձնական համարը և այն հարմարեցված տեղամասի համարը, որտեղ ընտրողը խնդրում է մասնակցել ընտրություններին: Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը, անհրաժեշտության դեպքում, դիմումատուին ճշգրտել է տալիս տեղեկությունը:

Հեռախոսային բանավոր հայտարարություն գրանցելու նպատակով անհրաժեշտ է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանում նշի ընտրողի անունը, ազգանունը, անձնական համարը, հեռախոսային հաղորդագրությունը ստանալու ճշգրիտ ժամանակը, հեռախոսահամարը և հարմարեցված ընտրական տեղամասի համարը, որտեղ ընտրողը պահանջում է մասնակցել ընտրություններին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարն ընտրողի գրավոր դիմումը/հեռախոսային բանավոր հայտարարությունը գրանցում է գրանցամատյանում և ստորագրությամբ հաստատում դրա ստացումը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի շենքում հրապարակայնության համար անհապաղ հրապարակում է տեղեկություններ այն ընտրողների մասին, որոնք հարմարեցված ընտրական տեղամասի հատուկ ցուցակում ընդգրկվելու համար դիմում են ներկայացրել հանձնաժողով: Բացի այդ, հանձնաժողովը ստացված դիմումները (կից փաստաթղթերով, եթե այդպիսիք կան) անհապաղ փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ արձագանքելու համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները և դիտորդներն իրավունք ունեն վերստուգել ընտրողի՝ հարմարեցված ընտրատեղամասում քվեարկելու պահանջի հիմնավորվածությունը և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնել այս ընտրողներին համապատասխան հատուկ ցուցակում ընդգրկելու նպատակահարմարության հարցը:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ընտրողին հարմարեցված ընտրական տեղամասի հատուկ ցուցակում ընդգրկելու որոշման մասին տեղամասային ընտրական հանձնաժողովին տեղեկացնում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ (24 սեպտեմբերի): Հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի շենքում հրապարակված ընտրողների միասնական ցուցակի վերջնական տարբերակում համապատասխան ընտրողի տվյալների երկայնքով «Փաստացի վիճակ» սյունակում «Անվասայլակից օգտվող է» գրառումը հաստատում են ստորագրությամբ (փաստաթղթի վերջում ստորագրության համար նախատեսված տեղում):

Հարցեր գիտելիքների ինքնագնահատման համար

1. Ինչպե՞ս է տեղամասային ընտրական հանձնաժողովն ապահովում ընտրողների միասնական ցուցակում տվյալների վերստուգման ծառայության իրականացումը:
2. Ի՞նչ ընթացակարգի պահպանմամբ է տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրողին ընդգրկում շարժական քվեատուփի ցուցակում:
3. Ի՞նչ տեղեկություններ պետք է ներառի շարժական քվեատուփով քվեարկելու պահանջով ներկայացված գրավոր դիմումը, և ի՞նչ տվյալներ պետք է իր մոտ նշի հանձնաժողովի քարտուղարը ընտրողի հեռախոսային բանավոր հայտարարությունը ստանալու դեպքում:
4. Ինչպե՞ս պետք է գործի տեղամասային ընտրական հանձնաժողովն այն դեպքում, եթե շարժական քվեատուփի միջոցով քվեարկելու մասին ընտրողների դիմումները գերազանցում են ընտրական տեղամասում ընտրողների միասնական ցուցակի ընտրողների 3 տոկոսը:
5. Ինչպե՞ս է տեղամասային ընտրական հանձնաժողովն ապահովում քվեարկությանը անվասայլակից օգտնող ընտրողի մասնակցությանն աջակցման ծառայության իրականացումը:

02
Ինչպես է տեղամասային ընտրական հանձնաժողովը նախապատրաստվում քվեարկության օրվան

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխումը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության գործընթացին ընտրողների մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև շարժական քվեատուփով քվեարկության ծառայություն իրականացնելու նպատակով քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ (27 սեպտեմբերի) հանձնաժողովի անդամների միջև բաժանում է հետևյալ գործառույթները.

- շարժական քվեատուփը տանող,
- ընտրողների գրանցում իրականացնող,
- ընտրողների հոսքը կարգավորող:

Հանձնաժողովի ղեկավար անձինք (հանձնաժողովի նախագահ, հանձնաժողովի նախագահի տեղակալ, հանձնաժողովի քարտուղար) չեն մասնակցում հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման գործընթացին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների միջև գործառույթները փուլերով է բաշխում: Նախ՝ կուսակցությունների կողմից նշանակված անդամներից որոշվում են շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները, հաջորդ փուլում՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հանձնաժողովի անդամներից որոշվում են ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների գործառույթ կատարող հանձնաժողովի անդամները (ընտրողների գրանցում իրականացնողների թիվը պետք է համապատասխանի հանձնաժողովին փոխանցված ընտրողների ստուգման սարքերի թվին), վերջին փուլում, առանց գործառույթի մնացած հանձնաժողովի անդամներից որոշվում է ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը:

Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին որոշելու գործընթաց.

- Ընտրական տեղամասում մեկ շարժական քվեատուփի օգտագործման դեպքում, հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ որոշում է շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի երկու անդամի:
- Ընտրական տեղամասում մեկից ավելի շարժական քվեատուփի օգտագործման դեպքում, հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ որոշում է №1 շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամի, այնուհետև №2 և №3 (առկայության դեպքում) շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի մեկական անդամ, որոնք ընտրողներին համապատասխան ծառայություն են իրականացնում հատուկ խմբի 2-2 անդամների հետ:

Ընտրական տեղամասում, որտեղ գրանցված ընտրողների թիվը գերազանցում է 800-ը, և վերոնշյալ ընտրական տեղամասի սահմանները միավորում են մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի և ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետի/համայնքապետի 2021 թվականի հոկտեմբերի 2-ի ընտրությունների համար ստեղծված երկու կամ ավելի ընտրական տեղամասերի սահմանները, կարող է օգտագործվել մեկից ավելի շարժական քվեատուփ:

Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների որոշման գործընթացը.

- Եթե ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից որոշված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը գերազանցում է որոշվելիք ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թիվը, ապա ընտրողների գրանցում իրականացնողներին հանձնաժողովի նախագահը որոշում է վիճակահանությամբ:
- Եթե ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը հավասար է որոշվելիք ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թվին կամ պակաս է դրանից, հանձնաժողովի նախագահն առանց վիճակահանության ավտոմատ կերպով ընտրողների գրանցում իրականացնողի գործառույթը շնորհում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին:

Հոսքը կարգավորողի գործառույթ իրականացնող հանձնաժողովի անդամի որոշման գործընթացը.

- Եթե առանց գործառույթի են մնացել հանձնաժողովի մեկից ավելի անդամներ, հանձնաժողովի նախագահն անդամների միջև հոսքը կարգավորողի գործառույթը բաշխում է վիճակահանությամբ:
- Եթե առանց գործառույթի է մնացել հանձնաժողովի միայն մեկ անդամ, հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամին առանց վիճակահանության ավտոմատ կերպով շնորհում է հոսքը կարգավորողի գործառույթ:

Հանձնաժողովի անդամը, որը հրաժարվում է շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամի գործառույթի կատարումից, կորցնում է հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթների բաշխման վիճակահանությանը մասնակցելու իրավունքը:

Հանձնաժողովի անդամների միջև գործառույթների վիճակահանությամբ բաշխման ընթացակարգը.

- Հանձնաժողովի նախագահը վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամների թվի նախատեսմամբ պատրաստում է միանման թերթեր: Յուրաքանչյուր թերթի վրա միևնույն գրելու միջոցով նշում է քվեարկությանը մասնակցող հանձնաժողովի մեկական անդամի անուն և ազգանուն:
- Հանձնաժողովի նախագահը ստորագրությամբ և հանձնաժողովի հատուկ կնիքով վավերացնում է վիճակահանության բոլոր թերթերը, ծալում այնպես, որ անհնար լինի տեքստի ընթերցումը և տեղադրում է սեղանի վրա:
- Հանձնաժողովի նախագահը մեկ առ մեկ վերցնում է վիճակահանության թերթերը և որոշում համապատասխան գործառույթը կատարող հանձնաժողովի անդամին/ անդամներին:

Վիճակահանությունն անցկացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությամբ, նրանց չներկայանալը չի հանդիսանում վիճակահանության անցկացումը և վիճակահանությանը մասնակցությունը խոչընդոտող հանգամանք:

Վիճակահանության ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը կազմում է ակտ, որի մեջ ներառվում են գործառույթների բաշխման արդյունքները: Ակտը ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Ակտում արտացոլված տեղեկությունները հանձնաժողովի քարտուղարը մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանում:

Քվեարկության շենքի կազմակերպումը

Տեղամասային ընտրական հանձնաժողովը, քվեարկության օրը ընտրողների քվեարկության ծառայություն իրականացնելու նպատակով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստացված ընտրական փաստաթղթերով, գույքով և համապատասխան թվով էլեկտրոնային սարքերով կազմակերպում է քվեարկության շենքը ոչ ուշ, քան քվեարկության օրվանից մեկ օր առաջ (3 հոկտեմբերի):

Քվեարկության շենքում.

- Գաղտնի քվեարկության խցիկները պետք է կարգավորվեն այնպես, որ ապահովվի ընտրողի կողմից քվեաթերթիկը լրացնելու գաղտնիությունը: Խցիկի բաց կողմը/մուտքը պետք է ուղղված լինի դեպի շենքի պատը: Քվեախցիկում պետք է տեղադրվի քվեաթերթիկը լրացնելու համար հատուկ նշիչ:
  Հարմարեցված տեղամասում կազմակերպվում է նաև գաղտնի քվեարկության հարմարեցված խցիկ՝ անվասայլակից օգտվող ընտրողների համար:

- Ընտրողների գրանցում իրականացնողների համար պատրաստած սեղանների վրա պետք է տեղադրվեն ընտրողների ստուգման սարքեր և պետք է կազմակերպվի ներքին ցանց՝ սարքերն առանց ինտերնետի իրար միացնելու համար (համաժամացում):

- Ընտրողների գրանցում իրականացնողների սեղանների վրա պետք է տեղադրվեն նաև անթափանց տուփեր՝ ստուգող սարքերից տպված ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները զետեղելու համար:

- Հիմնական քվեատուփերը (առանց դրանց վրա ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքեր տեղադրելու/կապարակնքելու) պետք է տեղադրվեն տեսանելի տեղում այնպես, որ ընտրողը կարողանա անխափան մոտենալ դրանց: Հիմնական քվեատուփերի մոտ պետք է տեղ հատկացվի, որտեղ ընտրողը քվեարկության գործընթացից անմիջապես հետո կթողնի հատուկ շրջանակ-ծրարը:

Քվեարկության շենքում ընտրողների ստուգման և ձայների հաշվման սարքերի տեխնիկական հավաքումը (առանց սարքերի ակտիվացման) ապահովում է վերադաս ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ էլեկտրոնային սարքերի տեխնիկական մասնագետը: Նշված գործընթացը վերահսկում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը (էլեկտրոնային սարքերի հավաքման մասին տեղեկությունները տե՛ս սույն ձեռնարկի Հավելված N1-ում):

Քվեարկության շենքի կահավորման նմուշ



Քվեարկության շենքում տեսանելի տեղում պետք է փակցված լինեն.

- ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը,
- ընտրողների հատուկ ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (այսպիսինի առկայության դեպքում),
- շարժական քվեատուփերի ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (այսպիսինի առկայության դեպքում),
- ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից ներկայացված կուսակցական ցուցակները,
- ընտրությունների մասնակցող քաղաքապետի թեկնածուների ցուցակը,
- տեղական մեծամասնական ընտրատարածքում ընտրելու ներկայացված թեկնածուների ցուցակը,
- հայտարարություն քվեաթերթիկում ներառված ընտրական սուբյեկտի մասին, որն այլևս չի մասնակցում ընտրություններին (այսպիսինի առկայության դեպքում հայտարարությունը փակցվում է ինչպես քվեարկության շենքում, այնպես էլ գաղտնի քվեարկության խցիկներում),
- ԿԸՀ-ի կողմից սահմանված քվեաթերթիկը լրացնելու կարգը,
- քաղվածք «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքից, որը սահմանում է ընտրական քվեաթերթիկն անվավեր ճանաչելու հիմքերը,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունները (սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություն, քաղաքապետի ընտրությունների քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություն, սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություն):

Տեղամասային ընտրական հանձնաժողովին քվեարկության օրը համապատասխան գործառույթներ իրականացնելու համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից փոխանցվում են նաև.

- ընտրական քվեաթերթիկներ (փաթեթավորված 50-50 հատ),
- հատուկ շրջանակ-ծրարներ (եթե ընտրողների հատուկ ցուցակում ներառված է ընտրող, որը չի կարող մասնակցել բոլոր տեսակի ընտրություններին, նման դեպքում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովին լրացուցիչ կտրամադրվեն տարբեր տեսակի հատուկ շրջանակ ծրարներ),
- մետաղական սեղմակներ (օգտագործվում են շարժական քվեատուփով քվեարկության գործընթացում. մետաղյա սեղմակով ամրացվում է հատուկ շրջանակ-ծրարը՝ ընտրողի կողմից քվեաթերթիկը դրա մեջ զետեղելուց հետո, այս կերպ ծրարը տեղադրվում է շարժական քվեատուփի մեջ),
- ընտրական քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչներ,
- նշմարման հեղուկներ,
- նշմարումը ստուգելու հատուկ սարք (ուլտրամանուշակագույն լապտեր),
- խոշորացնող ոսպնյակ՝ տեսողության խնդիր ունեցող ընտրողների համար,
- հատուկ շրջանակ-ձև կույր ընտրողների համար,
- քվեաթերթիկը զետեղելու ճեղքը ծածկելու միջոց (ծածկելու միջոցն ամրացվում է ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի վրա),
- ընտրողի ստուգումը հաստատող ակտեր (օգտագործվում է այն դեպքում, եթե ստուգման սարքից չի տպվի ընտրողի ստուգումը հավաստող կտրոն, կամ կտպվի տեխնիկական խոտանով),
- հիմնական/շարժական քվեատուփերի կապարակնիքներ,
- ընտրողների ստուգումը հավաստող կտրոնները տեղադրելու համար նախատեսված անթափանց տուփերի կապարակնիքներ,

- շարժական քվեատուփի ճեղքի կապարակնիք,
- սարքերում հիշողության քարտի տեղադրման հատուկ տեղի կապարակնիքներ,
- ընտրողների ստուգումը հավաստող կտրոնները զետեղելու համար հատկացված անթափանց տուփերի ճեղքի կապարակնիքներ,
- հիմնական քվեատուփերի ճեղքի կապարակնիքներ (օգտագործվում են առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի քվեարկության գործընթացը շարունակելու դեպքում),
- քվեարկության օրվա գործավարության մատյան,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքի կապարակնքած փաթեթ և թանաքի բարձիկ (կնիքն օգտագործվում է. քվեարկության գործընթացն ավարտվելուց հետո՝ ձայները հաշվելու էլեկտրոնային սարքից քվեարկության նախնական արդյունքների տպված կտրոնը վավերացնելու համար, քվեարկության օրը ընտրական տեղամասը փակելուց հետո ձայները հաշվելու ընթացակարգն անցկացնելու համար անհրաժեշտ վիճակահանության թերթիկները վավերացնելու համար, տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների/ ուղղման արձանագրության և տրամադրվելիք ֆոտապատճենների վավերացման համար, քվեարկության օրվա գործավարության մատյանը և գրանցամատյանը փակելը վավերացնելու համար,
- շարժական քվեատուփերի ցուցակի (այսպիսինի առկայության դեպքում) հանձնաժողովի համար նախատեսված տարբերակը,
- ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի (այսպիսինի առկայության դեպքում) հանձնաժողովի համար հատկացված տարբերակների կապարակնքված փաթեթներ (օգտագործվում է առանց ստուգող սարքերի քվեարկության գործընթացը շարունակելու դեպքում),
- էլեկտրոնային միջոցներով իրականացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթուղթ (վարում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը քվեարկության ընթացքում),
- ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների թվի գրանցման ձևաթուղթ (գրանցում իրականացնողներն այս ձևաթղթում գրանցում են այն ընտրողների թիվը, ովքեր չեն կարող մասնակցել բոլոր տեսակի ընտրություններին),
- տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններ (սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություն, սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն, քաղաքապետի ընտրությունների քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն),
- քվեարկության ավարտից հետո ընտրական փաստաթղթերը/գույքը փաթեթավորելու համար ծրարներ/պոլիէթիլենային տոպրակ,
- պատճենահանող սարք (քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները/ ուղղման արձանագրությունը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր պատճենահանելու համար),
- պլանշետ (օգտագործվում է քվեարկության օրը ԿԸՀ-ին էլեկտրոնային տարբերակով համապատասխան տեղեկություններ փոխանցելու համար, այդ թվում, քվեարկության արդյունքների մասին նախնական տվյալները և ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը փոխանցելու համար):

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից էլեկտրոնային սարքերը, ընտրական փաստաթղթերը և գույքը ստանալու համար պատասխանատու անձը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն է: Ընդունման-հանձնման գործընթացը ձևակերպվում է ակտով (երկու օրինակից), որը տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցամատյանում:

Քվեարկության շենքի կահավորումն ավարտելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրական էլեկտրոնային սարքերը, ընտրական փաստաթղթերը և գույքը ընդունման-հանձնման ակտի հիման վրա հանձնում է պահնորդական ոստիկանությանը:

Հարցեր գիտելիքների ինքնագնահատման համար

1. Ի՞նչ հաջորդականությամբ և ի՞նչ կարգով են քվեարկության օրը կատարվելիք գործառույթները բաշխվում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև:
2. Ի՞նչ ընթացակարգերի պահպանմամբ կբաշխի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների գրանցում իրականացնողի գործառույթը, եթե ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված տեղամասային հանձնաժողովի անդամների թիվը.
   - ✔ գերազանցում է ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի որոշվելիք անդամների թիվը.
   - ✔ չի գերազանցում ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի որոշվելիք անդամների թիվը:
3. Ե՞րբ է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանություն անցկացնում՝ շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին որոշելու համար:
4. Ընտրական տեղամասում մեկից ավելի շարժական քվեատուփ օգտագործելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ի՞նչ ընթացակարգի պահպանմամբ է իրականացնում վիճակահանությունը՝ շարժական քվեատուփերը տանող հանձնաժողովի անդամներին որոշելու համար:
5. Ե՞րբ և ինչպե՞ս է կազմակերպվում քվեարկության շենքը:
6. Ի՞նչ ընտրական փաստաթղթեր/գույք է փոխանցում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովին քվեարկության օրը համապատասխան գործառույթներ իրականացնելու համար:
7. Ո՞վ է պատասխանատու քվեարկության շենքում ընտրողների ստուգման և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի տեխնիկական հավաքման համար (առանց սարքերն ակտիվացնելու):

Գլուխ II

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությունը քվեարկության օրը

03

Ինչպես է տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրը նախապատրաստվում քվեարկության գործընթացը սկսելու համար

Մինչև ընտրական տեղամասը բացելը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պահնորդական ոստիկանությունից, ընդունման-հանձնման ակտի հիման վրա, ընդունում է քվեարկության սենյակում պահպանվող էլեկտրոնային սարքերը, ընտրական փաստաթղթերը և գույքը:

Ընտրական տեղամասը բացվելուց հետո, մինչև քվեարկության գործընթացը սկսելը, տեղամասային ընտրական հանձնաժողովը հաջորդաբար իրականացնում է հետևյալ ընթացակարգերը.



Ժամը 06:45
Ընտրատեղամասը բացել
Գործավարության մատյանը բացել

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց գրանցել

Հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման արդյունքներն արտացոլել գործավարության մատյանում

Հայտարարել քանակական տվյալները՝ քվեաթերթիկների և հատուկ շրջանակ-ծրարների թիվը, ընտրողների թիվը ցուցակներում

Ընտրողների ստուգման սարքերում ստուգման գործընթացը բացել

Քվեատուփերը կապարակնքել Ձայները հաշվելու հատուկ սարքերը տեղադրել

Ձայները հաշվելու հատուկ սարքերում քվեարկության գործընթացը բացել

Հանձնաժողովի անդամներին գործառույթներին համապատասխան ընտրական փաստաթղթեր և գույք փոխանցել

Ժամը 08:00
Քվեարկությունը սկսել

Ընտրական տեղամասը բացելը

Ընտրատեղամասը բացվում է ժամը 06:45-ին: Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են ժամանակին ներկայանալ ընտրական տեղամաս: Հանձնաժողովն իրավազոր է սկսել քվեարկության համար նախապատրաստման ընթացակարգերը, եթե ներկայացել է առնվազն 9 անդամ:

> Եթե պարզվում է, որ հանձնաժողովի անդամների թիվը պակաս է իննից, տվյալ տեղեկությունն անհապաղ հաղորդվում է վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Տեղամասային ընտրական հանձնաժողովը գործում է վերադաս ընտրական հանձնաժողովի որոշման համաձայն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը բացում է գրանցամատյանը և առաջին էջում մուտքագրում ընտրական տեղամասը բացելիս քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի բոլոր անդամների անուններն ու ազգանունները (նրանց ընտրող/նշանակող սուբյեկտների նշմամբ): Հանձնաժողովի անդամները գրանցամատյանում գրանցումը հաստատում են ստորագրությամբ:

Քվեարկության շենքի կահավորման նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

საარჩევნო უბნის გახსნისას კენჭისყრის შენობაში ყოფნის უფლების მქონე პირები

№	სახელი, გვარი	სტატუსი	წარმდგენის დასახელება	ხელმოწერა
1	ნინო ნინოშვილი	თავმჯდომარე	საოლქო საარჩევნო კომისია	ნ. ნინოშვილი
2	ეიორგი ეიორგაძე	მოადგილე	საოლქო საარჩევნო კომისია	ე. ეიორგაძე
3	დავით დავითიანი	მდივანი	საოლქო საარჩევნო კომისია	დ. დავითიანი
4	ინა ინაშვილი	კომისიის წევრი	საოლქო საარჩევნო კომისია	ი. ინაშვილი
5	სალომე სოლომონიძე	კომისიის წევრი	პოლიციაში პაემცია 111	ს. სოლომონიძე
6	შოინ შოინიშვილი	კომისიის წევრი	პოლიციაში პაემცია 112	შ. შოინიშვილი
7	ელა ელაშვილი	კომისიის წევრი	პოლიციაში პაემცია 113	ე. ელაშვილი
8	პეტერ ფასტერლინგი	საერთაშორისო დამკვირვებელი	საერთაშორისო ორგანიზაცია	s. fasterding
9	ცოცნე ღუდღამიანი	მედია	ტელევიზია „ნათელი მზერა"	ც. ღუდღამიანი
10	ეიორგი ჭრიაძე	აღმოს. დამკვირვებელი	აიან „მომავლის იმედი"	ე. ჭრიაძე
11	ნაცა აბოცაძე	პუბლიკის წარმომადგენელი	პოლიციაში პაემცია 119	ნ. აბოცაძე

Քվեարկության օրվա ընթացքում հանձնաժողովի բոլոր անդամները պետք է կրեն հատուկ համազգեստ և իրենց ով լինելն ու կարգավիճակը մատնանշող կրծքանշան:

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց մուտքը քվեարկության շենք և նրանց իրավական վիճակը

Ընտրական տեղամասը բացվելուն պես, բացի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներից, քվեարկության շենքում կարող են գտնվել

- ✔ ԿԸՀ և համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներ/ներկայացուցիչներ,
- ✔ գրանցված տեղական դիտորդական կազմակերպությունների դիտորդներ (մեկ կազմակերպությունն իրավունք ունի ընտրական տեղամասում միաժամանակ ունենալ ոչ ավելի, քան մեկ դիտորդ),
- ✔ գրանցված միջազգային կազմակերպությունների դիտորդներ (մեկ կազմակերպությունն իրավունք ունի ընտրական տեղամասում միաժամանակ ունենալ ոչ ավելի, քան 2 միջազգային դիտորդ, և նրանց կարող է ուղեկցել թարգմանիչ),

- ✔ հավատարմագրված մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ (մեկ կազմակերպությունն իրավունք ունի ընտրական տեղամասում միաժամանակ ունենալ ոչ ավելի, քան 2 ներկայացուցիչ),
- ✔ ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներ (մեկ ընտրական սուբյեկտ իրավունք ունի ընտրական տեղամասում միաժամանակ ունենալ ոչ ավելի, քան մեկ ներկայացուցիչ)։

Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը, ինչպես նաև լրատվամիջոցի ներկայացուցիչն իրավունք ունի քվեարկության օրվա ցանկացած ժամանակ փոխարինել նրան ներկայացնող կազմակերպության մեկ այլ գրանցված ներկայացուցչի։

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք քվեարկության օրը պետք է քվեարկության շենքում ներկա գտնվեն իրենց ինքնությունը և կարգավիճակն արտացոլող կրծքանշանով, որն ուժի մեջ է միայն անձը հաստատող փաստաթղթի հետ։

Դիտորդական կազմակերպությունների դիտորդներին, հավատարմագրված մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներին թույլ է տրվում մուտք գործել քվեարկության շենք, եթե.

- ✔ կրծքանշանի վրա կարգավիճակում նշված է մուտքի թույլտվություն բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովներ,
- ✔ կրծքանշանի վրա կարգավիճակում նշված է մուտքի թույլտվություն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի տարածքում առկա բոլոր ընտրական տեղամասեր։

Ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներին թույլ է տրվում մուտք գործել քվեարկության շենք, եթե կրծքանշանի վրա նրանց կարգավիճակում նշված է մուտքի թույլտվություն համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողով։

Հանձնաժողովի քարտուղարը ստուգում է կրծքանշանի գործողության ժամկետը և դրա վրա նշված կարգավիճակը։ Ստուգման արդյունքների նախատեսմամբ՝ հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանի առաջին էջում, անհրաժեշտության դեպքում՝ 2-րդ և 10-րդ էջերում գրանցում է քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց անունը և ազգանունը (նշելով նրանց ներկայացնող կազմակերպությունը/ընտրական սուբյեկտը)։ Նշված անձինք գործավարության մատյանում գրանցումը հաստատում են ստորագրությամբ։

Քվեարկության շենք մուտք գործելու պայմաններին անհամապատասխանության դեպքում հանձնաժողովի քարտուղարն անձին քվեարկության շենքը լքելու ցուցում է տալիս։

Կրծքանշանների նմուշներ

Քվեարկության օրը դիտորդը և ընտրական սուբյեկտի ներկայացուցիչն օգտվում են Վրաստանի ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով սահմանված լիազորություններից, այդ թվում՝ իրավունք ունեն առանց քվեարկության գործընթացին խանգարելու.

- քվեարկության օրը ցանկացած ժամանակ գտնվել քվեարկության շենքում, առանց սահմանափակման տեղաշարժվել ընտրական տեղամասի տարածքում և ազատ, առանց խոչընդոտի դիտարկել քվեարկության գործընթացի բոլոր փուլերը ցանկացած տեղից,
- ընտրողից պահանջել ցույց տալ, թե քանի քվեաթերթիկ և հատուկ շրջանակ-ծրար ունի ձեռքում,
- դիտարկել շարժական քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը,
- դիտարկել ընտրողների ձայները հաշվելն այնպիսի պայմաններում, ինչն ապահովում է քվեաթերթիկի տեսանելիություն,
- դիտարկել տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց համար ստեղծել համապատասխան պայմաններ՝ իրենց լիազորություններն առանց խոչընդոտի իրականացնելու համար:

Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցիչը պարտավոր են պահպանել «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով սահմանված պահանջները: Նրանք իրավունք չունեն.

- միջամտել ընտրական հանձնաժողովի գործունեությանը,
- ներգործել ընտրողների ազատ կամարտահայտման վրա,
- կրել որևէ ընտրական սուբյեկտի խորհրդանշանը և նշանը, քարոզել ընտրողին որևէ ընտրական սուբյեկտի օգտին կամ նրա դեմ,
- պահանջել ընտրողներից ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, այդ թվում՝ վերցնել նշված փաստաթուղթը,
- ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը, ընտրողի ստուգման սարքի վրա բացված ընտրողի տվյալները, ընտրողների ստուգման սարքից տպված ստուգումը հաստատող կտրոնը և ընտրողի կողմից քվեաթերթիկում արված ընտրությունը լուսանկարահանել կամ այլ կերպ մշակել:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև բաշխված գործառույթների վերաբերյալ տվյալների արտացոլումը գործավարության մատյանում

Քվեարկության գործընթացին ընտրողների մասնակցությունն ապահովելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները քվեարկության օրը կատարում են հետևյալ գործառույթները.

- ✔ ընտրողների հոսքը կարգավորող,
- ✔ ընտրողների գրանցում իրականացնող,
- ✔ քվեատուփը և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող,
- ✔ շարժական քվեատուփը տանող:

Քվեատուփը և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող հանձնաժողովի անդամի գործառույթը կատարում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը (գործառույթի կատարումը կարող է հանձնարարվել նաև հանձնաժողովի մեկ այլ անդամի):

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման արդյունքները, որոնք արտացոլված են մինչև քվեարկության օրը անցկացված վիճակահանության արդյունքների ակտում, մուտքագրում են 3-րդ էջում:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

კენჭისყრის დაწყებამდე საუბნო საარჩევნო კომისიისა და სპეცჯგუფის წევრთა შორის წილისყრით ფუნქციათა განაწილების შედეგები

№	კომისიის/სპეცჯგუფის წევრის ფუნქცია	კომისიის/სპეცჯგუფის წევრის სახელი, გვარი	კომისიის/სპეცჯგუფის წევრის ხელმოწერა
1.	I გადასატანი საარჩევნო ყუთის წამღები	დოდო დოლიძე	დ. დოლიძე
2.	I გადასატანი საარჩევნო ყუთის წამღები	თაქაო თათაყლაძვილი	თ. თათაყლაძვილი
3.	II გადასატანი საარჩევნო ყუთის წამღები	ცაცო ცაცუკაძვილი	ც. ცაცუკაძვილი
4.	II გადასატანი საარჩევნო ყუთის წამღები *(სპეცჯგუფი)*	ჯილდა ეაბაიძე	ჯ. ეაბაიძე
5.	II გადასატანი საარჩევნო ყუთის წამღები *(სპეცჯგუფი)*	ვიოლა აბაძიძე	ვ. აბაძიძე
6.	ამომრჩეველთა ნაკადის მომწესრიგებელი	ნიკოლოზ აბაძიძე	ნ. აბაძიძე
7.	I რეგისტრატორი	ინა ინაძვილი	ი. ინაძვილი
8.	II რეგისტრატორი	ლალი ლალიაძვილი	ლ. ლალიაძვილი
9.	III რეგისტრატორი	დავით დავითაძე	დ. დავითაძე
10.	IV რეგისტრატორი	ნიკოლოზ ნიკვაძვილი	ნ. ნიკვაძვილი

Հանձնաժողովի անդամին վերապահված գործառույթը կարող է ժամանակավորապես փոխանցվել այլ անդամի միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ: Հանձնաժողովի քարտուղարը գործառույթի փոխանցումը, նշելով ժամանակը, գրառում է գործավարության մատյանի 5-րդ էջում: Հանձնաժողովի անդամն իր ստորագրությամբ հաստատում է գործառույթի փոխանցման փաստը:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

საუბნო საარჩევნო კომისიის წევრთა შორის წილისყრით დადგენილ ფუნქციათა დროებით სხვა წევრზე გადაცემის შესახებ ინფორმაცია

№	კომისიის წევრის სახელი, გვარი	კომისიის წევრის ფუნქცია	ფუნქციის დროებითი შემსრულებელი კომისიის წევრის სახელი, გვარი	ფუნქციის დროებით გადაცემის დრო (სთ. წთ.)	ფუნქციის დაბრუნების დრო (სთ. წთ.)	ხელმოწერა
1	ლალი ლალიაძვილი	მეგზურ-ცერემონიმეისტერი	ნანა ნანეიძვილი	19:45	20:00	ლ. ლალიაძვილი

Ռիսկերի կանխարգելումը.

- Եթե քվեարկության օրը չի ներկայացել ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը գործառույթի կատարումը հանձնարարում է հանձնաժողովի մեկ այլ անդամի: Անհրաժեշտության դեպքում նա իրավազոր է գործառույթի կատարումը հանձնարարել հանձնաժողովի այն անդամին, որին վերապահվել է հոսքը կարգավորողի գործառույթը: Նման դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթը ինքը կհամատեղի: Գրանցում իրականացնողի գործառույթը այլ անդամի շնորհելու անհնարինության դեպքում, հանձնաժողովի նախագահը նվազեցնում է ընտրողների գրանցում իրականացնողների թիվը:

- ✔ Եթե քվեարկության օրը չի ներկայանում շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը կամ շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը հրաժարվել է իրեն շնորհած գործառույթի կատարումից, այս դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամի գործառույթը շնորհում է հանձնաժողովի մեկ այլ անդամի:
- ✔ Եթե քվեարկության օրը չի ներկայացել ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը, այս դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը գործառույթի կատարումը հանձնարարում է հանձնաժողովի մեկ այլ անդամի: Եթե դա հնարավոր չէ, հանձնաժողովի նախագահը ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթն ինքն է համատեղում:

Ընտրական տեղամաս ուշացումով ներկայացած հանձնաժողովի անդամին գործառույթի շնորհման հարցը որոշում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

Քանակական տվյալների հայտարարումը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման արդյունքները գործավարության մատյանում գրանցելուց հետո, հանձնաժողովի նախագահը բացում է հանձնաժողովի հատուկ կնիքի կապարակնքված փաթեթը: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի հատուկ կնիքի համարը գրանցում է գործավարության մատյանի 9-րդ էջում: Հանձնաժողովի նախագահը հայտարարում է ստացված քվեաթերթիկների և հատուկ շրջանակ-ծրարների թիվը, ինչպես նաև, ընտրողների թիվը՝ ըստ միասնական ցուցակի, ինչպես նաև հատուկ ցուցակի և շարժական քվեատուփի ցուցակի (այսպիսինի առկայության դեպքում):

Հանձնաժողովի քարտուղարը նշված տվյալները, բացառությամբ հատուկ շրջանակ-ծրարների քանակի, մուտքագրում է քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում և գործավարության մատյանում:

> Քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունների մեջ և գործավարության մատյանում հատուկ ցուցակում ընտրողների թիվը գրանցվում է քվեարկության ավարտից հետո:

Ընտրողների ստուգման սարքերում ստուգման գործընթացը բացելը

Հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ✔ ակտիվացնում է ընտրողների ստուգման սարքերում ներբեռնված ծրագիրը,
- ✔ օգտագործելով անհատական ծածկագիր/գաղտնաբառ սարքերում բացում է ստուգման գործընթացը,
- ✔ ստուգում է ակտիվացված սարքերի միջև կապի (համաժամացում) առկայությունը:

> Սարքերում ստուգման գործընթացի բացման փուլերի նկարագրությունը ներկայացված է Սխեմա N1-ում:

Սարքերում ստուգման գործընթացը բացելուց հետո.

- ✔ Սարքերից ավտոմատ ռեժիմում տպվում է նախնական հաշվետվություն/կտրոն, դրա վրա տեղ գտած տեղեկության համաձայն հաստատվում է, որ սարքերով ոչ մի ընտրողի ստուգում չի կատարվել (հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը ստորագրում են տպված կտրոնը, որը պահպանում է հանձնաժողովի քարտուղարը):

✔ Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ցուցումով ընտրողների գրանցում իրականացնողներից մեկը ստուգման սարքից տպում է ընտրողների ցուցակը (հանձնաժողովի քարտուղարը ցուցակը փակցնում է քվեարկության շենքում տեսանելի տեղում՝ ցուցադրական արձանագրության հետ միասին)։

Սարքից ընտրողների ցուցակը տպելու գործընթացի նկարագրությունը ներկայացված է Սխեմա N2-ում։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը, գործընթացին զուգահեռ, համապատասխան նշումներ է անում էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթում։

Սխեմա N1. Սարքերում ստուգման գործընթացը բացելու փուլերի նկարագրություն



{I}

Կոճակը սեղմելով հանձնաժողովի նախագահն ակտիվացնում է սարքերում ներբեռնված ծրագիրը։

{II}

Սարքերում սկսում է ներբեռնվել ծրագիրը, տևում է մի քանի վայրկյան։

{III}

Հանձնաժողովի նախագահը ստուգման գործընթացը բացելու նպատակով սարքերի մեջ մուտքագրում է անհատական ծածկագիրը/գաղտնաբառը։
Սարքերի միջև համաժամացումը հաստատվում է պատկերակների կանաչ գունավորումով։ Թվային խորհրդանիշը ցույց է տալիս կապակցված սարքերի քանակը։

{IV}

Սեղմելով «Բացել ստուգումը» կոճակը՝ հանձնաժողովի նախագահը բացում է ստուգման գործընթացը սարքերում: Բացումը հաստատելու համար հանձնաժողովի նախագահը կրկնական է մուտքագրում անհատական ծածկագիրը/ գաղտնաբառը:



{V}

Ստուգման գործընթացը բացելուն պես սարքերից ավտոմատ կերպով տպվում է նախնական հաշվետվությունը:



{VI}

Սեղմելով «Լավ» կոճակը՝ հանձնաժողովի նախագահը հաստատում է քվեարկության գործընթացի բացումը:

Սխեմա N2. Սարքից ընտրողների ցուցակը տպելու գործընթացի նկարագրում

{I}

Ընտրողների ցուցակը տպելու մենյու տեղափոխվելու համար գրանցում իրականացնողը սեղմում է «Վերադառնալ մենյու» կոճակը:

{II}

Մենյուի մեջ գրանցում իրականացնողը սեղմում է «Ընտրողների ցուցակ» կոճակը:



{III}

Գրանցում իրականացնողը սեղմում է «Տպել» կոճակը և արդյունքում տպվում է ընտրողների ցուցակը:

Քվեատուփերը կապարակնքելը և ձայները հաշվելու հատուկ սարքերում քվեարկության գործընթացը բացելը

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ✔ ստուգում է հիմնական/շարժական քվեատուփերը և քվեատուփերի դատարկ լինելը հաստատվելուց հետո հիմնական քվեատուփերի վրա տեղադրում է ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքեր,
- ✔ անհատական համար ունեցող կապարակնիքներով կապարակնքում է հիմնական /շարժական քվեատուփերը (հիմնական քվեատուփերը կապարակնքվում են այնպես, որ հնարավոր չլինի առանց կապարակնիքը փսասելու դրանց վրա տեղադրված ձայների հաշվման հատուկ սարքերը հանել, քվեատուփերի մեջ քվեաթերթիկը ձեռքով տեղադրել և/կամ հանել),
- ✔ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի վրա ամրացնում է քվեաթերթիկը զետեղելու ճեղքը փակող հարմարանքը (փակող հարմարանքն ամրացվում է ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի վրա եղած ամրակի վրա):

Նմուշ

Քվեաթերթիկը զետեղելու ճեղքը ծածկող հարմարանք



Սարքի վրա եղած ամրակ

Սարքի վրա ամրացված քվեաթերթիկը զետեղելու ճեղքը ծածկող հարմարանք

- ✔ Կապարակնքելուց հետո նա ակտիվացնում է ձայները հաշվելու հատուկ սարքերում ներբեռնված ծրագիրը՝ օգտագործելով հատուկ բանալի,
- ✔ սարքերի մեջ բացում է քվեարկության գործընթացը՝ օգտագործելով անհատական ծածկագիր/գաղտնաբառ:

Սարքերում քվեարկության գործընթացը բացելուց հետո սարքերից ավտոմատ կերպով տպվում է «զրոյական քաղվածք»/կտրոն, ըստ նրա վրա տեղ գտած տեղեկությունների հաստատվում է, որ սարքերով ոչ մի ընտրող չի քվեարկել (հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը ստորագրում են տպված կտրոնների վրա, դրանք պահպանում է հանձնաժողովի քարտուղարը):

Սխեմա N3. Ձայները հաշվելու հատուկ սարքերում քվեարկության գործընթացը բացելու և սարքերից «զրոյական քաղվածքներ» տպելու գործընթացի նկարագրությունը

{I}

Հանձնաժողովի նախագահը սարքերի կորպուսի վրա եղած ճեղքի մեջ հատուկ բանալի տեղադրելով՝ ակտիվացնում է սարքերի մեջ ներբեռնած ծրագիրը:

{II}

Սարքերի մեջ սկսվում է ծրագրի ներբեռնումը, տևում է մի քանի վայրկյան:

{III}

Հանձնաժողովի նախագահը քվեարկության գործընթացը սկսելու նպատակով սարքերի էկրանի վրա ընտրում է «Նախագահ» կոճակը:

თავმჯდომარე



{IV}

Հանձնաժողովի նախագահը սարքերի մեջ մուտքագրում է անհատական ծածկագիրը/ գաղտնաբառը:



{V}

Հանձնաժողովի նախագահը սարքերի էկրանի վրա ընտրում է «Բացել քվեարկությունը», բացելը հաստատելու համար կրկնական է մուտքագրում անհատական ծածկագիրը/ գաղտնաբառը:

კენჭისყრის გახსნა



{VI}

Քվեարկությունը բացվելուն պես սարքից ավտոմատ ռեժիմում տպվում է «զրոյական քաղվածք»։

{VII}

Սեղմելով «Սկսել քվեարկությունը» կոճակը՝ հանձնաժողովի նախագահը հաստատում է քվեարկության գործընթացը բացելը։

კენჭისყრის დაწყება

«Զրոյական քաղվածքը» տպելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայները հաշվելու սարքերի մեջ տեղադրում է առանց հատուկ շտրիխ-կոդի և անհատական QR-կոդի քվեաթերթիկի ձևաչափի թուղթ, որպեսզի ստուգվի, թե արդյոք ձայները հաշվելու սարքերն ընդունում են չսահմանված նմուշի քվեաթերթիկ։

Հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանի 4-րդ էջում մուտքագրում է քվեատուփերի անհատական կապարակնիքների համարները և կնքման ճշգրիտ ժամանակը։ Նույն էջում հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարն իրենց ստորագրություններով հաստատում են դատարկ քվեատուփերի կապարակնքումը և այն տեղեկությունը, որ ոչ մի ընտրող չի քվեարկել ձայների հաշվման հատուկ սարքերով։

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

საარჩევნო ყუთების დალუქვის მონაცემები	
საარჩევნო ყუთების დალუქვის დრო	07 სთ. 30 წთ.
I ძირითადი საარჩევნო ყუთის ლუქების ნომრები	1 2 3 4 5 6 7 1 2 3 4 5 6 9 1 2 3 4 5 6 8 1 2 3 4 5 6 2 1 2 3 4 5 6 0
II ძირითადი საარჩევნო ყუთის ლუქების ნომრები	1 2 4 4 5 6 7 6 2 3 4 5 6 9 1 4 3 4 5 6 8 4 2 3 4 5 6 2 1 2 5 4 4 6 0
I გადასატანი საარჩევნო ყუთის ლუქების ნომრები	1 2 3 4 5 6 1 5 3 4 5 6
II გადასატანი საარჩევნო ყუთის ლუქების ნომრები	1 2 3 4 7 6 1 5 3 4 7 6
დალუქული ყუთები ცარიელია და დალუქვის მომენტისათვის ხმის მიცემის აპარატის საშუალებით არცერთ ამომრჩეველს არ მიუცია ხმა	
კომისიის თავმჯდომარე _____ ხელმოწერა	კომისიის მდივანი _____ ხელმოწერა

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը գործընթացին զուգահեռ, աուդիտի հաստատման ձևաթղթում կատարում է համապատասխան նշումներ։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին ընտրական փաստաթղթերի և ընտրական նյութերի փոխանցումը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներին, քվեարկության գործընթացում իրականացվելիք գործառույթներին համապատասխան, փոխանցում է ընտրական փաստաթղթեր ու նյութեր:

Հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին փոխանցվում է նշմարումը ստուգող ուլտրամանուշակագույն լապտեր, ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի փոխանցվում է.

- 50 հատ քվեաթերթիկ (գրանցում իրականացնողն ստուգում է փաթեթում ընտրական քվեաթերթիկների թվի ճշգրտությունը և հանձնաժողովի նախագահի հետ ստորագրությամբ հաստատում ընդունման-հանձնման ակտում),
- քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչ (ընտրողին քվեաթերթիկը լրացնելու կարգը բացատրելու գործընթացում քվեաթերթիկի վրա ընտրողի կողմից փորձնական շրջանը գունավորելու համար),
- քվեարկության համար նախատեսված երեք տեսակ հատուկ հատուկ շրջանակ-ծրարներ
  - ✔ հատուկ շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի բոլոր երեք սյունակները (նախատեսված է ընտրողի համար, որը մասնակցում է մունիցիպալիտետի քաղաքապետի, մունիցիպալիտետի համամասնական ընտրակարգով և մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին),
  - ✔ հատուկ շրջանակ-ծրար, որը ծածկում է միայն երկու սյունակ (նախատեսված է ընտրողի համար, որը մասնակցում է միայն մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին),
  - ✔ հատուկ շրջանակ-ծրար, որը ծածկում է միայն մեկ սյունակ (նախատեսված է ընտրողի համար, որը մասնակցում է միայն մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին):
- նշմարման հեղուկ,
- գրիչ (ստուգող սարքից տպված ընտրողի ստուգումը հաստատող կտրոնի վրա ընտրողի ստորագրությունը արձանագրելու նպատակով),
- ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները տեղադրելու համար հատկացված անթափանց տուփ (նախքան տուփը փոխանցելը հանձնաժողովի նախագահը անհատական համար ունեցող կապարակնիքով կապարակնքում է տուփը, և հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանում մուտքագրում է կապարակնիքների անհատական համարները՝ այն գրանցում իրականացնողների տվյալներով (անուն, ազգանուն), որոնց փոխանցվել են տուփերը տուփը ստանալը համապատասխան գրանցում իրականացնողը հաստատում է ստորագրությամբ),
- ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը հաշվառելու ձևաթուղթ (գրանցում իրականացնողները տվյալ ձևաթղթում հաշվառում են այն ընտրողների թիվը, որոնք չեն կարող մասնակցել բոլոր տեսակի ընտրություններին):

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

ВЕРИФИКАЦИИ АППАРАТОМ ПОЛУЧЕННЫХ ИЗБИРАТЕЛЕЙ ВЕРИФИКАЦИИ ДОКУМЕНТОВ, ПОДТВЕРЖДАЮЩИХ ПРАВО ПРИСУТСТВОВАТЬ ПРИ ПОДСЧЕТЕ ГОЛОСОВ/ДАННЫЕ ПОДСЧЕТА ГОЛОСОВ/ПОЛУЧЕНИЕ ГОЛОСОВ			
კომისიის წევრის ფუნქცია	ლუქების ნომრები	სახელი და გვარი	ხელმოწერა
I რეგისტრატორი	1 2 1 2 1 2 1 2 1 2 1 5	ნიკოლოზ ნიკვაძვილი	ნ. ნიკვაძვილი
II რეგისტრატორი	1 2 1 1 1 3 1 2 1 1 1 6	ზვიად ზვიადაძე	ზ. ზვიადაძე
III რეგისტრატორი	1 1 1 2 1 4 1 1 1 2 1 7	ალოძე ალოძონიძე	ა. ალოძონიძე
IV რეგისტრატორი	7 2 1 2 1 5 2 2 1 2 1 5	ირინ ირინიძვილი	ი. ირინიძვილი
V რეგისტრატორი			

Հարցեր գիտելիքի ինքնագնահատման համար

1. Ժամը քանիսի՞ն է բացվում ընտրական տեղամասը:
2. Ո՞վ է պատասխանատու քվեարկության օրվա գործավարության մատյանի վարման համար:
3. Թվարկե՛ք քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց, ի՞նչ պահանջներ պետք է բավարարեն նրանք՝ քվեարկության շենք նրանց մուտքը թույլատրելու նպատակով:
4. Քվեարկության օրը ի՞նչ իրավունքներից են օգտվում քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք և ինչի՞ իրավունք չունեն նրանք:
5. Ո՞վ է կատարում քվեատուփը և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկողի գործառույթը:
6. Քվեատուփերը կապարակնքելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարն ի՞նչ տվյալներ է մուտքագրում քվեարկության օրվա գործավարության մատյանում:
7. Քանի՞ տեսակի հատուկ շրջանակ-ծրարներ են փոխանցվում գրանցում իրականացնողներին:
8. Ո՞վ է պատասխանատու ընտրողների ստուգման և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի ակտիվացման համար, և ի՞նչ ընթացակարգով է ընթանում.
   - ✔ ստուգման սարքերում ընտրողների ստուգման գործընթացը բացելը,
   - ✔ ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերում քվեարկության գործընթացը բացելը:
9. Ի՞նչ տեղեկություն է հաստատում ընտրողների ստուգման սարքերից տպված նախնական հաշվետվությունը:
10. Ի՞նչ տեղեկություն է հաստատում ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերից տպված «զրոյական քաղվածքը»:

04

Ինչպես է սպասարկում տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրողին քվեարկության գործընթացում

Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները պատասխանատու են քվեարկության օրը յուրաքանչյուր ընտրողին որակյալ ծառայություն մատուցելու համար, որը նախատեսում է.

- Գործառույթների մանրակրկիտ կատարում:
- Էթիկական հաղորդակցություն ընտրողների հետ:
- Ընտրողին քվեարկության ընթացակարգի պարզաբանում:
- Քվեարկության գործընթացին ընտրողի՝ առանց խոչընդոտների մասնակցությանը նպաստում:
- Ընտրողի քվեարկության գաղտնիության պահպանում:

Քվեարկության գործընթացը

Քվեարկությունն անց է կացվում քվեարկության օրվա (4 հոկտեմբերի) ժամը 08:00-ից մինչև ժամը 20:00-ն: Քվեարկելու ընթացակարգն անց է կացվում սահմանված հաջորդականության պահպանմամբ:

I. Քվեարկության սենյակ մտնելիս՝ ընտրողը ընտրողների հոսքը կարգավորողի մոտ անցնում է նշմարման ստուգման ընթացակարգ:

Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը.

- ✔ կարգավորում է քվեարկության շենք մտնող ընտրողների հոսքը,
- ✔ ընտրողին խնդրում է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ (Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր),
- ✔ ուլտրամանուշակագույն լապտերով ստուգում է՝ արդյոք ընտրողը ձեռքի վրա չունի նշմարում:

Ստուգման արդյունքների նախատեսմամբ.

- ✔ Եթե նշմարում ստուգող հատուկ սարքը բացահայտում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Հոսքը կարգավորողն ընտրողին բացատրում է քվեարկության շենք մուտք գործելը մերժելու պատճառը, իսկ ընտրողի մասին տեղեկությունը հայտնում է հանձնաժողովի քարտուղարին՝ գործավարության մատյանում գրանցելու նպատակով:
- ✔ Եթե ընտրողը բավարարում է քվեարկությանը մասնակցելու համար սահմանված պահանջները, հոսքը կարգավորողը նրան ուղղորդում է, որ մոտենա ցանկացած գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի, որի սեղանի մոտ չկա երկուսից ավելի ընտրող:

II. Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողի ստուգման սարքի օգտագործմամբ տրամադրում է գրանցման և այնուհետև քվեաթերթիկի տրման ծառայություն:

Գրանցում իրականացնողը ընտրողի գրանցման գործընթացն իրականացնում է հետևյալ հաջորդականությամբ.

- ✔ ստուգող սարքում որոնում է ընտրողի տվյալները և հաստատում սարքի մեջ ներբեռնված ընտրողների ցուցակում առկա տվյալների հետ համապատասխանությունը,
- ✔ կատարում է ընտրողի նշմարում,
- ✔ ստուգման սարքից տպում է ընտրողի ստուգումը հաստատող կտրոն և կտրոնի վրա ընտրողին ստորագրել է տալիս,
- ✔ ստորագրված կտրոնը զետեղում է նրա դեմ սեղանի վրա դրված կապարակնքված անթափանց տուփի մեջ:

Ընտրողի գրանցման ընթացակարգի նկարագրությունը: Գրանցում իրականացնողն ընտրողից խնդրում է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Գրանցում իրականացնողն ստուգում է անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետը, Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային փաստաթղթի ներկայացման դեպքում, ստուգում է փաստաթղթի տրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

Եթե ընտրողը ներկայացնում է ժամկետանց անձը հաստատող փաստաթուղթ կամ ուժը կորցրած Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայական (ուժը կորցրած է մինչև 2011 թվականի հուլիսի 27-ը ներառյալ տրված ոչ էլեկտրոնային վկայականը), նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Գրանցում իրականացնողն ընտրողին բացատրում է քվեարկությանը մասնակցությունը մերժելու պատճառը և նշում է, որ նրան քվեարկությանը մասնակցելու իրավունք կտրվի, եթե նա ներկայացնի գործող անձը հաստատող փաստաթուղթ:

Փաստաթղթի վավերականության ժամկետը ստուգելուց հետո գրանցում իրականացնողն ստուգում է ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի համապատասխանությունն իրար:

Գրանցում իրականացնողն ընտրողի կողմից ներկայացված Վրաստանի քաղաքացու էլեկտրոնային անձը հաստատող վկայականը ներմուծում է ընտրողներին ստուգող սարքի ընթերցողի մեջ: Եթե ընտրողը ներկայացնում է Վրաստանի քաղաքացու անձնագիր կամ Վրաստանի քաղաքացու ոչ էլեկտրոնային անձը հաստատող վկայական, գրանցում իրականացնողը ընտրողի տվյալները ձեռքով է որոնում սարքի մեջ:

Ստուգող սարքի ընթերցողի միջոցով ընտրողի տվյալների որոնման նկարագարդում

Ստուգող սարքի մեջ ընտրողի տվյալների ձեռքով որոնման նկարագրադում



Ստուգման սարքը անձը հաստատող վկայականում եղած հաշվառման տվյալները համեմատում է սարքի մեջ ներբեռնված ընտրողների ցուցակում առկա տվյալների հետ և համապատասխանության դեպքում սարքը էկրանի վրա բացում է այս ընտրողի տվյալները:



Հաշվառման տվյալների համապատասխանության հաստատման դեպքում ցուցակի մեջ ընդգրկված ընտրողի մասին տեղեկությունները ստուգման սարքի էկրանին հայտնվելու նկարագրադում

Եթե ստուգող սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանությունը ստուգելիս հաստատվի, որ ներկայացված փաստաթղթում տվյալ ընտրողի գրանցման տվյալները (բացառությամբ լուսանկարի) համապատասխանում են ընտրողների ստուգման սարքում ներբեռնած ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն ընտրողների գրանցում իրականացնողն այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթի լուսանկարը միմյանց անհամապատասխան է համարում, նա դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որը ստորև տրված ընթացակարգն իրականացնելուց հետո ընտրողին տալիս է քվեարկությանը մասնակցելու իրավունք:

Եթե հանձնաժողովի նախագահը հաստատի անհամապատասխանությունը, հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում անում է գրառում, որում նշում է անհամապատասխանության փաստը, ընտրողի անունը, ազգանունը և ընտրողների ցուցակում նրա հերթական համարը: Գրառումը հաստատվում է ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով:

Եթե հանձնաժողովի նախագահը չի հաստատի տվյալ անհամապատասխանությունը, գրանցում իրականացնողն իրավունք ունի քվեարկության օրվա գործավարության մատյանում գրել իր առանձնահատուկ կարծիքը:

Տվյալ դեպքերում հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանին կցում է ընտրողի կողմից ներկայացված փաստաթղթի ֆոտոպատճենը, որը վավերացնում է ստորագրությամբ:

Ստուգման սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանության հաստատման դեպքում գրանցում իրականացնողը կատարում է նշմարում ընտրողի աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի եղունգի վրա (եթե նշված գործողությունը հնարավոր չէ կատարել, ապա՝ աջ ձեռքի մյուս մատների վրա, իսկ եթե դա ևս հնարավոր չէ, ապա՝ նույն կերպ ձախ ձեռքի վրա)։

Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և գրանցում իրականացնողը նրան բացատրում է, որ լքի քվեարկության շենքը

Ընտրողի նշմարման ընթացակարգը կատարելուց հետո, ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների քանակը հաշվառելու ձևաթղթի մեջ գրանցում իրականացնողները հաշվառում են այն ընտրողների թիվը, որոնք չեն կարող մասնակցել բոլոր տեսակի ընտրություններին.

- ✔ Եթե ընտրողը մասնակցում է միայն մունիցիպալիտետի քաղաքապետի կամ մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին, ընտրողների ստուգման սարքի էկրանին բացվում է համապատասխան նշում „პრոპ./მერი“ – համամ./քաղաքապետ։
- ✔ Եթե ընտրողը մասնակցում է միայն մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին, ընտրողների ստուգման սարքի էկրանին բացվում է համապատասխան նշում «პრոპ.» –համամ.։

(Ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների թվի գրանցման ձևաթղթի նմուշը տեսե՛ք տվյալ Ուղեցույց հրահանգի N2 Հավելվածում)

Ընտրողի նշմարման ընթացակարգը ավարտելուց հետո՝ գրանցում իրականացնողը ստուգման սարքից տպում է ընտրողի ստուգումը հավաստող կտրոն, որի վրա ստորագրում է ընտրողը։ Կտրոնը գրանցում իրականացնողը զետեղում է գրանցման սեղանի վրա դրված անթափանց կապարակնքված տուփի մեջ։

Ընտրողի ստուգումը հաստատող կտրոն տպելը

Կտրոնի վրա ընտրողի կողմից ստորագրելը

Կտրոնի զետեղումը անթափանց կապարակնքված տուփի մեջ

Եթե ստուգման սարքից չի տպվի ընտրողի ստուգումը հաստատող կտրոն կամ կտպվի տեխնիկական խոտանով, ընտրողը ստուգումը հաստատող կտրոնի փոխարեն ստորագրում է ընտրողի ստուգումը հաստատող ակտը, որի ձևաթուղթը լրացնում է հանձնաժողովի քարտուղարը: Գրանցում իրականացնողը ընտրողի կողմից ստորագրված ակտը զետեղում է ստուգումը հաստատող կտրոնների համար հատկացված տուփի մեջ: Հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանին կցում է տվյալ ընտրողի անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

Եթե ստուգման սարքում ընտրողի մասին տվյալներ չգտնվեն, հանձնաժողովն ունի հնարավորություն, պլանշետի օգտագործմամբ գտնել տեղեկություններ այն ընտրական տեղամասի մասին, որում գրանցված է ընտրողը:

Ընտրողների գրանցման գործընթացում ռիսկերի կանխարգելումը

{I} Եթե ստուգող սարքն արձանագրի, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողը ներառված է շարժական քվեատուփի ցուցակում, համապատասխան տեղեկությունը հայտնվում է սարքի էկրանին, միաժամանակ սարքը ձայնային ազդանշան է արձակում: Նման ընտրողին արգելվում է քվեարկել ընտրական տեղամասում: Գրանցում իրականացնողը ընտրողին բացատրում է, որ համաձայն պահանջի, ընտրողի համար նախատեսված է շարժական քվեատուփով քվեարկության ծառայություն:

Շարժական քվեատուփի ցուցակում ներառված ընտրողի մասին տեղեկությունը սարքի էկրանին հայտնվելու նկարագարդում

{II} Եթե ստուգող սարքը արձանագրի, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողն ընդգրկված է մեկ այլ տեղամասի համար հատկացված հատուկ ցուցակում, համապատասխան տեղեկությունը հայտնվում է սարքի էկրանին, միևնույն ժամանակ սարքը ձայնային ազդանշան է արձակում: Այսպիսի ընտրողին արգելվում է ընտրական տեղամասում մասնակցել քվեարկությանը: Գրանցում իրականացնողն ընտրողին բացատրում է, որ քվեարկությանը մասնակցելու համար նա պետք է գնա համապատասխան ընտրական տեղամաս: Գրանցում իրականացնողը տեղամասի համարը և հասցեն ընտրողին տրամադրում է ստուգող սարքի էկրանին հայտնված տեղեկության հիման վրա:



Այլ ընտրատեղամասի համար հատկացված հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողի մասին տեղեկությունը ստուգման սարքի էկրանին հայտնվելու նկարագարդում

{III} Եթե ստուգող սարքն արձանագրում է, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողն արդեն ստուգված է այս ընտրական տեղամասում, սարքի էկրանին հայտնվում է համապատասխան տեղեկությունը, միևնույն ժամանակ սարքը ձայնային ազդանշան է արձակում: Ընտրողին արգելվում է կրկին մասնակցել քվեարկությանը, հետևաբար, գրանցում իրականացնողը ընտրողին բացատրում է, որ պետք է լքի քվեարկության շենքը:



Երկակի ստուգման փորձի մասին տեղեկությունը ստուգման սարքի էկրանին հայտնվելու նկարագարդում

Ընտրողներին քվեաթերթիկներ տրամադրելու կարգը: Ընտրողի գրանցման ընթացակարգն ավարտելուց հետո գրանցում իրականացնողն ընտրողին փոխանցում է քվեաթերթիկ, որը բաժանված է երեք սյունակի.

- ✔ առաջին սյունակում ընդգրկված են կուսակցությունների անվանումները՝ ըստ սահմանված հերթականության,
- ✔ երկրորդ սյունակում ընդգրկված են ընտրություններին մասնակցող քաղաքապետի թեկնածուների հերթական համարները, անունը, ազգանունը և առաջադրող սուբյեկտը,
- ✔ երրորդ սյունակում ընդգրկված է մեծամասնական ընտրատարածքում ընտրվելու առաջադրված թեկնածուների հերթական համարը, անունը, ազգանունը և առաջադրող սուբյեկտը:

Քվեաթերթիկի հետ միասին գրանցում իրականացնողն ընտրողին է փոխանցում համապատասխան ձևի հատուկ շրջանակ-ծրար.

- ✔ Եթե ընտրողը մասնակցում է մունիցիպալիտետի քաղաքապետի, մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական և մեծամասնական ընտրակարգերով անցկացվելիք ընտրություններին, կտրվի շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի բոլոր երեք սյունակները:
- ✔ Եթե ընտրողը մասնակցում է միայն մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին, կտրվի շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի միայն երկու սյունակները:
- ✔ Եթե ընտրողը մասնակցում է միայն մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին, կտրվի շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի միայն մեկ սյունակը:

Գրանցում իրականացնողը ընտրողին բացատրում է քվեաթերթիկը լրացնելու կարգը և հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման կարգը:

Բացատրություն ընտրողի համար, որը մասնակցում է բոլոր երեք տեսակի ընտրություններին (մունիցիպալիտետի քաղաքապետի, մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական և մեծամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններ).

«Քվեարկելու համար քվեաթերթիկի բոլոր երեք սյունակներում ամբողջովին գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը (շրջանի ներքին տարածությունը)։
Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով»։

Բացատրություն ընտրողի համար, որը մասնակցում է միայն երկու տեսակի ընտրություններին (մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններ).

«Քվեարկելու համար քվեաթերթիկի առաջին և երկրորդ սյունակներում ամբողջովին գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը (շրջանի ներքին տարածությունը)։
Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով։
Հիշեցնում ենք, որ քվեաթերթիկի երրորդ սյունակում, որը ծածկված չէ շրջանակ-ծրարով, իրավունք չունենք արձանագրել ընտրություն, այսպիսի քվեաթերթիկը կհամարվի փսասված և ձեզ կտրամադրվի նոր քվեաթերթիկ»։

Բացատրություն ընտրողի համար, որը մասնակցում է միայն մեկ տեսակի ընտրություններին (մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններ).

«Քվեարկելու համար քվեաթերթիկի առաջին սյունակում ամբողջովին գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը (շրջանի ներքին տարածությունը)։
Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով։
Հիշեցնում ենք, որ քվեաթերթիկի երկրորդ և երրորդ սյունակներում, որը ծածկված չէ շրջանակ-ծրարով, իրավունք չունենք արձանագրել ընտրություն, այսպիսի քվեաթերթիկը կհամարվի փսասված և ձեզ կտրամադրվի նոր քվեաթերթիկ»։

Քվեաթերթիկը լրացնելու և հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման կարգը բացատրելուց հետո գրանցում իրականացնողը քվեաթերթիկն այնպես է տեղադրում հատուկ շրջանակ-ծրարի մեջ, որպեսզի այն ամբողջությամբ ծածկի համապատասխան սյունակում/սյունակներում տրված ընտրական սուբյեկտների ցանկը։ Գրանցում իրականացնողն ընտրողին ցուցում է տալիս, որ հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկի վերին մասում գունավորի փորձնական շրջանը։



Հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկի վերին մասում տեղակայված փորձնական շրջանը

Քվեաթերթիկի փորձնական շրջանը գունավորելուց հետո գրանցում իրականացնողն ընտրողին է հանձնում հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկը և բացատրում նրան, որ քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ պետք է ներմուծի այնպես, որ քվեաթերթիկի այն մասը, որի վրա գտնվում է փորձնական շրջանը, հայտնվի ներքևում: Դրանից հետո գրանցում իրականացնողն ընտրողին ուղղորդում է, որ տեղափոխվի գաղտնի քվեարկության խցիկ:

III. Քվեաթերթիկը և քվեարկության համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարը ստանալուց հետո ընտրողը մտնում է գաղտնի քվեարկության խցիկ:

Ընտրողը հատուկ նշիչի միջոցով լրացնում է քվեաթերթիկը և տեղադրում հատուկ շրջանակ-ծրարի մեջ:

> Գաղտնի քվեարկության խցիկում քվեաթերթիկը լրացնելիս արգելվում է այլ անձի ներկայությունը և լուսանկարահանումն ու տեսանկարահանումը:

Ընտրողը, որը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, իրավունք ունի գաղտնի քվեարկության խցիկ իրեն օգնելու հրավիրել ընտրատեղամասում գտնվող ցանկացած անձի՝ բացառությամբ.
ա) ընտրական հանձնաժողովի անդամի,
բ) թեկնածուի,
գ) ընտրական սուբյեկտի ներկայացուցչի,
դ) դիտորդի,
ե) մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի:

Եթե ընտրողը փսասել է քվեաթերթիկը կամ հատուկ շրջանակ-ծրարը, նա այդ մասին պետք է տեղեկացնի հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրանցում իրականացնողը պարտավոր է ընտրողի փսասված քվեաթերթիկը/հատուկ շրջանակ-ծրարը փոխարինել նորով:

> Հանձնաժողովի նախագահը ընտրողի ներկայությամբ այնպես է ծալում փսասված քվեաթերթիկը, որ անհնար լինի տեսնել ընտրական սուբյեկտներին, ծալված քվեաթերթիկը ամրացնում է մետաղյա սեղմակով, կտրում անկյունը, վրան գրում է «Վնասված է» և ստորագրում է այն: Հանձնաժողովի նախագահը փսասված քվեաթերթիկը պահպանում է առանձին:

IV. Ընտրողը հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկով գնում է հիմնական քվեատուփի մոտ:

Քվեատուփը և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող հանձնաժողովի անդամն ընտրողին բացատրում է քվեաթերթիկը սարքի մեջ ներմուծելու կարգը.

«Քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով այնպես ներմուծե՛ք սարքի մեջ, որ քվեաթերթիկի այն մասը, որի վրա տեղադրված է փորձնական շրջանը, հայտնվի ներքևում:
Շրջանակ-ծրարը թեթև պահե՛ք, որպեսզի սարքը հեշտությամբ ընդունի քվեաթերթիկը:
Սպասե՛ք, մինչև սարքի էկրանին հայտնվի «Ձեր ձայնը ստացվել է» հաղորդագրությունը և միայն դրանից հետո դո՛ւրս եկեք քվեարկության շենքից»:

Քվեատուփը և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկողը պարտավոր է այն ընտրողից, որի ձեռքին տարբերվող տեսակի հատուկ շրջանակ-ծրար է, պահանջել, որ ցույց տա, թե արդյոք չի արված ընտրություն քվեաթերթիկի բաց սյունակում/սյունակներում այնպես, որպեսզի չխախտվի շրջանակ-ծրարով ծածկված սյունակում ընտրողի կողմից կատարված ընտրության գաղտնիությունը:

Եթե քվեաթերթիկի բաց սյունակը/սյունակները գունավորված/նշված լինեն, քվեաթերթիկը կհամարվի փսասված: Վերոնշյալ դեպքը կտեղեկացվի հանձնաժողովի նախագահին, որի հանձնարարությամբ գրանցում իրականացնողը պարտավոր է փոխել ընտրողի փսասված քվեաթերթիկը նորով:

Հանձնաժողովի նախագահը, ընտրողի ներկայությամբ, փսասված քվեաթերթիկը ծալում է այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրական սուբյեկտներին, ծալված քվեաթերթիկն ամրացնում է մետաղական կապիչով, կտրում անկյունը, վրան գրում է «Վնասված է» և ստորագրում: Հանձնաժողովի նախագահը փսասված քվեաթերթիկը պահում է առանձին:

Ընտրողը քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով ներմուծում է հիմական քվեատուփի վրա տեղադրված սարքի մեջ: Եթե ընտրողը չի կարողանում հատուկ շրջանակ-ծրարի միջոցով քվեաթերթիկը ներմուծել սարքի մեջ, նրան կարող է օգնել քվեատուփը և ձայների հաշվման էլեկտրոնային հատուկ սարքը վերահսկող հանձնաժողովի անդամը:

Ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի մեջ քվեաթերթիկը ներմուծելը



Քվեաթերթիկը հիմական քվեատուփի մեջ ներմուծելը հաստատող հաղորդագրություն

Եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը չի ընդունում և վերադարձնում է քվեաթերթիկը, հնարավոր է այն կրկին ներմուծել ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի մեջ: Քվեաթերթիկը նորից վերադարձնելու դեպքում հանձնաժողովի նախագահը, ընտրողի ներկայությամբ, սահմանված կարգով փսասում է քվեաթերթիկը: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրանցում իրականացնողը պարտավոր է փսասված քվեաթերթիկը փոխարինել նորով:

Քվեաթերթիկը հիմական քվեատուփի մեջ զետեղելուց հետո ընտրողը հատուկ շրջանակ-ծրարը դնում է դրա համար հատկացված սեղանի վրա և լքում ընտրատեղամասը: Հատուկ շրջանակ-ծրարները փոխանցվում են ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներին:

Շարժական քվեատուփով քվեարկության գործընթացը

Շարժական քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգն սկսվում է քվեարկության օրվա ժամը 09:00-ից և ավարտվում ժամը 19:00-ին: Շարժական քվեատուփով քվեարկության ընթացակարգի ավարտից հետո անհապաղ կապարակնքվում է քվեատուփի մեջ քվեաթերթիկները գցելու ճեղքը: Շարժական քվեատուփը ընտրական տեղամաս պետք է վերադարձվի ոչ ուշ, քան ժամը 20-ին:

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք, ըստ ցանկության, իրավունք ունեն դիտարկել շարժական քվեատուփի միջոցով ձայն տալու ընթացակարգը: Շարժական քվեատուփի միջոցով քվեարկելիս, ավտոմեքենայից օգտվելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ավտոմեքենայի մեջ տեղ տրամադրել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ որոշված 2 վերահսկողի համար:

Հանձնաժողովի նախագահը շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին (հատուկ խմբի անդամներին, այսպիսինի առկայության դեպքում) փոխանցում է..

- կապարակնքված շարժական քվեատուփը,
- շարժական քվեատուփի ցուցակի հանձնաժողովի համար հատկացված տարբերակը,
- անհրաժեշտ քանակությամբ քվեաթերթիկներ,
- քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչներ,
- պահանջվող քանակի հատուկ շրջանակ-ծրարներ (եթե ընտրողների շարժական քվեատուփի ցուցակ է տեղափոխված ընտրող, որը չի կարող մասնակցել բոլոր տեսակի ընտրություններին, նման դեպքում շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին/հատուկ խմբի անդամներին լրացուցիչ փոխանցվում են տարբերվող տեսակի հատուկ շրջանակ-ծրարներ),
- մետաղական սեղմակներ (ընտրողի կողմից քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղելուց հետո շրջանակ-ծրարը ամրացվում է մետաղյա սեղմակով և տեղադրվում շարժական քվեատուփի մեջ),
- մետաղյա կապիչ (օգտագործվում է քվեաթերթիկը վնասելու դեպքում քվեարկության գաղտնիությունն ապահովելու համար),
- նշմարումը ստուգող ուլտրամանուշակագույն լապտեր,
- նշմարման հեղուկ,
- գրիչ (շարժական քվեատուփի ցուցակում ընտրողի ստորագրությունը արձանագրելու նպատակով),
- շարժական քվեատուփի ճեղքի կապարակնիք:

Հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցում է շարժական քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամներին/հատուկ խմբի անդամներին փոխանցված քվեաթերթիկների և շրջանակ-ծրարների քանակը, ինչպես նաև շարժական քվեատուփը ընտրատեղամասից տանելու ժամանակը:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

გადასატანი საარჩევნო ყუთის თანმხლები კომისიისა და სპეცჯგუფის წევრთათვის გადაცემული საარჩევნო დოკუმენტაციის აღრიცხვა

	დასახელება	რაოდენობა		
		I ყუთი	II ყუთი	III ყუთი
1	ამომრჩეველთა რაოდენობა გადასატანი საარჩევნო ყუთის სიაში	35	15	
2	გადაცემული ბიულეტენების რაოდენობა	34	14	
3	გადაცემული სპეციალური ჩარჩო-კონვერტების რაოდენობა	35	15	
4	გამოუყენებელი ბიულეტენების რაოდენობა			
5	*გადასატანი საარჩევნო ყუთის სიაში ხელმოწერების რაოდენობა*			
6	უბნიდან წაღების დრო	09 სთ. 30 წთ.	09 სთ. 30 წთ.	___ სთ. ___ წთ.
	უბანში დაბრუნების დრო	___ სთ. ___ წთ.	___ სთ. ___ წთ.	___ სთ. ___ წთ.

Շարժական քվեատուփով քվեարկության ընթացակարգը իրականացվում է սահմանված հաջորդականության պահպանմամբ:

I. Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ստուգում է ընտրողի քվեարկությանը մասնակցելու հիմքերը:

Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը.

- ✔ խնդրում է ընտրողին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ (Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական, Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր),
- ✔ ստուգում է անձը հաստատող փաստաթղթի գործողության ժամկետը,
- ✔ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայականի ներկայացման դեպքում, ստուգում է փաստաթղթի տրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը,
- ✔ ուլտրամանուշակագույն լապտերով ստուգում է, թե ընտրողը ձեռքի վրա ունի արդյոք նշմարում:

Ստուգման արդյունքների նախատեսմամբ.

- ✔ Եթե նշմարում ստուգող հատուկ սարքը բացահայտում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ընտրողին բացատրում է քվեարկությանը մասնակցելը մերժելու հիմքը: Հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը փաստի հետ կապված պետք է բացատրագիր գրի (շարժական քվեատուփի ցուցակում ընտրողի հերթական համարի, անվան և ազգանվան մատնանշմամբ): Փաստաթուղթը ստորագրում են շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները՝ ուղեկցող անձանց հետ (այսպիսինի առկայության դեպքում):
- ✔ Եթե ընտրողը ներկայացնում է ժամկետանց անձը հաստատող փաստաթուղթ կամ ուժը կորցրած Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայական (ուժը կորցրած է մինչև 2011 թվականի հուլիսի 27-ը ներառյալ տրված ոչ էլեկտրոնային վկայականը), նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ընտրողին բացատրում է քվեարկությանը մասնակցելը մերժելու հիմքը և նշում է, որ նրան քվեարկությանը մասնակցելու իրավունք կտրվի, եթե նա ներկայացնի գործող անձը հաստատող փաստաթուղթ:
- ✔ Եթե ընտրողը բավարարում է քվեարկությանը մասնակցելու համար սահմանված պահանջները, շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը շարունակում է ընտրողի գրանցման և քվեաթերթիկների տրամադրման ընթացակարգը:

II. Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ընտրողին տրամադրում է գրանցման և այնուհետև քվեաթերթիկի տրման ծառայություն:

Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ստուգում է ընտրողի կողմից ներկայացված փաստաթղթում ներառված ընտրողի հաշվառման տվյալների և շարժական քվեատուփի ցուցակում առկա տվյալների համապատասխանությունը:

Ցուցակում առկա տվյալների համապատասխանությունը հաստատվելու դեպքում շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը կատարում է նշմարում ընտրողի աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի եղունգի վրա (եթե նշված գործողությունը հնարավոր չէ կատարել, ապա՝ աջ ձեռքի մյուս մատների վրա, իսկ եթե դա ևս հնարավոր չէ, ապա՝ նույն կերպ ձախ ձեռքի վրա):

Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը նրան բացատրում է քվեարկությանը մասնակցելը մերժելու հիմքը:

Նշմարում չի կիրառվում քրեակատարողական հիմնարկներում, հիվանդանոցներում և ստացիոնար բուժման այլ հաստատություններում (հիվանդների նկատմամբ):

Նշմարման ընթացակարգն իրականացնելուց հետո շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ստորագրում է շարժական քվեատուփի ցուցակի համապատասխան սյունակում և ընտրողին ցուցում տալիս, որ ստորագրությամբ հաստատի քվեաթերթիկի ստացումը:

Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը շարժական քվեատուփի ցուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողը, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ստորագրի նույն սյունակում: Փաստի հետ կապված հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը պետք է բացատրագիր գրի (շարժական քվեատուփի ցուցակում ընտրողի հերթական համարի, անվան և ազգանվան մատնանշմամբ): Փաստաթուղթը ստորագրում են շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները՝ ուղեկցող անձանց հետ (այսպիսինի առկայության դեպքում):

Ընտրողների գրանցման ընթացակարգն ավարտելուց հետո շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ընտրողին կփոխանցի քվեաթերթիկ, որը բաժանված է երեք սյունակի.

- ✔ առաջին սյունակում ընդգրկված են կուսակցությունների անվանումները՝ ըստ սահմանված հերթականության,
- ✔ երկրորդ սյունակում ընդգրկված են ընտրություններին մասնակցող քաղաքապետի թեկնածուների հերթական համարը, անունը, ազգանունը և առաջադրող սուբյեկտը,
- ✔ երրորդ սյունակում ընդգրկված է մեծամասնական ընտրատարածքում ընտրվելու առաջադրված թեկնածուների հերթական համարը, անունը, ազգանունը և առաջադրող սուբյեկտը:

Քվեաթերթիկի հետ միասին, շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ընտրողին փոխանցում է համապատասխան ձևի հատուկ շրջանակ-ծրար.

- ✔ Եթե ընտրողը մասնակցում է մունիցիպալիտետի քաղաքապետի, մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական և մեծամասնական ընտրակարգերով անցկացվելիք ընտրություններին, կտրվի շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի բոլոր երեք սյունակները:
- ✔ Եթե ընտրողը մասնակցում է միայն մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգերով անցկացվելիք ընտրություններին, կտրվի շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի միայն երկու սյունակները:
- ✔ Եթե ընտրողը մասնակցում է միայն մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգերով անցկացվելիք ընտրություններին, կտրվի շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի միայն մեկ սյունակը:

Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի/հատուկ խմբի անդամը ընտրողին կբացատրի քվեաթերթիկը լրացնելու կարգը և հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման կարգը:

Բացատրություն ընտրողի համար, որը մասնակցում է բոլոր երեք տեսակի ընտրություններին (մունիցիպալիտետի քաղաքապետի, մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական և մեծամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններ).

«Քվեարկելու համար քվեաթերթիկի բոլոր երեք սյունակներում ամբողջովին գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը (շրջանի ներքին տարածությունը):
Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով»:

Բացատրություն ընտրողի համար, որը մասնակցում է միայն երկու տեսակի ընտրություններին (մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններ).

«Քվեարկելու համար քվեաթերթիկի առաջին և երկրորդ սյունակներում ամբողջովին գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը (շրջանի ներքին տարածությունը):
Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով:
Հիշեցնում ենք, որ քվեաթերթիկի սյունակում, որը ծածկված չէ շրջանակ-ծրարով, իրավունք չունենք արձանագրել ընտրություն, այսպիսի քվեաթերթիկը կհամարվի փսասված և ձեզ կտրամադրվի նոր քվեաթերթիկ»:

Բացատրություն ընտրողի համար, որը մասնակցում է միայն մեկ տեսակի ընտրություններին (մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններ).

«Քվեարկելու համար քվեաթերթիկի առաջին սյունակում ամբողջովին գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը (շրջանի ներքին տարածությունը):
Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով:
Հիշեցնում ենք, որ քվեաթերթիկի սյունակներում, որոնք ծածկված չեն շրջանակ-ծրարով, իրավունք չունենք արձանագրել ընտրություն, այսպիսի քվեաթերթիկը կհամարվի փսասված և ձեզ կտրամադրվի նոր քվեաթերթիկ»:

Քվեաթերթիկը լրացնելու և հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման կարգը բացատրելուց հետո շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը քվեաթերթիկն այնպես է զետեղում հատուկ շրջանակ-ծրարի մեջ, որպեսզի այն ամբողջությամբ ծածկի համապատասխան սյունակում/սյունակներում տրված ընտրական սուբյեկտների ցանկը: Ընտրողին ցուցում է տալիս, որ հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկի վերին մասում գունավորի փորձնական շրջանը:

Դրանից հետո շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ընտրողին է հանձնում հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկը և ուղղորդում, որ գաղտնիության սկզբունքի պահպանմամբ լրացնի քվեաթերթիկը:

III. Քվեաթերթիկը և քվեարկության համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարը ստանալուց հետո ընտրողը գաղտնիության սկզբունքի պահպանմամբ լրացնում է քվեաթերթիկը:

Ընտրողը լրացված քվեաթերթիկը տեղադրում է հատուկ շրջանակ-ծրարի մեջ:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, նա իրավունք ունի, իրեն օգնելու համար հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի և դիտորդի:

Եթե ընտրողը փսասել է քվեաթերթիկը կամ հատուկ շրջանակ-ծրարը, հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը պարտավոր է փոխել ընտրողի փսասված քվեաթերթիկը/հատուկ շրջանակ-ծրարը նորով:

Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ընտրողի ներկայությամբ այնպես է ծալում փսասված քվեաթերթիկը, որ անհնար լինի տեսնել ընտրական սուբյեկտներին, ծալված քվեաթերթիկը ամրացնում է մետաղյա կապիչով, կտրում անկյունը, վրան գրում է «փսասված է» և ստորագրում է այն: Վնասված քվեաթերթիկը փոխանցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին շարժական քվեատուփը ընտրական տեղամաս վերադարձնելուն պես:

IV. Ընտրողը հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկը տեղադրում է շարժական քվեատուփի մեջ:

Քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարից անջատվելու ռիսկի կանխարգելման նպատակով շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի/հատուկ խմբի անդամը պարտավոր է ապահովել հատուկ շրջանակ-ծրարների վրա մետաղյա սեղմակների ամրացում նրանից հետո, երբ ընտրողը հատուկ շրջանակ-ծրարի մեջ կզետեղի լրացված քվեաթերթիկը (նման կերպ հատուկ շրջանակ-ծրարը տեղադրվում է շարժական քվեատուփի մեջ):



Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի/հատուկ խմբի անդամը պարտավոր է այն ընտրողից, որի ձեռքին տարբերվող տեսակի հատուկ շրջանակ-ծրար է, պահանջել, որ ցույց տա, թե արդյոք չի արված ընտրություն քվեաթերթիկի բաց սյունակում/սյունակներում այնպես, որպեսզի չխախտվի շրջանակ-ծրարով ծածկված սյունակում ընտրողի կողմից կատարված ընտրության գաղտնիությունը:

Եթե քվեաթերթիկի բաց սյունակը/սյունակները գունավորված/նշված լինեն, քվեաթերթիկը կհամարվի փսասված: Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի/հատուկ խմբի անդամը պարտավոր է փոխարինել ընտրողի փսասված քվեաթերթիկը նորով:

Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի/հատուկ խմբի անդամը, ընտրողի ներկայությամբ, փսասված քվեաթերթիկը ծալում է այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրական սուբյեկտներին, ծալված քվեաթերթիկն ամրացնում է մետաղական կապիչով, կտրում անկյունը, վրան գրում է «Վնասված է» և ստորագրում: Հանձնաժողովի նախագահը փսասված քվեաթերթիկը պահում է առանձին:

Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը բացում է շարժական քվեատուփի ճեղքը և ընտրողին ցուցում տալիս քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկը տեղադրել նրա մեջ:

Եթե խախտվել է շարժական քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը, շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամերն անհապաղ պետք է տեղեկացնեն հանձնաժողովի նախագահին, կազմեն բացատրագիր՝ պատճառի նշմամբ և ստորագրեն ուղեկցող անձանց հետ մեկտեղ:

Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամերը/հատուկ խմբի անդամերը քվեարկության շենք վերադառնալուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին պետք է փոխանցեն չօգտագործված /փսասված քվեաթերթիկները, քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարները և շարժական քվեատուփի ցուցակը: Հանձնաժողովի նախագահը կտրում է չօգտագործված /փսասված քվեաթերթիկի անկյունը, վրան գրում է «Վնասված է» և ստորագրությամբ հաստատում:

Հանձնաժողովի քարտուղարը ստուգում է շարժական քվեատուփի ցուցակում առկա ստորագրությունների, չօգտագործված կամ/և փսասված քվեաթերթիկների թվի ճշտությունը: Անճշտության հայտնաբերման դեպքում շարժական քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամերը/հատուկ խմբի անդամերը պետք է բացատրագիր գրեն՝ պատճառի մատնանշմամբ: Բացատրագրում արտացոլված տվյալները նախատեսվում են համապատասխան քվեարկությանը/ընտրություններին մասնակից ընտրողների քանակը որոշելու և քվեարկության արդյունքների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու նպատակների համար:

Հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցում է ընտրողների ստորագրությունների թիվը շարժական քվեատուփի ցուցակում, չօգտագործված քվեաթերթիկների թիվը, ինչպես նաև ընտրական տեղամաս շարժական քվեատուփի վերադարձման ժամանակը:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

გადასატანი საარჩევნო ყუთის თანმხლები კომისიისა და სპეცჯგუფის წევრთათვის გადაცემული საარჩევნო დოკუმენტაციის აღრიცხვა

	დასახელება	რაოდენობა		
		I ყუთი	II ყუთი	III ყუთი
1	ამომრჩეველთა რაოდენობა გადასატანი საარჩევნო ყუთის სიაში	35	15	
2	გადაცემული ბიულეტენების რაოდენობა	34	14	
3	გადაცემული სპეციალური ჩარჩო-კონვერტების რაოდენობა	35	15	
4	გამოუყენებელი ბიულეტენების რაოდენობა	2	2	
5	*გადასატანი საარჩევნო ყუთის სიაში ხელმოწერების რაოდენობა*	35	15	
6	უბნიდან წაღების დრო	09 სთ. 30 წთ.	09 სთ. 30 წთ.	___ სთ. ___ წთ.
	უბანში დაბრუნების დრო	14 სთ. 45 წთ.	16 სთ. 40 წთ.	___ სთ. ___ წთ.

Ֆիզիկական վիճակի պատճառով ընտրողի կողմից քվեարկության ընթացակարգը

Ընտրողը, որն իր ֆիզիկական վիճակի, մասնավորապես՝ վերին վերջույթների բացակայության պատճառով, չի կարողանում ինքնուրույն կատարել քվեարկության ընթացակարգերը, քվեարկությանը մասնակցում է՝ հետևյալ ընթացակարգերի նախատեսմամբ.

- Ընտրողը չի անցնում նշմարումը ստուգելու և նշմարման ընթացակարգեր:
- Մինչ ընտրողին քվեաթերթիկ տրամադրելը ընտրողների ստուգումը հավաստող կտրոնի վրա/ շարժական քվեատուփի ցուցակում ընտրողի ստորագրության տեղում կատարվում է «Ֆիզիկական վիճակ» նշումը, որը հաստատվում է ընտրողների գրանցում իրականացնողի/ շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամի/հատուկ խմբի անդամի ստորագրությամբ:
- Քվեաթերթիկը լրացնելիս ընտրողն իրավունք ունի իրեն օգնելու համար հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի և դիտորդի:
- Ընտրողի փոխարեն նրա ներկայությամբ լրացված քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի մեջ տեղադրում է, այնուհետև ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի/շարժական քվեատուփի մեջ տեղադրում է նրա կողմից ընտրված անձը, որն օգնել էր լրացնել քվեաթերթիկը:

Ընտրողների անձնական տվյալների պաշտպանության ապահովումը

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց արգելվում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը, ընտրողի ստուգման սարքի վրա բացված ընտրողի տվյալները, ընտրողների ստուգման սարքից տպված ստուգումը հաստատող կտրոնը և ընտրողի կողմից քվեաթերթիկում արված ընտրությունը լուսանկարահանել կամ այլ կերպ մշակել (այդ թվում, հավաքել, ձայնագրել, պահել), օգտագործել, երևակել, փոխանցել և/կամ տարածել: Նշված արգելքը տարածվում է նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրողի անձնական տվյալների հետ կապված գործողությունների իրականացումն անհրաժեշտ է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով և ԿԸՀ իրավական ակտերով նախատեսված տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորություններն իրականացնելու համար:

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների հաշվառումը

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների թիվը (ընտրողների ակտիվությունը) որոշելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ցուցումով գրանցում իրականացնողներից որևէ մեկը ընտրողների ստուգման սարքից ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին տպում է ընտրողների մասնակցությունն արտացոլող կտրոն/հաշվետվություն:

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվաքանակը ցույց տվող վերջնական կտրոնը/հաշվետվությունը տպվում է քվեարկության գործընթացի ավարտից հետո:

Քվեարկության գործընթացն ավարտվում է ժամը 20:00-ին, բացառությամբ այն դեպքի, երբ այդ պահի դրությամբ քվեարկությանը մասնակցելու համար հերթում կանգնած են ընտրողներ: Հենց որ հերթում կանգնած վերջին հաշվառված ընտրողը քվեարկում է, քվեարկությունը հայտարարվում է ավարտված, և գրանցում իրականացնողներից որևէ մեկը հանձնաժողովի նախագահի ցուցումով ստուգման սարքից տպում է քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվն արտացոլող վերջնական կտրոնը/հաշվետվությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը ընտրողների թիվը ցույց տվող կտրոնների/հաշվետվությունների տպման գործընթացին զուգահեռ, էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթում կատարում է համապատասխան նշումներ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը համապատասխան ժամանակահատվածների համար (ժամը 10:00, 12:00, 15:00, 17:00, 20:00) տպված կտրոնում/հաշվետվության մեջ նշված քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թվին գումարում է շարժական քվեատուփի ցուցակում (առկայության դեպքում) գրանցված ընտրողների ստորագրությունների գումարը (այս տվյալներով որոշվում է սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը): Հանձնաժողովի նախագահը նշված ժամերին պլանշետով ապահովում է նշված տվյալների փոխանցումը ԿԸՀ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը ժամը 12:00-ի և 17:00-ի դրությամբ, ինչպես նաև քվեարկության գործընթացի ավարտից հետո որոշված ընտրողների վերջնական թիվը նշում է քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում:

Հանձնաժողովի քարտուղարը քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը գործավարության մատյանում մուտքագրելիս պետք է նախատեսի հետևյալը.

Քաղաքապետի ընտրություններին մասնակցող ընտրողների թիվը որոշելու նպատակով սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար սահմանված քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվից պետք է հանվի գրանցում իրականացնողների կողմից հաշվառված այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք ընտրություններին մասնակցել են հատուկ ցուցակով և իրավունք չունեին մասնակցել քաղաքապետի ընտրություններին: Հատուկ ցուցակով ընտրություններին մասնակցած այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք իրավունք չունեին մասնակցել քաղաքապետի

ընտրություններին և գրանցում իրականացնողները հաշվառում էին հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը հաշվառելու ձևաթղթում, մուտքագրվում են գործավարության մատյանում:

Սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը որոշելու նպատակով սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար սահմանված քվեարկության մասնակցած ընտրողների ընդհանուր թվից պետք է հանվի գրանցում իրականացնողների կողմից հաշվառված այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք ընտրություններին մասնակցել են հատուկ ցուցակով և իրավունք չունեին մասնակցել մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին: Հատուկ ցուցակով ընտրություններին մասնակցած այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք իրավունք չունեին մասնակցել մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին և գրանցում իրականացնողները հաշվառում էին հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը հաշվառելու ձևաթղթում, մուտքագրվում են գործավարության մատյանում:

Սխեմա N4. Ընտրողների թիվը (ակտիվությունը) արտացոլող կտրոնը/հաշվետվությունը տպելու գործընթացի նկարագրությունը



{I}

Ընտրողների ակտիվության տպման մենյու անցնելու համար գրանցում իրականացնողը սեղմում է էկրանի վերին աջ անկյունում գտնվող մենյուն

{II}

Գրանցում իրականացնողը մենյուի մեջ սեղմում է «Ընտրողների ակտիվություն» կոճակը:

ამომრჩეველთა აქტივობა

{III}

Գրանցում իրականացնողը սեղմում է «Ակտիվության կտրոնի տպում» և արդյունքում տպվում է ընտրողների ակտիվությունն արտացոլող կտրոն:

Սխեմա N5. Ընտրողների թվի (ակտիվության) մասին տեղեկությունը ԿՀՀ ուղարկելու գործընթացի նկարագրում

{I}

Հանձնաժողովի նախագահը պլանշետի մեջ ներբեռնած ծրագիրն ակտիվացնելուց հետո մուտք է գործում ծրագրի մենյու:



{II}

Ծրագրի մենյուի մեջ հանձնաժողովի նախագահն ընտրում է «Ակտիվություն» կոճակը:

{III}

Հանձնաժողովի նախագահն ընտրում է «Ակտիվ» դաշտը:



{IV}

Հանձնաժողովի նախագահը սյունակում մուտքագրում է ընտրողների թիվը և սեղմելով «Ուղարկել» կոճակը տվյալներն ուղարկվում են:

{V}

Ուղարկված տվյալն արտացոլվում է համապատասխան ժամանակահատվածի ակտիվության սյունակում:

Քվեարկության օրը քվեարկության շենքում և նրա հարակից տարածքում կարգուկանոնի պահպանումը

Քվեարկության գործընթացին ընտրողների առանց խոչընդոտ մասնակցությանը նպաստելու և քվեարկության գաղտնիությունը ապահովելու նպատակով քվեարկության օրը քվեարկության շենքում կարգուկանոնը պահպանելու համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

Հանձնաժողովի նախագահի կողմից կայացված որոշումների կատարումը պարտադիր է ընտրական հանձնաժողովի անդամների, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց և ընտրողի համար:

Հանձնաժողովի աշխատանքին խանգարելու և կարգուկանոնը խախտելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավազոր է կայացնել որոշում հանձնաժողովի տեղակայման շենքից կարգուկանոնը խախտողին վտարելու մասին: Կարգը խախտողի վտարման դեպքում կազմվում է համապատասխան ակտ, որն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները: Եթե խախտող անձը կամավոր չի կատարում տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումը՝ հանձնաժողովի տեղակայման շենքից խախտողի վտարման մասին, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով կարող են կանչվել ոստիկանության աշխատակիցներ: Ոստիկանությունը պարտավոր է անհապաղ ի կատար ածել անձի վտարման մասին որոշումը: Փաստի հետ կապված համապատասխան գրառում է կատարվում գործավարության մատյանում:

> Քվեարկության շենք զինված անձանց մուտքն անթույլատրելի է:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով կարող են կանչվել ոստիկանության աշխատակիցներ, եթե քվեարկության շենքում և նրա հարակից տարածքում վտանգ է ստեղծվում հասարակական կարգին, քվեարկության անցկացմանը կամ ընտրական փաստաթղթերի անվտանգ փոխադրմանը: Հասարակական կարգի խախտումը կանխելուն պես և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ ոստիկանության աշխատակիցները լքում են քվեարկության շենքը և դրա հարակից տարածքը:

> Բացառիկ դեպքում, քվեարկության շենքի հարող տարածքում, բայց ոչ կոնկրետ քվեարկության շենքում, ոստիկանության աշխատակիցները կարող են գտնվել նաև առանց տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջի և համաձայնության, եթե դա բացառապես անհրաժեշտ է հասարակական կարգի խախտումը խափանելու կամ հասարակական կարգը պահպանելու համար: Նման անհրաժեշտությունը վերացնելուն պես, ոստիկանության աշխատակիցները պետք է լքեն քվեարկության շենքի հարակից տարածքը:

Քվեարկության գործընթացի ժամանակավոր ընդհատումը

Քվեարկության ժամանակ արգելվում է փակել քվեարկության շենքը, ընդհատել կամ դադարեցնել քվեարկությունը: Եթե որևէ հանգամանք խոչընդոտում է քվեարկության գործընթացին, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և սպասել համապատասխան ցուցումների:

Հարցեր գիտելիքների ինքնագնահատման համար

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ո՞ր անդամն է ստուգում ընտրողների նշմարումը:
2. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ո՞ր անդամն է կատարում ընտրողների նշմարում:
3. Եթե ընտրողը ներկայացրել է Վրաստանի քաղաքացու ոչ էլեկտրոնային անձը հաստատող վկայական, ո՞ր դեպքերում կմերժվի նրա մուտքը ընտրատեղամաս և մասնակցությունը քվեարկությանը:
4. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե ստուգման սարքից չի տպվել ստուգումը հաստատող կտրոն, կամ տպվել է տեխնիկական խոտանով:
5. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, երբ ստուգող սարքն արձանագրում է, որ քվեարկության շենքում ներկայացած ընտրողը ընդգրկված է.
   - ✔ շարժական քվեատուփի ցուցակում,
   - ✔ մեկ այլ ընտրատարածքի հատուկ ցուցակում:
6. Ի՞նչ կարգով է գրանցում իրականացնողը հաշվառում այն ընտրողներին, որոնք քվեարկում են.
   - ✔ միայն քաղաքապետի և մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին,
   - ✔ միայն մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին:
7. Քվեաթերթիկը լրացնելու մասին ի՞նչ հրահանգ է տալիս գրանցում իրականացնողն ընտրողին:
8. Ինչպիսի՞ շրջանակ-ծրար պետք է տրամադրի գրանցում իրականացնողն այն դեպքում, եթե ընտրողը մասնակցում է.
   - ✔ միայն քաղաքապետի և մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին,
   - ✔ միայն մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին:
9. Եթե ընտրողը չի կարողանում ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, ո՞ւմ իրավունք ունի գաղտնի քվեարկության խցիկ հրավիրել իրեն օգնելու:
10. Ի՞նչ ընթացակարգերի նախատեսմամբ է քվեարկությանը մասնակցում այն ընտրողը, ով ֆիզիկական վիճակի, մասնավորապես՝ վերին վերջույթների բացակայության պատճառով չի կարողանում ինքնուրույն կատարել քվեարկության ընթացակարգերը:
11. Ի՞նչ ծառայություն է առաջարկում տեղամասային ընտրական հանձնաժողովը տեսողության խնդիրներ ունեցող և կույր ընտրողներին:
12. Եթե ընտրողի քվեաթերթիկը վնասվել է, ի՞նչ ընթացակարգի պահպանմամբ է նրան տրամադրվում նոր քվեաթերթիկը:
13. Ընտրողի ընտրության գաղտնիության պահպանման նպատակով, ընտրողին ի՞նչ հրահանգ է տալիս ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող հանձնաժողովի անդամը:
14. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե քվեաթերթիկը և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող հանձնաժողովի անդամը պարզի, որ ընտրողը, որին փոխանցվել էր տարբերվող շրջանակ-ծրար, քվեաթերթիկի բաց այունակում է արել ընտրություն:
15. Ընտրողի անձնական տվյալները պաշտպանելու նպատակով ի՞նչ է արգելվում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին և տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց:
16. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե ձայների հաշվման էլեկտրոնային հատուկ սարքը վերադարձնում է քվեաթերթիկը:
17. Ե՞րբ է սկսվում և երբ է ավարտվում շարժական քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը:
18. Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին ավտոմեքենայով տեղափոխելիս

քանի՞ վերահսկողի համար պետք է տեղ լինի առանձնացված ավտոմեքենայում, և ինչպե՞ս է որոշվում այդ վերահսկողների ով լինելը:

19. Արդյոք շարժական քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը ներառո՞ւմ է ընտրողի նշմարման ընթացակարգ:
20. Ընտրողի կողմից քվեաթերթիկը լրացնելուց հետո ի՞նչ ձևով է քվեաթերթիկը տեղադրվում շարժական քվեատուփի մեջ:
21. Ի՞նչ հաճախականությամբ է որոշվում քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների թիվը և ի՞նչ կարգով:
22. Ո՞ր դեպքերում է տեղամասային ընտրական հանձնաժողովը որոշում կայացնում քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձին վտարելու մասին, և ի՞նչ ընթացակարգ է նախատեսված տվյալ միջոցառման իրականացման համար:
23. Ո՞ր դեպքերում է թույլատրելի քվեարկության շենք ոստիկանության աշխատակիցների մուտքը:

05
Ինչպես է ընթանում տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները պատասխանատու են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ.

- Կազմակերպված և թափանցիկ իրականացնելու քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը:
- Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց համար ստեղծելու քվեարկության ամփոփման գործընթացի անարգել դիտարկման պայմաններ:
- Օպերատիվ կերպով ապահովելու էլեկտրոնային սարքերով հաշվված քվեարկության նախնական արդյունքների տրամադրումը վերադաս ընտրական հանձնաժողովին և ընտրատեղամասում տեղեկատվության հրապարակայնությունը:
- Բարեխղճորեն կատարելու քվեաթերթիկները ձեռքով հաշվելու գործընթացում վերապահված գործառույթները և պաշտպանելու տվյալների ճշգրտությունը:
- Ապահովելու քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության հաստատում ստորագրությամբ, վերադաս ընտրական հանձնաժողովին ժամանակին տրամադրում և ընտրատեղամասում արձանագրության հրապարակայնություն:

Ընտրական տեղամասը փակելը

Քվեարկության ընթացակարգն ավարտվում է, և քվեարկության շենքը փակվում է ժամը 20:00-ին: Այդ պահի դրությամբ հերթում կանգնած ընտրողները կարող են քվեարկել: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը հաշվառում է հերթում կանգնած ընտրողների ազգանունները և անունները, նրանց թիվը հայտնում հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում նշում է հերթում կանգնած ընտրողների թիվը: Վերջին ընտրողի քվեարկումից անմիջապես հետո քվեարկությունը հայտարարվում է ավարտված: Հանձնաժողովի նախագահի ցուցումով գրանցում իրականացնողները կապարակնքում են ընտրողների ստուգումը հաստատող կտրոնների զետեղման համար հատկացված անթափանց քվեատուփերի ճեղքերը:

Քվեարկությունն ավարտվելուց անմիջապես հետո հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանի 26-րդ, 27-րդ էջերում գրանցում է ձայները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները (ընտրող/նշանակող սուբյեկտների և կոնտակտային հեռախոսահամարների նշմամբ), ինչպես նաև, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող այլ անձանց անունները, ազգանունները (ներկայացնող կազմակերպության կամ ընտրական սուբյեկտի և կոնտակտային հեռախոսահամարի նշմամբ): Նշված անձանց գրանցումը գործավարության մատյանում հաստատում են ստորագրությամբ

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

ხმების დათვლის დროს კენჭისყრის შენობაში
მყოფ პირთა მონაცემები

№	სახელი, გვარი	სტატუსი	წარმდგენის დასახელება	ტელეფონი	ხელმოწერა
1	ნინო ნინოძვილი	თავმჯდომარე	საოლქო საარჩევნო კომისია	551526936	ნ. ნინოძვილი
2	ეროვნი ეროვნაძე	მოადგილე	საოლქო საარჩევნო კომისია	558956321	ვ. ეროვნაძე
3	დავით დავითაული	მდივანი	საოლქო საარჩევნო კომისია	599896523	დ. დავითაული
4	ალოიძე ალოიძონიძე	კომისიის წევრი	პოლიციაყარი პატიცია 111	598784631	ლ. ალოიძონიძე
5	ეროვნი ჭერიძე	აღგილ. დაკვირვებელი	აპიპ „მოძავლის იერდი"	599814523	ვ. ჭერიძე
6	ნაცა ყარიცაძე	საბიუჯეტო წაშემოადგენელი	პოლიციაყარი პატიცია 119	571120595	ნ. ყარიცაძე

Քվեարկության շենքը փակվելուց հետո քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն ցանկացած պահի մուտք գործել քվեարկության շենք և դուրս գալ շենքից:

Քվեարկության ավարտից անմիջապես հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ու անդամները սկսում են նախապատրաստվել քվեարկության արդյունքների ամփոփմանը: Այդ նպատակով հաջորդաբար իրականացվում են հետևյալ ընթացակարգերը.

Ստուգման սարքերում ստուգման գործընթացի ավարտը

Քվեարկության գործընթացի ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ✔ անհատական ծածկագրի/գաղտնագրի օգտագործմամբ սարքերում փակում է ստուգման գործընթացը: Ստուգման գործընթացը փակելուն պես սարքից ավտոմատ ռեժիմով տպվում են քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվն արտացոլող վերջնական կտրոնները/հաշվետվությունները,
- ✔ հանձնաժողովի քարտուղարի հետ ստորագրում է ընտրողների ընդհանուր թիվն արտացոլող վերջնական կտրոնը/հաշվետվությունը և պահպանման է հանձնում հանձնաժողովի քարտուղարին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը, գործընթացին զուգահեռ, էլեկտրոնային միջոցներով անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթում կատարում է համապատասխան նշումներ:

Սխեմա N6. Սարքերում ստուգման գործընթացի ավարտի փուլերի նկարագրություն

{I}

Ստուգման գործընթացը փակելու համար հանձնաժողովի նախագահը սեղմում է «Վերադառնալ մենյու» կոճակը:

მენიუში დაბრუნება

{II}

Մենյուի մեջ նախագահը սեղմում է «Փակել ստուգումը» կոճակը:

ვერიფიკაციის დახურვა



{III}

Նախագահը սեղմում է «Փակել ստուգումը» կոճակը:

ვერიფიკაციის დახურვა

{IV}

Ստուգման գործընթացը փակելու նպատակով հանձնաժողովի նախագահը մուտքագրում է անհատական ծածկագիրը/գաղտնաբառը:



{V}

Ստուգման գործընթացը փակելուն պես ավտոմատ ռեժիմում տպվում են վերջնական հաշվետվությունները:



{VI}

Հանձնաժողովի նախագահը, սեղմելով «Անջատել սարքը» կոճակը, անջատում է սարքերը:

გამორთეთ მოწყობილობა

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը, ըստ ընտրությունների տեսակների որոշված, քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը մուտքագրում է ցուցադրական արձանագրությունների մեջ և քվեարկության օրվա գործավարության մատյանում (քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը որոշելու կարգի հաստատումը տրված է սույն Ուղեցույց հրահանգի 46-րդ և 47-րդ էջերում:)

Շարժական քվեատուփը բացելը

Ընտրական տեղամասը փակելուց հետո սկզբից բացվում է շարժական քվեատուփը: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է շարժական քվեատուփի վրա կապարակնիքի ամբողջականությունը:

Ընտրական տեղամասում մեկից ավելի շարժական քվեատուփ օգտագործելու դեպքում յուրաքանչյուրի վրա ստուգվում է կապարակնիքների ամբողջականությունը:

Այն դեպքում, երբ պարզվում է, որ շարժական քվեատուփի կնիքի ամբողջականությունը խախտված է, սակայն հանձնաժողովը համարում է, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (նշված փաստի մասին անմիջապես տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին): Հակառակ դեպքում շարժական քվեատուփը կնքվում է և հանձնաժողովի կարգադրության հետ անհապաղ փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Գործընթացին զուգահեռ հանձնաժողովի նախագահը քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց բացատրում է, որ ձայների հաշվման հատուկ սարքերում քվեարկության գործընթացը փակելու և քվեարկության նախնական արդյունքների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով հանձնաժողովը սկսում է ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով քվեաթերթիկները հիմնական քվեատուփեր տեղափոխելու գործընթացը:

Հանձնաժողովի նախագահը և (կամ) իր կողմից սահմանված հանձնաժողովի անդամը շարժական քվեատուփում գտնվող քվեաթերթիկների շրջանակ-ծրարների վրայից հանում է մետաղյա սեղմակները և քվեաթերթիկները սահմանված կարգով տեղադրում է ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի մեջ այնպես, որ անհնար դառնա տեսնել ընտրողի կատարած ընտրությունը:

Այն դեպքում, եթե.

- ✔ շարժական քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարում լինի սահմանված քանակից ավելի քվեաթերթիկ, այսպիսի քվեաթերթիկները կդրվեն առանձին, վրան կգրվի անվավերության հիմքը՝ «Ավել քվեաթերթիկ» և կավելացվի հիմնական քվեատուփի մեջ հայտնաբերված անվավեր քվեաթերթիկների քանակին,
- ✔ ձայների հաշվման էլեկտրոնային հատուկ սարքը վերադարձնի շարժական քվեատուփից հանված քվեաթերթիկը, հնարավոր է այն կրկին ներմուծել ձայները հաշվելու նույն կամ այլ էլեկտրոնային սարքի մեջ: Քվեաթերթիկը կրկին վերադարձնելու դեպքում, այդպիսի քվեաթերթիկը կտեղադրվի առանձին այնպես, որ հնարավոր չլինի տեսնել ընտրողի կատարած ընտրությունը և այնուհետև կխառնվի հիմնական քվեատուփերից հաշվելու նպատակով հանված քվեաթերթիկների հետ:

Վերոնշյալ դեպքերը հայտնաբերելու ժամանակ հանձնաժողովի քարտուղարը կազմում է ակտ՝ փաստի մատնանշմամբ, որը հանձնաժողովի նախագահի հետ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները և հատուկ խմբի անդամները (այսպիսինի առկայության դեպքում): Հանձնաժողովի քարտուղարը տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված ակտը պահում է գործավարության մատյանում:

Եթե շարժական քվեատուփի մեջ հայտնաբերվի այլ ընտրական տեղամասի համար հատկացված կամ չսահմանված նմուշի քվեաթերթիկ, հանձնաժողովի նախագահը /տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ այսպիսի քվեաթերթիկն առանձին կդնի: Այլ տեղամասի համար հատկացված քվեաթերթիկները համարվում են անվավեր, կապվում առանձին փաթեթով, դրանց քանակը չի նշվում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ և նշվում է միայն գործավարության մատյանում:

Տեղեկություններ քվեարկության նախնական արդյունքների մասին

Շարժական քվեատուփում գտնվող քվեաթերթիկները հիմնական քվեատուփում զետեղելու ընթացակարգն ավարտելուց հետո, հանձնաժողովի նախագահը հաջորդաբար.

- ✔ ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերում փակում է քվեարկության գործընթացը,
- ✔ սարքերում համաժամացնում է քվեարկության նախնական արդյունքները,
- ✔ արդյունքները համախմբում է սարքերից մեկում, որի ավարտից հետո սարքից տպվում է քվեարկության նախնական արդյունքների մասին երկու քաղվածք:

Քվեարկության նախնական արդյունքների քաղվածքը տպելուց հետո հանձնաժողովի նախագահը ձայների հաշվման նույն հատուկ էլեկտրոնային սարքի մեջ, որտեղից տպվել է նշված քաղվածքը, տեղադրում է հիշողության քարտը, որի վրա համախմբված տվյալները տեղափոխելուն պես անջատում է ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը (մնացած սարքի/սարքերի հետ միասին):

Սարքերում քվեարկության գործընթացը փակելու, արդյունքների համաժամացման և համախմբման փուլերի նկարագրությունը ներկայացված է Սխեմա N7-ում:

Հատուկ էլեկտրոնային սարքից տպված նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքները ստորագրում է հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի քարտուղարի հետ և վավերացնում հանձնաժողովի կնիքով: Քաղվածքի մեկ օրինակը պահվում է գործավարության մատյանում, մյուս օրինակը փակցվում է հանրային ծանոթացման համար: Բացի այդ, նախնական արդյունքների մասին քաղվածքի հետ մեկտեղ տեսանելի տեղում պետք է փակցվի տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված այն ակտի վավերացված պատճենը (այսպիսինի առկայության դեպքում), որը կազմվել է շարժական քվեատուփից քվեաթերթիկները հիմական քվեատուփում զետեղման գործընթացում բացահայտված հանգամանքների պատճառով (սարքը վերադարձրել է շարժական քվեատուփից հանված քվեաթերթիկը, շարժական քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարում հայտնաբերվել են սահմանված թվից ավելի քվեաթերթիկներ):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը, գործընթացին զուգահեռ համապատասխան նշումներ է կատարում էլեկտրոնային միջոցներով անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթում:

Եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքից չի տպվի նախնական արդյունքների մասին քաղվածք կամ կտպվի տեխնիկական խոտանով քաղվածք, նման դեպքում հանձնաժողովի նախագահը տպելու ծառայությունն ապահովելու նպատակով պետք է դիմի էլեկտրոնային սարքերի տեխնիկական մասնագետին, ինչից հետո շարունակվում են ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու ընթացակարգերը:

Սխեման N7. Քվեարկության գործընթացը փակելու, արդյունքների համաժամացման և համախմբման փուլերի նկարագրում

{I}

Հանձնաժողովի նախագահը կորպուսի վրա եղած ճեղքի մեջ հատուկ բանալու ներմուծմամբ մուտք է գործում ծրագրի կառավարման վահանակ:

{II}

Սարքերի մեջ սկսում է կառավարման վահանակի ներբեռնում, այն տևում է մի քանի վայրկյան:

{III}

Հանձնաժողովի նախագահը քվեարկության գործընթացը փակելու նպատակով սարքերի էկրանի վրա ընտրում է «Նախագահ» կոճակը:

თავმჯდომარე



{IV}

Հանձնաժողովի նախագահը սարքերի մեջ մուտքագրում է անհատական ծածկագիրը/գաղտնաբառը:



{V}

Հանձնաժողովի նախագահը սարքերի էկրանի վրա ընտրում է «Քվեարկության գործընթացի փակում» կոճակը և փակելը հաստատելու համար կրկին մուտքագրում է անհատական ծածկագիրը/գաղտնաբառը:

კენჭისყრის პროცესის დახურვა

{VI}

Քվեարկության գործընթացի փակումը հանձնաժողովի նախագահը հաստատում է՝ սեղմելով «Ավարտել» կոճակը:

დასრულდა

{VII}

Սարքերի միջև տվյալների փոխանակման նպատակով (տվյալները համագումարելու - համաժամացման համար) հանձնաժողովի նախագահն ընտրում է «Արդյունքների համաժամացում» կոճակը:

შედეგების სინქრონიზაცია



{VIII}

Հանձնաժողովի նախագահը սարքերի մեջ մուտքագրում է անհատական ծածկագիրը/գաղտնաբառը:



{IX}

Սարքերի մեջ ավտոմատ ռեժիմով իրականացնում են համաժամացման գործընթացը (տվյալների փոխանակումը)։

{X}

Համաժամացման գործընթացն ավարտելուց հետո հանձնաժողովի նախագահն իրականացնում է արդյունքների համախմբում։

შედეგების კონსოლიდაცია



{XI}

Էկրանին կհայտնվի հաղորդագրություն, թե քանի սարքի տվյալներ են համախմբվել։ Այնուհետև երկու օրինակով ավտոմատ ռեժիմով տպվում է քվեարկության նախնական արդյունքների մասին քաղվածք։

{XII}

Նախնական արդյունքների մասին քաղվածքը տպելուց հետո հանձնաժողովի նախագահը ձայների հաշվման սարքի այն համապատասխան բաժնին, որտեղից տպվել է համախմբված հաշվետվությունը, միացնում է արտաքին հիշողության քարտ, որի վրա ավտոմատ կերպով գրանցվում են արդյունքների համախմբված տվյալները։

{XIII}

Արդյունքներն արտաքին հիշողության քարտի վրա գրանցելուց հետո հանձնաժողովի նախագահը սեղմում է «Անջատել» կոճակը։

გამორთვა

{XIV}

Հանձնաժողովի նախագահը, սեղմելով «Այո» կոճակը, անջատում է սարքերը։

დიახ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պլանշետի միջոցով քվեարկության նախնական արդյունքների մասին տվյալներն ուղարկում է ԿԸՀ: Այդ նպատակով պլանշետին միացնում է հիշողության քարտը, որի վրա տեղափոխված են քվեարկության նախնական արդյունքների մասին համախմբված տվյալները:

Եթե ընտրական տեղամասում չկա բջջային կապի և ինտերնետի շարունակական կապ, նման դեպքում հանձնաժողովի նախագահը պլանշետի մեջ ներբեռնած հավելվածի միջոցով քվեարկության նախնական արդյունքների մասին տվյալները ԿԸՀ կարող է ուղարկել քվեարկության շենքի արտաքին պարագծից:

Եթե արձանագրվել է պլանշետի տեխնիկական խոտան (նախնական արդյունքների փոխանցման հավելվածի հետ կապված խնդիր է առաջացել կամ այլ բան), և հնարավոր չի եղել շտկել խոտանը, նման դեպքում նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքում նշված տվյալների մասին տեղեկությունները հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված անձի տրամադրության տակ գտնվող այլ տեխնիկական միջոցով (օրինակ՝ սմարթֆոն) ուղարկվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նախօրոք սահմանված անձին կամ ԿԸՀ համապատասխան իրավազոր անձին:

Սխեման N8. Քվեարկության նախնական արդյունքների վերաբերյալ տվյալների ԿԸՀ փոխանցման գործընթացի նկարագրում



{I}

Հանձնաժողովի նախագահը, սեղմելով կոճակը, ակտիվացնում է պլանշետի մեջ ներբեռնված ծրագիրը:

{II}

Պլանշետի մեջ սկսվում է ծրագրի ներբեռնումը, տևում է մի քանի վայրկյան:

{III}

Հանձնաժողովի նախագահը մուտքագրում է հատուկ, անհատական ծածկագիրը/գաղտնաբառը և դրանով հաստատում է գործընթացը սկսելը:



{IV}

Հանձնաժողովի նախագահը սեղմում է «Սկսել փոխանցել» կոճակը:

გადაცემის დაწყება

{V}

Հանձնաժողովի նախագահը հիշողության քարտը կապակցում է պլանշետի հետ և, սեղմելով «Փոխանցել» կոճակը, սկսում է ուղարկել տվյալները:

გადაცემა



{VI}

Նախնական համախմբած արդյունքների փոխանցման գործընթացը տևում է մի քանի վայրկյան:



{VII}

Հանձնաժողովի նախագահը, սեղմելով «Ավարտել» կոճակը, ավարտում է փոխանցման գործընթացը:

დასრულდა

Ընտրական տեղամասի նախապատրաստելը ձայները հաշվելու ընթացակարգի համար

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայները հաշվելու ընթացակարգի համար պատրաստում է քվեարկության սենյակը: Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ ընտրում է ոչ պակաս, քան չորս հաշվող:

Հանձնաժողովի անդամների միջև գործառույթների վիճակահանությամբ բաշխման ընթացակարգը.

- ✔ Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների թվին համապատասխան պատրաստում է միատեսակ թերթեր: Այստեղից համապատասխան թվով թերթերի վրա միևնույն գրելու միջոցով գրում է գործառույթի անվանումը՝ «առաջին հաշվող», «երկրորդ հաշվող», «երրորդ հաշվող», «չորրորդ հաշվող»:
- ✔ Հանձնաժողովի նախագահն ստորագրությամբ և հանձնաժողովի հատուկ կնիքով վավերացնում է վիճակահանության բոլոր թերթերը, այնպես է ծալում թերթերը, որ անհնար լինի տեքստի ընթերցումը, և տեղադրում է սեղանի վրա:
- ✔ Վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամները մեկ առ մեկ վերցնում են վիճակահանության թերթերը:

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման արդյունքները գրանցում է գործավարության մատյանի 3-րդ էջում:

Հանձնաժողովի նախագահը ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից վիճակահանությամբ որոշում է ոչ ավելի, քան 2 ներկայացուցչի, որոնք հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշված հաշվողների հետ միասին մասնակցում են վավեր կամ/և անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին: Վիճակահանությանը չեն մասնակցում այն ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները, որոնց կողմից նշանակված հանձնաժողովի անդամները հանդիսանում են վիճակահանությամբ որոշված հաշվողներ:

Դիտորդներն իրենց կազմից փոխադարձ համաձայնությամբ ընտրում են ոչ ավելի, քան երկու վերահսկողի: Եթե դիտորդները համաձայնության չեն գալիս, նրանցից երկու վերահսկողի վիճակահանությամբ կորոշի հանձնաժողովի նախագահը:

Հանձնաժողովի քարտուղարը, գործավարության մատյանի 3-րդ էջում գրանցում է վավեր կամ/և անվավեր քվեաթերթիկների հաշվելու գործընթացին մասնակից ներկայացուցիչներից և դիտորդներից որոշված վերահսկողների տվյալները:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

ხმების დათვლის პროცედურისთვის საუბნო საარჩევნო კომისიის წევრთა შორის წილისყრით ფუნქციათა განაწილების შედეგები

№	კომისიის წევრის ფუნქცია	კომისიის წევრის სახელი, გვარი	კომისიის წევრის ხელმოწერა
1.	I მთვლელი	ინა ინაშვილი	ი. ინაშვილი
2.	II მთვლელი	ლალი ლალიაშვილი	ლ. ლალიაშვილი
3.	III მთვლელი	დავით დავითაძე	დ. დავითაძე
4.	IV მთვლელი	ნიკოლოზ ნიკვაშვილი	ნ. ნიკვაშვილი

ფუნქცია	სახელი, გვარი
ნამდვილი ან/და ბათილი საარჩევნო ბიულეტენების დათვლის პროცესში მონაწილე **2 წარმომადგენელი**	კარლო კაპანაძე
	დავით დევდარიანი
2 მეთვალყურე, რომელიც აკვირდება დათვლის მთელ პროცედურას	ეროვანი ბერიძე
	ნიკოლოზ ელოაშვილი

Հաշվողները ձայները հաշվելու համար հատկացված սեղանի մոտ այնպես են զբաղեցնում տեղերը, որ դիմացի կողմում, երկու մետր հեռավորության վրա գտնվեն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք (նրանք պետք է կարողանան տեսնել քվեաթերթիկները տեսակավորելու և հաշվելու գործընթացը):

Հաշվողների կողքին կանգնում են դիտորդներից որոշված երկու վերահսկողները և ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից որոշված անձինք:

Հանձնաժողովի նախագահը այնպես է տեղ զբաղեցնում, որ կարողանա տեսնել բոլոր հաշվողներին:

Հանձնաժողովի նախագահը հաշվողների սեղանին պետք է մոտեցնի.

- ✔ շարժական քվեատուփի ցուցակը (այսպիսինի առկայության դեպքում),
- ✔ փնասված քվեաթերթիկները,
- ✔ գրանցում իրականացնողների մոտ եղած չօգտագործված քվեաթերթիկները,
- ✔ հիմնական քվեատուփերը:

Մինչև հիմնական քվեատուփը բացելը հանձնաժողովի քարտուղարը, կապարակնքման նպատակով, առանձին-առանձին փաթեթների մեջ է տեղադրում.

- ✔ շարժական քվեատուփի ցուցակը (այսպիսինի առկայության դեպքում),
- ✔ փնասված քվեաթերթիկները,
- ✔ գրանցում իրականացնողների մոտ եղած չօգտագործված քվեաթերթիկները (մինչև փաթեթի մեջ զետեղելը հանձնաժողովի քարտուղարը կտրում է տվյալ քվեաթերթիկների անկյունը):

Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր փաթեթի վրա նշում է ընտրատարածքի անվանումը և համարը, ընտրական տեղամասի անվանումը և համարը, ընտրական փաստաթղթի տեսակը: Կապարակնքված փաթեթները, կապարակնքման գծի վրա ստորագրում են հաշվողները և հանձնաժողովի նախագահը:

Շարժական քվեատուփի ցուցակը և չօգտագործված/փնասված քվեաթերթիկները կապարակնքելուց հետո, հանձնաժողովի քարտուղարը հաշվառում է այն դեպքերի թիվը, որոնք վերաբերում են ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթում/ընտրողների ցուցակում առկա լուսանկարների անհամապատասխանությանն իրար, նաև քվեարկության օրվա գործավարության մատյանին կցված փաստաթղթերի քանակը (տվյալները գրանցում է գործավարության մատյանում): Հանձնաժողովի քարտուղարը տվյալ փաստաթղթերը կապարակնքում է, կնքված փաթեթի վրա նշում է ընտրական տեղամասի անվանումը, համարը, փաստաթղթերի տեսակը և ստորագրում է:

Հիմնական քվեատուփը բացելը, քվեաթերթիկները հաշվելը/կապարակնքելը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է հիմնական քվեատուփերի կապարակնիքների ամբողջականությունը և բացում հիմնական քվեատուփերը:

> Եթե քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի, բայց հանձնաժողովը համարի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (տվյալ փաստի վերաբերյալ անհապաղ տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը): Հակառակ դեպքում, քվեատուփը կապարակնքվում է և հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղ փոխանցվում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Հաշվողներն իրար են խառնում հիմնական քվեատուփերից դատարկած քվեաթերթիկները և սկսում են քվեաթերթիկները տեսակավորելու/հաշվելու գործընթացը:

Հաշվողները դեռ տեսակավորում և հաշվում են համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքները, այնուհետև հաշվում են քաղաքապետի ընտրությունների արդյունքները, վերջում հաշվում են մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքները:

Քվեաթերթիկները տեսակավորելու և հաշվելու նպատակով առաջին հաշվողը վերցնում է քվեաթերթիկը, հայտարարում է, թե ում է տրված ձայնը, քվեաթերթիկն, ըստ ընտրական սուբյեկտի, փոխանցում է երկրորդ և երրորդ հաշվողներին, իսկ չորրորդ հաշվողին փոխանցում է անվավեր քվեաթերթիկները (այսպիսինի առկայության դեպքում)։

Հաշվողները վավեր կամ/և անվավեր քվեաթերթիկները տեսակավորում են օրենսդրությամբ սահմանված հիմքերի նախատեսմամբ, համաձայն որի,

- ✔ Համապատասխան տեսակի ընտրությունների համար վավեր է սահմանված նմուշի միայն այն քվեաթերթիկը, որի վրա համապատասխան սյունակում հատուկ նշիչով գունավորած է/ նշված է միայն մեկ ընտրական սուբյեկտի անվանումից առաջ եղած շրջանը (շրջանի ներքին տարածքը), անկախ քվեաթերթիկում ցանկացած այլ տեսակի նշման/մակագրության առկայության։
- ✔ Համապատասխան տեսակի ընտրությունների սահմանված նմուշի քվեաթերթիկը անվավեր է համարվում, եթե համապատասխան սյունակում գունավորած է կամ/և նշված է մեկից ավելի ընտրական սուբյեկտից առաջ եղած համապատասխան շրջանը (շրջանի ներքին տարածքը), համապատասխան սյունակում չի գունավորած կամ/և չի նշված ոչ մի սուբյեկտից առաջ եղած համապատասխան շրջանը (շրջանի ներքին տարածքը)։

Վերոնշյալ հաջորդականության նախատեսմամբ, հաշվողները նախ տեսակավորում են համամասնական ընտրակարգի հիման վրա անցկացված ընտրությունների արդյունքները։ Քվեաթերթիկները տեսակավորելուց հետո հանձնաժողովի նախագահը հաշվողներին ցուցում է տալիս հաշվել ընտրական սուբյեկտներին պատկանող քվեաթերթիկները/ձայները և անվավեր քվեաթերթիկները (այսպիսինի առկայության դեպքում)։ Հանձնաժողովի նախագահը հայտարարում է յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի (կուսակցություններ) ստացած ձայների քանակը։ Հանձնաժողովի քարտուղարը հաշված տվյալները մուտքագրում է սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում։

Մինչև ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում տվյալները մուտքագրելը հանձնաժողովի նախագահը քարտուղարի հետ ստուգում է հաշված տվյալների ճշգրտությունը. եթե ընտրական սուբյեկտների կողմից ստացված ձայների և անվավեր քվեաթերթիկների գումարն ավել է քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թվից, հանձնաժողովի նախագահը հաշվողներին ցուցում է տալիս կրկին հաշվել տվյալները։

Համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքները հաշվելուց հետո, նույն սկզբունքի պահպանմամբ, հաշվողները տեսակավորում են և հաշվում դեռ քաղաքապետի ընտրությունների, այնուհետև մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքները։ Հանձնաժողովի նախագահը հայտարարում է քաղաքապետի թեկնածուների/ սակրեբուլոյի անդամության մեծամասնական թեկնածուների կողմից ստացված ձայների քանակը։ Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի քարտուղարի հետ ստուգում է հաշված տվյալների ճշգրտությունը։ Հանձնաժողովի քարտուղարը տվյալները մուտքագրում է քաղաքապետի ընտրությունների/սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում։

Մինչև ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում տվյալները մուտքագրելը պետք է նախատեսվի հետևյալը.

Քաղաքապետի ընտրությունների համար անվավեր քվեաթերթիկների քանակը որոշելու համար հանձնաժողովի նախագահը համապատասխան ընտրությունների համար հաշվողների կողմից անվավեր ճանաչված քվեաթերթիկների քանակից պետք է հանի ընտրությունների օրվա գործավարության մատյանում գրանցված այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք ընտրություններին մասնակցել են հատուկ ցուցակով և իրավունք չունեին մասնակցելու քաղաքապետի ընտրություններին:

Սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների անվավեր քվեաթերթիկների քանակը որոշելու համար հանձնաժողովի նախագահը համապատասխան ընտրությունների համար հաշվողների կողմից անվավեր ճանաչված քվեաթերթիկների քանակից պետք է հանի քվեարկության օրվա գործավարության մատյանում գրանցված այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք ընտրություններին մասնակցել են հատուկ ցուցակով և իրավունք չունեին մասնակցելու սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին:

Քվեաթերթիկները հաշվելու ընթացակարգն ավարտելուց հետո հաշվողները բոլոր քվեաթերթիկները պետք է փաթեթավորեն և կապարակնքեն միասին: Փաթեթի վրա պետք է նշվի ընտրատարածքային/տեղամասային ընտրական հանձնաժողովների անվանումը և համարը, կապարակնքված ծրարում զետեղած քվեաթերթիկների քանակը: Կապարակնքված փաթեթը ստորագրում են հաշվողները և հանձնաժողովի նախագահը: Ընթացակարգը կատարելու համար պատասխանատվությունը վերապահվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը

Ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները հաստատվում են միայն Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն կազմված տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը կազմում է երեք տեսակի ամփոփիչ արձանագրություն.

- ✔ սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն,
- ✔ սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն,
- ✔ քաղաքապետի ընտրությունների քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները տպագրվում են պաշտպանիչ նշաններ ունեցող թղթի վրա: Արձանագրությանը տրված է անհատական համար: Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններում տպագիր տեսքով արտացոլված են հետևյալ տեղեկությունները.

- ✔ ընտրությունների անվանումը և քվեարկության ամսաթիվը, ամիսը, տարեթիվը,
- ✔ ընտրատարածքի համարը և անվանումը,
- ✔ ընտրական տեղամասի համարը,

- ✔ N1 սյունակում՝ միասնական ցուցակում ընտրողների թիվը,
- ✔ N2 սյունակում՝ ստացած քվեաթերթիկների թիվը,
- ✔ ընտրական սուբյեկտների անվանումը (հերթական համարի մատնանշմամբ),
- ✔ արձանագրությունը կազմելու տարին և ամիսը:

Ձայները հաշվելու գործընթացն ավարտվելուց հետո, հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, լրացնում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը և մուտքագրում հետևյալ տվյալները.

- ✔ N3 սյունակում՝ հատուկ ցուցակում ընտրողների թիվը,
- ✔ N4 սյունակում՝ քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը ժամը 12-ին և 17-ին,
- ✔ N5 սյունակում՝ քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը (սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար/քաղաքապետի ընտրությունների համար կազմած քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններում ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվի մեջ չի նախատեսվում այն ընտրողների թիվը, որոնք ընտրություններին մասնակցել են ընտրողների հատուկ ցուցակով և իրավունք չունեին մասնակցելու համապատասխան ընտրություններին),
- ✔ N6 սյունակում՝ անվավեր համարված քվեաթերթիկների թիվը (սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար/քաղաքապետի ընտրությունների համար կազմած քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններում անվավեր քվեաթերթիկների թվի մեջ չի նախատեսվում այն ընտրողների թիվը, որոնք ընտրություններին մասնակցել են ընտրողների հատուկ ցուցակով և իրավունք չունեին մասնակցելու համապատասխան ընտրություններին),
- ✔ ընտրական սուբյեկտներին տրված ձայների թիվը,
- ✔ հանձնաժողովի հատուկ կնիքի համարը:

N3, N4, N5, N6 սյունակներում, ինչպես նաև սուբյեկտներին տրված ձայների քանակի սյունակներում տրված չորս բաժանմունքանոց վանդակներից չորրորդ (վերջին) վանդակում քարտուղարը պետք է մուտքագրի միավորների կարգի թվանշանը, երրորդ վանդակում՝ տասնավորների կարգի թվանշանը, երկրորդ վանդակում՝ հարյուրավորների կարգի թվանշանը, առաջին վանդակում՝ հազարավորների կարգի թվանշանը:

Եթե համապատասխան տվյալների սյունակում մեկ դատարկ վանդակ/վանդակներ, պարտադիր է, որ հանձնաժողովի քարտուղարը դատարկ վանդակում/վանդակներում մուտքագրի «X» խորհրդանշանը:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը լրացնելու նմուշ

5	არჩევნებში მონაწილე ამომრჩეველთა საერთო რაოდენობა	1	2	3	6

ერთეულების თანრიგის ციფრი
ათეულების თანრიგის ციფრი
ასეულების თანრიგის ციფრი
ათასეულების თანრიგის ციფრი

6	ბათილად მიჩნეული საარჩევნო ბიულეტენების რაოდენობა (სხვა უბნისთვის განკუთვნილი ბათილი საარჩევნო ბიულეტენების რაოდენობა არ ემატება)	X	X	X	4

შეაქვს სიმბოლო „X“

Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, ինչով հավաստվում է նրանց ներկա գտնվելը ընտրական տեղամասում: Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը չի համաձայնում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունում տեղ գտած տվյալներին, նա իրավունք ունի արձանագրությանը գրավոր կցել իր տարբերվող կարծիքը (քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/արձանագրությունների մեջ հատուկ հատկացված սյունակում նշվում են այն տվյալները, որոնց չի համաձայնում հանձնաժողովի անդամը, ինչը հաստատում է ստորագրությամբ): Նույնիսկ տարբերվող կարծիքի արտահայտման դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը/արձանագրությունները հանձնաժողովի անդամի ստորագրության համար հատկացված համապատասխան սյունակում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններն իրավաբանական ուժ ունեն, եթե դրանք ստորագրել է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների մեծամասնությունը:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ պետք է նշվի նաև դրա կազմելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ժամանակը (ժամը և րոպեն):

Նմուշ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունից



Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները վավերացվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով: Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները գրանցում է գրանցամատյանի ելից փաստաթղթերի մասում:

Արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունում/արձանագրություններում տեղ գտած տվյալների մեջ ուղղումներ կատարել:

Եթե քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/արձանագրությունների N3, N4, N5, N6 սյունակներում, ինչպես նաև թեկնածուներին տրված ձայների քանակի սյունակներում տվյալներ մուտքագրելիս սխալ է թույլ տրվել, սխալն ուղղելու համար քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ համապատասխան տվյալների երկայնքով արվում է գրառում «Ուղղված է» և կազմվում է ուղղման արձանագրություն/արձանագրություններ:

Հանձնաժողովի քարտուղարը սխալն ուղղելու արձանագրությունը/ արձանագրությունները կազմում է հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, որում ներառում է հետևյալ տվյալները.

- ✔ ընտրատարածքի համարը և անվանումը,
- ✔ ընտրական տեղամասի համարը,
- ✔ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության համապատասխան սյունակի համարը, որում կատարվում է ուղղումը, այն թիվը, որը պետք է ուղղվի այս սյունակում և այն թիվը, որ պետք է գրված լինի դրա փոխարեն,
- ✔ այն ընտրական սուբյեկտի անվանումը, որի երկայնքով տվյալների մեջ ուղղում է կատարվում,
- ✔ թիվը, որը պետք է ուղղվի այս սյունակում և այն թիվը, որ պետք է գրված լինի դրա փոխարեն:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության և ուղղման արձանագրության նմուշ



Ընտրական հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները պարտավոր են ստորագրել ուղղման արձանագրությունը/արձանագրությունները: Ուղղման արձանագրությունը/արձանագրությունները կկնքվեն ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով: Հանձնաժողովի քարտուղարը ուղղման արձանագրությունը/արձանագրությունները գրանցում է գրանցամատյանի ելից փաստաթղթերի մասում և քվեարկության օրվա գործավարության մատյանում: Ուղղման արձանագրությունը կցվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը կապարակնքելուց և նրա վրա հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրումից հետո արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունն ուղղելու արձանագրություն կազմել:

Եթե քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը/արձանագրությունները լրացնելիս սխալ է թույլ տրվել հանձնաժողովի հատուկ կնիքի համարը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը/ժամանակը մուտքագրելիս, կամ չի կատարվել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության վավերացում հանձնաժողովի հատուկ կնիքով և նման ձևով տրամադրվել է դրա ֆոտոպատճենը, հանձնաժողովի քարտուղարը պետք է բացատրագիր գրի:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների հրապարակայնությունը

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ֆոտոպատճենն անհապաղ, արձանագրությունները կազմելուն պես իր ձեռքի տակ եղած հասանելի տեխնիկական միջոցով (պլանշետով) ուղարկել ԿԸՀ: Այս նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովը պլանշետի օգտագործմամբ կլուսանկարի և ԿԸՀ կուղարկի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ֆոտոպատճենները:

Եթե արձանագրվի պլանշետի տեխնիկական խոտան (խնդիր է առաջացել ԿԸՀ հավելվածի հետ, որով ուղարկվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը) և հնարավոր չի եղել ուղղել թերությունը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավազոր անձանց կողմից ընտրական այլ փաստաթղթերի հետ միասին կփոխանցվեն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, որը կապահովի դրա վերբեռնումը էլեկտրոնային կառավարման համակարգ:

Եթե ընտրական տեղամասում չկա բջջային կապի և ինտերնետի անխափան միացում, ապա նման դեպքում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների պատճենները ԿԸՀ-ին կարող է տրամադրվել քվեարկության շենքի արտաքին պարագծից, կամ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները իրավազոր անձանց կողմից ընտրական այլ փաստաթղթերի հետ միասին կփոխանցվեն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, որը կապահովի դրանց վերբեռնում էլեկտրոնային կառավարման համակարգ:

Օգտագործելով պլանշետը՝ ԿԸՀ է ուղարկվում նաև ուղղման արձանագրության/արձանագրությունների (այսպիսինի առկայության դեպքում) ֆոտոպատճենը, հանձնաժողովի անդամների տարբերվող կարծիքի փաստաթղթի (այսպիսինի առկայության դեպքում) ֆոտոպատճենը, ամփոփիչ արձանագրության/արձանագրությունների հետ կապված հանձնաժողովի անդամի/հանձնաժողովի քարտուղարի բացատրագրի (այսպիսինի առկայության դեպքում) ֆոտոպատճենը, հանձնաժողովի կողմից կազմված ակտի ֆոտոպատճենը, որը կազմվել է շարժական քվեատուփից հիմնական քվեատուփ քվեաթերթիկների զետեղման գործընթացում բացահայտված հանգամանքների պատճառով (այսպիսինի առկայության դեպքում):

Սխեմա N9. Ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենի ԿԸՀ ուղարկելու գործընթացի փուլերի նկարագրությունը՝ համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության պատճենն ուղարկելու նմուշ

{I}

Հանձնաժողովի նախագահը ծրագրի ակտիվացումից հետո մուտք է գործում ծրագրի մենյու:



{II}

Հանձնաժողովի նախագահը սեղմում է «Արձանագրություն» կոճակը:



{III}

Հանձնաժողովի նախագահը սեղմում է «Համամասնական» կոճակը:



{IV}

Հանձնաժողովի նախագահը սեղմում է լուսանկարչական սարք արտացոլող կոճակը:



{V}

Հանձնաժողովի նախագահը , սեղմում է «Լուսանկարահանել» կոճակը և սարքի միջոցով լուսանկարահանում է արձանագրության ֆոտոպատճենը:



{VI}

Հանձնաժողովի նախագահը արձանագրության ֆոտոպատճենն ուղարկելու նպատակով սեղմում է «Ուղարկել» կոճակը:

Հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ֆոտոպատճենները փակցնել հանրային ծանոթացման համար: Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/ արձանագրությունների և ուղղման արձանագրության/արձանագրությունների (այսպիսինի առկայության դեպքում) ֆոտոպատճենները, հանձնաժողովի անդամների կցված տարբերվող կարծիքներով (այսպիսինի առկայության դեպքում), պահանջելու դեպքում, անհապաղ փոխանցում է քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների և ուղղման արձանագրության/ արձանագրությունների (այսպիսինի առկայության դեպքում) ֆոտոպատճենները պետք է վավերացվեն հանձնաժողովի հատուկ կնիքով, հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով: Ստացողը ֆոտոպատճենները ստանալը հաստատում է ստորագրությամբ քվեարկության օրվա գործավարության մատյանում և գրանցամատյանում:

> Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության և սահմանված կարգով վավերացված նրա ֆոտոպատճենն ունեն հավասար իրավաբանական ուժ:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների/անճշտություններն ուղղելու արձանագրության/արձանագրությունների հետ կապված հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի առկայության դեպքում), պահանջի հիման վրա, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տրվում են պահանջելուց հետո, 2-օրյա ժամկետում:

Հանձնաժողովի քարտուղարը, ամփոփիչ արձանագրությունների պատճենները տրամադրելուց հետո փակում է գրանցամատյանը և գործավարության մատյանը: Այդ նպատակով գրանցամատյանում և գործավարության մատյանում վերջին գրառումից հետո հանձնաժողովի քարտուղարն անում է մակագրություն «Փակվել է», նշում է ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ճշգրիտ ժամը, գրառումը հանձնաժողովի նախագահի հետ միասին հաստատում են ստորագրությամբ և հանձնաժողովի հատուկ կնիքով:

Գործավարության մատյանը փակելու նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი		№112.07		საარჩევნო უბანი
შემაჯამებელი ოქმის ფოტოასლის მიღების დადასტურება				
№	სახელი, გვარი	სტატუსი	წარმდგენის (ორგანიზაციის) დასახელება	ხელმოწერა
1	ნიკა გელაძვილი	აღგილ. დამკვირვებელი	აიან „დემოკრატია ძალია"	ნ. გელაძვილი
2	ნაცა ყიოცაძე	ძალია	ცოლოვიზია „ნათელი მზერა"	ნ. ყიოცაძე
3	კარლო კაკანაძე	საქმიანი წარმომადგენელი	პოლიტიკური პარტია 199	კ. კაკანაძე
			ნ. ნინოძვილი	
			დ. დავითულიანი	
			დასრულია 26.10.2024 22:00 სთ	

Ընտրական փաստաթղթերի, էլեկտրոնային սարքերի և այլ գույքի վերահանձնումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ընտրական փաստաթղթերը, էլեկտրոնային սարքերը և այլ գույք վերահանձնելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովը կապարակնքում է.

- ✔ գործավարության մատյանն ու դրա հետ՝ դիմումները/բողոքները (այսպիսինի առկայության դեպքում),
- ✔ տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը:

> Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և գրանցամատյանը չեն կապարակնքվում:

Գործավարության մատյանի կապարակնքված փաթեթը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը: Հանձնաժողովի հատուկ կնիքի կապարակնքված փաթեթը ստորագրում են հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները:

Կապարակնքման ընթացակարգն ավարտելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը/նախագահի տեղակալը կամ/և հանձնաժողովի քարտուղարը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով է տանում.

- ✔ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները, ուղղման արձանագրությունը/արձանագրությունները (այսպիսինի առկայության դեպքում) և տարբերվող կարծիքն արտացոլող փաստաթուղթը (այսպիսինի առկայության դեպքում),
- ✔ գրանցամատյանը և դրա հետ մեկտեղ՝
  - տեղամասային հանձնաժողովի անդամների/հանձնաժողովի քարտուղարի բացատրագրերը (այսպիսինի առկայության դեպքում),
  - ընտրողների ստուգման սարքերից տպված նախնական հաշվետվությունները և սարքից տպված վերջնական հաշվետվությունը,
  - ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերից տպված «զրոյական քաղվածքները» և սարքից նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքը,
  - գրանցում իրականացնողների կողմից լրացված ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների քանակի հաշվառման ձևաթղթերը,
- ✔ գործավարության մատյանի կապարակնքված փաթեթը,
- ✔ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման լրացված ձևաթուղթը:

> Յուրաքանչյուր տեսակի ընտրական փաստաթղթերի փոխանցման ժամանակ կազմվում է համապատասխան հանձնման-ընդունման ակտ/ակտեր, որը ստորագրում են իրավազոր անձինք:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը/ հանձնաժողովի նախագահի տեղակալը և էլեկտրոնային սարքերի տեխնիկական մասնագետը, ընտրական այլ կապարակնքված փաստաթղթերի հետ մեկտեղ, հանձնման-ընդունման ակտի հիման վրա, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի պահեստում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի իրավազոր անձին պետք է փոխանցի.

- ✔ ընտրողների ստուգման սարքերը, ձայների հաշման հատուկ էլեկտրոնային սարքերը, պլանշետը,
- ✔ ստուգման սարքից/սարքերից տպված ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները զետեղելու համար հատկացված կապարակնքված տուփերը:

Կարևոր է ստուգման էլեկտրոնային միջոցների և կապարակնքված ընտրական փաստաթղթերի անվտանգ փոխադրումը:

Հարցեր գիտելիքների ինքնագնահատման համար

1. Ինչպե՞ս է գործում տեղամասային ընտրական հանձնաժողովը, եթե քվեարկությունն ավարտվելու պահին (ժամը 20:00) հերթում կանգնած ընտրողներ կան:
2. Ո՞վ է պատասխանատու, և ի՞նչ ընթացակարգի պահպանմամբ է տեղի ունենում ընտրողների ստուգման սարքում ստուգման գործընթացն ավարտելը:
3. Ի՞նչ նպատակով և ի՞նչ ընթացակարգի պահպանմամբ է բացվում շարժական քվեատուփը:
4. Ի՞նչ է տեղի ունենում, եթե շարժական քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարում հայտնաբերվում է մեկից ավելի քվեաթերթիկ:
5. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերադարձնում է շարժական քվեատուփից հանված քվեաթերթիկը:
6. Ո՞վ է պատասխանատու և ի՞նչ ընթացակարգի պահպանմամբ է տեղի ունենում ձայների հաշվման էլեկտրոնային հատուկ սարքերում քվեարկության գործընթացն ավարտելը:
7. Ի՞նչ է համախմբված քաղվածքը, և ինչպե՞ս են դրանում նշված տվյալները ուղարկվում ԿԸՀ:
8. Ինչպե՞ս է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը որոշում հաշվողներին:
9. Ինչպե՞ս է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը որոշում ընտրական սուբյեկտների այն ներկայացուցիչներին, ովքեր իրավունք ունեն մասնակցել քվեաթերթիկների հաշվման գործընթացին:
10. Ի՞նչ ընթացակարգի պահպանմամբ են կապարակնքվում գրանցում իրականացնողների մոտ եղած չօգտագործված քվեաթերթիկները:
11. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե.
    - ✔ պարզվում է, որ շարժական քվեատուփի վրա խախտված է կապարակնիքի ամբողջականությունը,
    - ✔ պարզվում է, որ հիմնական քվեատուփի վրա խախտված է կապարակնիքի ամբողջականությունը:
12. Ո՞ր դեպքում է համարվում սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր:
13. Ի՞նչ կարգով է որոշվում անվավեր քվեաթերթիկների թիվը քաղաքապետի ընտրությունների համար և սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար:
14. Ընտրական փաստաթղթերը/գույքը կապարակնքելիս, ով է ստորագրում.
    - ✔ շարժական քվեատուփի ցուցակի կապարակնքված փաթեթի գծի վրա,
    - ✔ քվեաթերթիկների կապարակնքված փաթեթի գծի վրա,
    - ✔ հանձնաժողովի հատուկ կնիքի կապարակնքված փաթեթի գծի վրա,
    - ✔ գործավարության մատյանի կապարակնքված փաթեթի գծի վրա:
15. Ո՞վ է ստորագրում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները:
16. Ո՞ր դեպքում է համարվում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունեցող:
17. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները լրացնելիս սխալ է թույլ տրվել թեկնածուներին տրված ձայների քանակի սյունակներում տվյալները գրանցելիս:

18. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը լրացնելիս սխալ է թույլ տրվել արձանագրության ամիսը, ամսաթիվը, տարեթիվը/ժամը գրանցելիս:
19. Ինչպե՞ս է տեղամասային ընտրական հանձնաժողովն ապահովում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների հրապարակայնությունը:
20. Ի՞նչ կարգով է տեղամասային ընտրական հանձնաժողովը տրամադրում ամփոփիչ արձանագրությունների ֆոտոպատճենը քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց:
21. Տեղամասային ընտրական հանձնաժողովից ո՞վ է պատասխանատու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին կապարակնքված ընտրական փաստաթղթերը/գույքը և էլեկտրոնային սարքերը վերահանձնելու համար:

06

Ինչպես է տեղամասային ընտրական հանձնաժողովն արձագանքում քվեարկության օրվա դիմումներին և բողոքներին

Տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրական օրենսդրության ճշգրիտ և հետևողական պահպանմամբ կանխում է ընտրական վեճերը/արձագանքում է դրանց: Տեղամասային ընտրական հանձնաժողովը նախագահի գլխավորությամբ քվեարկության օրվա դիմումների/բողոքների հետ կապված ապահովում է.

- Գործընթացի թափանցիկ և անաչառ վարում:
- Շահագրգիռ կողմերին դիմումների/բողոքների ներկայացման և գրանցման ընթացակարգի պարզաբանում:
- Էթիկական հաղորդակցություն դիմումներ/բողոքներ ներկայացնող անձանց հետ:
- Դիմումների/բողոքների հետ կապված փաստերի, հանգամանքների ուսումնասիրում և համապատասխան արձագանքում:

Քվեարկության օրը դիմում/բողոք ներկայացնելը և գրանցելը

Քվեարկության և ձայների հաշվման ընթացակարգի խախտման վերաբերյալ տեղամասային ընտրական հանձնաժողովին դիմումով/բողոքով դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովում իրավազորություն ունեցող ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը և տեղական դիտորդական կազմակերպության դիտորդը:

Ընտրական տեղամասում քվեարկության ընթացակարգի խախտման մասին դիմումը/բողոքը իրավազոր անձի կողմից պետք է կազմվի խախտումը նկատելուն պես՝ քվեարկության օրվա ժամը 06:45-ից մինչև հիմնական քվեատուփը բացելը, իսկ դիմումը/բողոքը ձայները հաշվելու և քվեարկության արդյունքները ամփոփելու ընթացակարգերի ժամանակ թույլ տրված խախտման մասին (քվեարկության արդյունքների վերանայման կամ անվավեր ճանաչելու պահանջով) պետք է կազմվի հիմնական քվեատուփը բացելուց մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը:

Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը, տեղական դիտորդական կազմակերպության դիտորդն իրավունք ունի քվեարկության օրվա դիմումը/բողոքը փոխանցել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, նրա տեղակալին կամ հանձնաժողովի քարտուղարին: Հանձնաժողովի քարտուղարը դիմումը/բողոքը գրանցում է գրանցամատյանում և գործավարության մատյանում, իսկ դիմումատուին/բողոքաբերին փոխանցում տեղեկանք (իր ստորագրությամբ), որտեղ նշվում է համապատասխան դիմումը/բողոքը հանձնաժողովի կողմից ստանալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը և գրանցման համարը:

Եթե քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք բողոքը գրանցելիս խախտում են նկատել, ապա սույն բողոքի գրանցման հետ կապված որոշումը կայացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովը:

Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը/դիտորդն իրավունք ունի քվեարկության օրը ընտրական ընթացակարգերի հետ կապված պահանջները, բողոքները և դիտողությունները մուտքագրել քվեարկության օրվա գործավարության մատյանի 10-րդ և հաջորդ էջերում: Նման դեպքում անձը պարտավոր է գործավարության մատյանում նշել իր ազգանունը, անունն ու հասցեն (ըստ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականի):

Ոչ ոք իրավունք չունի խանգարելու քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձին գործավարության մատյանում մուտքագրել պահանջը, դիտողությունը կամ բողոքը:

Քվեարկության օրվա դիմումների/բողոքների թերության որոշման կարգը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի նախագահի տեղակալը որոշում են դիմումը/բողոքը ներկայացնողի թույլ տված անճշտությունը և խելամիտ ժամկետ սահմանում դրա լրացման համար, եթե դիմումը/բողոքը չի ներառում.

- ✔ դիմումը/բողոքը կազմելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ժամը,
- ✔ դիմումատուի/բողոքաբերի անունը, ազգանունը և գրանցման վայրը,
- ✔ ընտրական տեղամասի համարը,
- ✔ վկայի առկայության դեպքում՝ նրա անունը, ազգանունը և գրանցման վայրը:

Դիմումատուն/բողոքաբերն իրավունք ունի սահմանված ժամկետում լրացնել թերությունը համանման դիմում/բողոք ներկայացնելու միջոցով կամ ներկայացնել նոր դիմում (որտեղ կնշվեն այն տվյալները, որոնց պատճառով սահմանվել էր նրա թերությունը): Հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանում անում է «Թերություն» գրառումը: Գրառման երկայնքով ստորագրում են դիմումը/բողոքը ներկայացնողը և հանձնաժողովի համապատասխան ղեկավար անձը:

Թերությունը լրացնելու ժամկետը սահմանվում է կողմերի համաձայնության հիման վրա: Կողմերի համաձայնության չգալու դեպքում, ժամկետը միանձնյա սահմանում է դիմումը/բողոքը ընդունող անձը:

Թերությունը լրացնելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի նախագահի տեղակալը գրանցամատյանում գրում է «Լրացված է» և նշում թերությունը լրացնելու ճշգրիտ ժամանակը և ամիսը, ամսաթիվը, տարեթիվը: Գրառման երկայնքով ստորագրում են դիմում/բողոք ներկայացնողը և հանձնաժողովի համապատասխան ղեկավար անձը:

Սահմանված ժամկետում թերությունը չլրացնելու դեպքում դիմումը/բողոքը չի քննարկվում:

Քվեարկության օրվա դիմումներին/բողոքներին արձագանքումը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը/հանձնաժողովը պարտավոր է անհապաղ համապատասխանաբար արձագանքել և վերացնել առկա խախտումը: Դիմումի/բողոքի մեջ նշված խախտումը վերացնելու դեպքում քվեարկության օրվա գործավարության մատյանում հանձնաժողովի քարտուղարը գրում է «Խախտումը վերացվել է» և նշում ճշգրիտ ժամանակը:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

ԿԵՆՖԻՍԿՐԻՍ ՊՐՈՑԵԴՈՒՐԵՐԻՆ ԴԱՐԼՈՒՅՑԻ ՄԻՍԱՆԵՐ ԳԱՆՑԽԱԴԵՐԻՆ/ՍԱՀՄՈՒՐԻՆ ՌԵԳԻՍՏՐԱՑԻԱ		
ՌԵԳԻՍ-ՏՐԱՑԻ-ՈՒՆ №	ԳԱՆՑԽԱԴԵՐԻՆ/ՍԱՀՄՈՒՐԻՆ ԱՐՍԻ	ԳԱՆՑԽԱԴԵՐԱԶԵՎ/ՍԱՀՄՈՒՐԱՐԶԵՎ ՌԵԱԳԻՐԵՑԱ ԶՈՒՍՏ ԴՐՈՒՄԻ ՄԻՏԻՈՒՄԸՆԵՐԻ (ԴԱՐԼՈՒՅՑԱ ԱՐՄՈՖԽՎՐԻԼՈՒՄ)
2	ամբողջությունը հրավերքների, անդրադարձի, դիտողությունների քննարկման ինչ-որ պրոցեսի կազմակերպման	դիտողությունները քննարկվեցին իրատարակի կրան սրճի մեջտեղը ամբողջությունը. հրավերքները ու անդրադարձը մեկնարկեցին. 17:00 ներսում.

Այն դեպքում, եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը/հանձնաժողովը չի վերացրել խախտումը կամ այլ կերպ մերժել է արձագանքել դիմումին/բողոքին, դիտորդը/ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը կամ նույն դիտորդական կազմակերպության այլ դիտորդ/ընտրական սուբյեկտի այլ ներկայացուցիչ իրավունք ունի ընտրական տեղամասը բացվելուց (ժամը 06:45-ից) մինչև հիմնական քվեատուփի բացվելը բացահայտված խախտումները անհապաղ բողոքարկել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով (ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ խախտումը վերացնելու համար):

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը/հանձնաժողովը չի վերացրել խախտումը կամ որևէ այլ ձևով հրաժարվել է արձագանքել դիմումին/բողոքին, որը վերաբերում է ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգերի ժամանակ թույլ տրված խախտումներին, դիտորդը/ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը կամ նույն դիտորդական կազմակերպության այլ դիտորդ/ընտրական սուբյեկտի այլ ներկայացուցիչ իրավունք ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի/տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի գործողությունը 3 օրացուցային օրվա ժամկետում բողոքարկել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով (ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը դիմումը/բողոքը քննարկում է այն ստանալուց հետո 4 օրացուցային օրվա ընթացքում):

Տեղամասային ընտրական հանձնաժողովը ներկայացված դիմումը/բողոքը չի քննարկում և կարգադրություն է հրապարակում դիմումը/բողոքը առանց քննարկման թողնելու վերաբերյալ, եթե.

- ✔ դիմումը/բողոքը կազմված է ոչ իրավազոր անձի կողմից,
- ✔ դիմումի/բողոքի մեջ չի նշված խախտման էությունը և այն թույլ տալու ժամանակը,
- ✔ դիմումը/բողոքը ընտրական հանձնաժողովին է փոխանցվել օրենքով պահանջված ժամկետի և կարգի խախտմամբ,
- ✔ սահմանված ժամկետում չի լրացվել ներկայացված դիմումի/բողոքի թերությունը:

Հարցեր գիտելիքների ինքնագնահատման համար

1. Ո՞վ իրավունք ունի քվեարկության օրը դիմումով/բողոքով դիմել տեղամասային ընտրական հանձնաժողով:
2. Տեղամասային ընտրական հանձնաժողովից ո՞վ և ո՞ր դեպքում է որոշում դիմումի/բողոքի թերությունը:
3. Ո՞ր դեպքերում է տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվա դիմումը/բողոքը թողնում չքննարկված:

ՀԱՎԵԼՎԱԾ N1

Տեղեկատվական փաստաթուղթ էլեկտրոնային սարքերը հավաքելու մասին

Ընտրողների ստուգման սարքերը հավաքելը

Ստուգման սարքի անխափան աշխատանքի համար ջերմային թուղթը համապատասխան խցիկում պետք է զետեղվի ճիշտ ուղղությամբ:



Ջերմային թղթի ճիշտ տեղադրումը կարելի է ստուգել ջերմաթղթի մակերևույթը ցանկացած պինդ առարկայով կամ եղունգով քերելով (մակերևույթի վրա պետք է մնա հետք):

Ստուգման յուրաքանչյուր սարք հոսանքի աղբյուրին միացնելու համար սարքի ետին մասում եղած միացքին («պորտին») պետք է միացվեն հոսանքի բլոկը և ադապտերի լարը: Ադապտերի լարը պետք է միացվի հոսանքի աղբյուրին (անհրաժեշտության դեպքում հոսանքի աղբյուրին միանալու համար օգտագործվում է հոսանքի երկարեցման լար):

Ստուգման սարք

Սնուցման բլոկ

Ադապտերի լար

Հոսանքի երկարեցման լար

Հոսանքի աղբյուրին միացնելուց հետո ստուգման սարքը սկսում է լիցքավորվել:

Լիցքավորման մասին մատնանշում է սարքի աջ կողմում/կողքին զետեղված լամպերի առկայծումը:
Լամպերի վերևում գտնվող փոքրիկ կոճակը մատով սեղմելով՝ հնարավոր է տեղեկություն ստանալ սարքը լիցքավորվելու մակարդակի մասին:

Սարքերն իրար հետ կապակցելու համար (համաժամացում), յուրաքանչյուր ցանցի լարի մի ծայրը պետք է միացվի յուրաքանչյուր սարքի կողմնային մասում եղած համապատասխան միացքին («պորտին»), իսկ ցանցի լարի երկրորդ ծայրը՝ հաբին (հաբն ապահովում է սարքերի կապակցումն իրար հետ/համաժամացումը):

Ցանցի լար

Հաբ

Ցանցի լար

Հաբը հոսանքի աղբյուրին միացնելու համար՝

- ✔ Հաբին պետք է միացվի հաբի սնուցման բլոկը:
- ✔ Հաբի սնուցման բլոկը պետք է միացվի անխափան սնուցման աղբյուրի (UPS):
- ✔ Անխափան սնուցման աղբյուրը (UPS) պետք է միացվի հոսանքի աղբյուրին (հոսանքի աղբյուրին հասցնելու համար, ըստ անհրաժեշտության, օգտագործվում է հոսանքի երկարեցման լար):

Հաբի սնուցման բլոկ

Հոսանքի անխափան սնուցման աղբյուր (UPS)

Սարքերը պետք է տեղադրվեն այնպես, որ լարերի հետ մեխանիկական շփումը նրանց ճիշտ աշխատանքի հետ կապված խնդիր չստեղծի:

Զայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի հավաքումը

Զայների հաշվման հատուկ սարքի ճիշտ աշխատելու համար ջերմային թուղթը պետք է ճիշտ ուղղությամբ տեղադրվի համապատասխան խցիկում:

Ջերմային թղթի ճիշտ տեղադրումը կարելի է ստուգել ջերմաթղթի մակերևույթը ցանկացած պինդ առարկայով կամ եղունգով քերելով (մակերևույթի վրա պետք է մնա հետք):

Զայները հաշվելու յուրաքանչյուր սարք հոսանքի աղբյուրին միացնելու համար.

- ✔ Սարքի հետին մասում եղած միացքին («պորտին»)պետք է միացվի սնուցման բլոկ և ադապտերի լար:
- ✔ Ադապտերի լարը պետք է միացվի անխափան սնուցման աղբյուրի (UPS):
- ✔ Անխափան սնուցման աղբյուրը (UPS) պետք է միացվի հոսանքի աղբյուրին (հոսանքի աղբյուրին հասցնելու համար, ըստ անհրաժեշտության, օգտագործվում է հոսանքի երկարեցման լար):

Ձայները հաշվելու սարք

Սնուցման բլոկ

Ադապտերի լար

Անխափան սնուցման աղբյուր (UPS)

Հոսանքի աղբյուրին միացնելուց հետո ստուգման սարքի ետին մասում կվառվի լամպ:

Հոսանքի աղբյուրին ճիշտ միացնելու մասին մատնանշում է սարքի ետին մասում վառված լամպը:

Սարքերը իրար հետ կապակցելու (համաժամացում) համար ցանցի լարի մի ծայրը պետք է միացվի մի սարքի կողմային մասում եղած համապատասխան միացքին («պորտին»), իսկ ցանցի լարի մյուս ծայրը՝ երկրորդ սարքի կողմային մասում եղած համապատասխան «պորտին»: (Ցանցի լարն ապահովում է սարքերի կապակցում իրար հետ՝ տվյալների համաժամացման նպատակով):

Ցանցի լար

Այն ընտրատեղամասերում, որտեղ տեղադրված կլինի ձայների հաշվման 3 սարք, սարքերն իրար միացնելու համար (համաժամացում), բոլոր երեք սարքերի ցանցի լարի մի ծայրը պետք է միացվի սարքերի կողմային մասում եղած համապատասխան «պորտերին», իսկ ցանցի լարի երկրորդ ծայրը՝ հաբին (Router) (հաբն ապահովում է սարքերի կապակցում իրար հետ՝ տվյալների համաժամացման նպատակով):



Սարքերը պետք է տեղադրվեն այնպես, որ լարերի հետ մեխանիկական շփումը նրանց ճիշտ աշխատանքի հետ կապված խնդիր չստեղծի:

ՀԱՎԵԼՎԱԾ N2

Ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների քանակի հաշվառման ձևաթղթի նմուշ

[არჩევნების დასახელება] [კენჭისყრის თარიღი]

ფორმა №5-3.28.01, განკ. №60/2025

N_____ საარჩევნო ოლქის

N_____ საარჩევნო უბანი

აქტი

რეგისტრატორი N _____

ამომრჩეველი არ მონაწილეობს:	
მერის არჩევნებში (მონიშნეთ "X"-ით)	მაჟორიტარულ არჩევნებში (მონიშნეთ "X"-ით)

ამომრჩეველი არ მონაწილეობს:	
მერის არჩევნებში (მონიშნეთ "X"-ით)	მაჟორიტარულ არჩევნებში (მონიშნეთ "X"-ით)

ՀԱՎԵԼՎԱԾ N3

Քվեարկության գործընթացի շարունակումն առանց էլեկտրոնային միջոցների կիրառման

Տվյալ հավելվածում արտացոլված են այն ընթացակարգային տարբերությունները և համապատասխան կանոնակարգերը, որոնք պետք է նախատեսի տեղամասային ընտրական հանձնաժողովը այն դեպքում, եթե.

- քվեարկության գործընթացը շարունակվում է առանց ընտրողի ստուգման սարքերի կիրառման,
- քվեարկության գործընթացը շարունակվում է առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի կիրառման:

Առանց էլեկտրոնային միջոցների կիրառման քվեարկության գործընթացը շարունակելու մասին որոշումը կայացնելուց առաջ նախատեսվելիք հարցեր

Քվեարկության գործընթացի ընթացքում ընտրողների ստուգման և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերի տեխնիկական թերություն հայտնաբերելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը որոշում է կայացնում քվեարկության գործընթացի ժամանակավոր ընդհատման մասին, ինչի մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Տեխնիկական թերությունը վերացնելուն պես քվեարկությունը շարունակվում է սարքի/սարքերի միջոցով:

Այն դեպքում, եթե քվեարկության գործընթացն ընթանում էր ընտրողների ստուգման և ձայները հաշվելու մեկից ավելի հատուկ էլեկտրոնային սարքերի կիրառմամբ և տեխնիկական թերության պատճառով դադարել է գործել միայն դրանց մի մասը, նման դեպքում քվեարկության գործընթացը շարունակվում է մնացած գործող ընտրողների ստուգման և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի/սարքերի կիրառմամբ:

Այն դեպքում, եթե անհնար լինի ընտրողների ստուգման/ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերով շարունակել քվեարկության գործընթացը, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարն առանց համապատասխան սարքի/սարքերի կիրառման քվեարկությունը շարունակելու մասին ակտ է կազմում և համապատասխան գրառում է կատարում գործավարության մատյանի 32-րդ էջում:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

Կոմիսիոն տավմչդոմարոն գադաՎՎյվեթիլեՐա կենՋիսՎրոն ՎեՋերեՐիսա դա Խմոն ելեվթրոնՎլո մթվլելո աՊարաթոն/աՊարաթեՐիս գամոՎյենեՐիս գարեՎՎ կենՋիսՎրոն գաՎրժելեՐիս թաոՐաՎեՐ		
ՎեՋերեՐիս մոՐեՐո	դրո	ԽելմոՎՎերա
	:	

Կոմիսիոն տավմչդոմարոն գադաՎՎյվեթիլեՐա կենՋիսՎրոն ՎեՋերեՐիսա դա ամոմրՋվելթա ելեվթրոնՎլո ռեվիսթրաՐիոն աՊարաթոն/աՊարաթեՐիս գամոՎյենեՐիս գարեՎՎ կենՋիսՎրոն գաՎրժելեՐիս թաոՐաՎեՐ		
ՎեՋերեՐիս մոՐեՐո	դրո	ԽելմոՎՎերա
	:	

Քվեարկության շարունակումը առանց ընտրողների ստուգման սարքի/սարքերի օգտագործման

Քվեարկության գործընթացը

Ընտրողներին առանց ստուգման սարքերի քվեարկությանը մասնակցելու ծառայություն մատուցելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ապահովում է քվեարկության շենքում աշխատանքային միջավայրի համապատասխան հարմարեցում: Այդ նպատակով հանձնաժողովի նախագահը.

- Ստուգման սարքից տպում է կտրոն/հաշվետվություն, որն արտացոլում է տվյալ պահին քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը/ակտիվությունը (եթե որևէ սարք տեխնիկապես դրա հնարավորություն է տալիս) և հանձնում է հանձնաժողովի քարտուղարին՝ պահպանման համար:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչին ցուցում է տալիս գրանցում իրականացնողների սեղաններից հավաքել ստուգող սարքերը և սահմանված կարգով պահել սարքերի համար նախատեսված արկղերում:
- Կապարակնքում է ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները տեղադրելու համար նախատեսված անթափանց տուփերի ճեղքը և դրանք առանձին պահում:
- Անհրաժեշտության դեպքում որոշում է կայացնում գրանցում իրականացնողների թվի ավելացման մասին և հանձնաժողովի անդամին/անդամներին հանձնարարում է գործառույթի կատարում:
- Գրանցում իրականացնողներին է փոխանցում ընտրական հանձնաժողովի համար նախատեսված ընտրողների ցուցակները (սեղանի ցուցակը լուսանկարներով) և գրանցում իրականացնողի քանոնները, գրանցում իրականացնողներից մեկին տրվում է նաև ընտրողների հատուկ ցուցակ (այսպիսինի առկայության դեպքում):
- Գրանցում իրականացնողներին ցուցում է տալիս գրանցման սեղանների մոտ փակցնել իրենց փոխանցված ցուցակներին համապատասխան ընտրողների հերթական համարներն ու ազգանունների այբբենական հաջորդականությունը:

I. Ընտրողը քվեարկության սենյակ մտնելիս հոսքը կարգավորողի մոտ անցնում է նշմարման ստուգման ընթացակարգ:

Հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը.

- ✔ կարգավորում է քվեարկության շենք մուտք գործող ընտրողների հոսքը,
- ✔ խնդրում է ընտրողին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ (Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական, Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր),
- ✔ ուլտրամանուշակագույն լապտերով ստուգում է՝ ընտրողի ձեռքին կա արդյոք նշմարում:

Ստուգման արդյունքների նախատեսմամբ.

- ✔ Եթե նշմարումը ստուգող հատուկ սարքը պարզում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Հոսքը կարգավորողն ընտրողին բացատրում է ընտրատեղամաս մտնելը մերժելու պատճառը, իսկ ընտրողի տվյալները հաղորդում է հանձնաժողովի քարտուղարին՝ գործավարության մատյանում ընդգրկելու նպատակով:
- ✔ Եթե ընտրողը բավարարում է քվեարկությանը մասնակցելու համար սահմանված պահանջները, ապա հոսքը կարգավորողն ընտրողին ցուցում է տալիս մոտենալ այն գրանցման սեղանին, որին պատկանում է ընտրողների ցուցակում ընդգրկված նրա ազգանվան առաջին տառը և քվեարկության սենյակ ներս է թողնում այն դեպքում, եթե ընտրողի համար նախատեսված գրանցման սեղանի մոտ երկուսից ավելի ընտրող չկա:

Ընտրողի գրանցման ընթացակարգի նկարագրությունը: Գրանցում իրականացնողն ընտրողից խնդրում է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Գրանցում իրականացնողն ստուգում է անձը հաստատող փաստաթղթի գործողության ժամկետը, Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային փաստաթուղթ ներկայացնելու դեպքում ստուգում է փաստաթղթի տրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

Եթե ընտրողը ներկայացնում է Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ժամկետանց փաստաթուղթ կամ Վրաստանի քաղաքացու ուժը կորցրած ոչ էլեկտրոնային անձը հաստատող վկայական (ուժը կորցրած է մինչև 2011 թվականի հուլիսի 27-ը ներառյալ տրված ոչ էլեկտրոնային վկայականը), նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Գրանցում իրականացնողն ընտրողին բացատրում է քվեարկությանը նրա մասնակցությունը մերժելու պատճառը և նշում, որ նրան թույլ կտրվի մասնակցել քվեարկությանը, եթե նա ներկայացնի գործող անձը հաստատող փաստաթուղթ:

Փաստաթղթի գործողության ժամկետը ստուգելուց հետո գրանցում իրականացնողն ստուգում է ընտրողի ներկայացրած փաստաթղթում ներառված ընտրողի հաշվառման տվյալների և ընտրողների ցուցակի տվյալների համապատասխանությունը: Ընտրողը մասնակցում է քվեարկությանը, եթե ընտրողների համապատասխան ցուցակում Վրաստանի քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ մեկտեղ լիովին համապատասխանում են ստորև թվարկված տվյալներից առնվազն 3-ը.

- անուն,
- ազգանուն,
- ծննդյան ամսաթիվ (ամսաթիվ, ամիս, տարեթիվ),
- հասցե (ըստ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականի կամ Գործակալության տվյալների բազայի, որը ներառում է նաև արտասահմանում հաշառման վայրը):

Գրանցում իրականացնողն ստուգում է ներկայացված փաստաթղթում և ընտրողների ցուցակում առկա լուսանկարի և ընտրողի դեմքի համապատասխանությունն իրար: Եթե գրանցում իրականացնողը համարում է, որ առկա է անհամապատասխանություն, գրանցում իրականացնողը պետք է գործի տվյալ Ուղեցույց հրահանգի 32-րդ էջում տրված կանոնակարգով:

Ընտրողների ցուցակում ընտրողի մասին տվյալների համապատասխանությունը հաստատվելու դեպքում գրանցում իրականացնողը կատարում է նշմարում ընտրողի աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի եղունգի վրա (եթե նշված գործողությունը հնարավոր չէ կատարել, ապա՝ աջ ձեռքի մյուս մատների վրա, իսկ եթե դա ևս հնարավոր չէ, ապա՝ նույն կերպ ձախ ձեռքի վրա):

Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և գրանցում իրականացնողը նրան պարզաբանում է, որ լքի քվեարկության շենքը:

Նշման ընթացակարգը կատարելուց հետո ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամն ստորագրում է ընտրողների միասնական ցուցակի համապատասխան սյունակում և ընտրողին մատնանշում է, որ ընտրացուցակում ստորագրությամբ հաստատի քվեթերթիկը ստանալը:

Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան երկայնքով գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողը, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ստորագրի նույն սյունակում: Ընտրողների գրանցումն իրականացնողը նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրի (ընտրողների միասնական ցուցակում ընտրողի համարի, անվան և ազգանվան մատնանշմամբ):

Ընտրողին քվեաթերթիկի տրման գործառույթը: Ընտրողի գրանցման ընթացակարգն ավարտելուց հետո գրանցում իրականացնողն ընտրողին փոխանցում է քվեաթերթիկ, որը բաժանված է երեք սյունակի.

- ✔ առաջին սյունակում ընդգրկված են կուսակցությունների անվանումները՝ ըստ սահմանված հերթականության,
- ✔ երկրորդ սյունակում ընդգրկված են ընտրություններին մասնակցող քաղաքապետի թեկնածուների հերթական համարները, անունը, ազգանունը և առաջադրող սուբյեկտը,
- ✔ երրորդ սյունակում ընդգրկված է մեծամասնական ընտրատարածքում ընտրվելու առաջադրված թեկնածուների հերթական համարը, անունը, ազգանունը և առաջադրող սուբյեկտը:

Քվեաթերթիկի հետ միասին գրանցում իրականացնողն ընտրողին է փոխանցում համապատասխան ձևի հատուկ շրջանակ-ծրար.

- ✔ Եթե ընտրողը մասնակցում է մունիցիպալիտետի քաղաքապետի, մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական և մեծամասնական ընտրակարգերով անցկացվելիք ընտրություններին, կտրվի շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի բոլոր երեք սյունակները:
- ✔ Եթե ընտրողը մասնակցում է միայն մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին, կտրվի շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի միայն երկու սյունակները:
- ✔ Եթե ընտրողը մասնակցում է միայն մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններին, կտրվի շրջանակ-ծրար, որը ծածկում է քվեաթերթիկի միայն մեկ սյունակը:

Գրանցում իրականացնողն ընտրողին կբացատրի քվեաթերթիկը լրացնելու կարգը և հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման կարգը:

Բացատրություն ընտրողի համար, որը մասնակցում է բոլոր երեք տեսակի ընտրություններին (մունիցիպալիտետի քաղաքապետի, մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական և մեծամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններ).

«Քվեարկելու համար քվեաթերթիկի բոլոր երեք սյունակներում ամբողջովին գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը (շրջանի ներքին տարածությունը):
Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով»:

Բացատրություն ընտրողի համար, որը մասնակցում է միայն երկու տեսակի ընտրություններին (մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններ).

«Քվեարկելու համար քվեաթերթիկի առաջին և երկրորդ սյունակներում ամբողջովին գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը (շրջանի ներքին տարածությունը):
Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով»:
Հիշեցնում ենք, որ քվեաթերթիկի սյունակում, որը ծածկված չէ շրջանակ-ծրարով, իրավունք չունենք արձանագրել ընտրություն, այսպիսի քվեաթերթիկը կհամարվի փնասված և ձեզ կտրամադրվի նոր քվեաթերթիկ»:

Բացատրություն ընտրողի համար, որը մասնակցում է միայն մեկ տեսակի ընտրություններին (մունիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրություններ.

«Քվեարկելու համար քվեաթերթիկի առաջին սյունակում ամբողջովին գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը (շրջանի ներքին տարածությունը):
Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով»:
Հիշեցնում ենք, որ քվեաթերթիկի սյունակում, որը ծածկված չէ շրջանակ-ծրարով, իրավունք չունենք արձանագրել ընտրություն, այսպիսի քվեաթերթիկը կհամարվի փսասված և ձեզ կտրամադրվի նոր քվեաթերթիկ»:

Քվեաթերթիկը լրացնելու և հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման կարգը բացատրելուց հետո գրանցում իրականացնողը քվեաթերթիկն այնպես է տեղադրում հատուկ շրջանակ-ծրարի մեջ, որպեսզի այն ամբողջությամբ ծածկի համապատասխան սյունակում/սյունակներում տրված ընտրական սուբյեկտների ցանկը:

Գրանցում իրականացնողն ընտրողին ցուցում է տալիս, որ հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկի վերին մասում գունավորի փորձնական շրջանը:



Հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկի վերին մասում տեղակայված փորձնական շրջանը

Քվեաթերթիկի փորձնական շրջանը գունավորելուց հետո գրանցում իրականացնողն ընտրողին է փոխանցում հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկը և բացատրում նրան, որ քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ պետք է ներմուծի այնպես, որ քվեաթերթիկի այն մասը, որի վրա գտնվում է փորձնական շրջանը, հայտնվի ներքևում: Դրանից հետո գրանցում իրականացնողն ընտրողին ուղղորդում է, որ տեղափոխվի գաղտնի քվեարկության խցիկ:

II. Քվեաթերթիկը և քվեարկության համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարը ստանալուց հետո ընտրողը մտնում է գաղտնի քվեարկության խցիկ:
Ընտրողը հատուկ նշիչի միջոցով լրացնում է քվեաթերթիկը և այն տեղադրում հատուկ շրջանակ-ծրարի մեջ:

Գաղտնի քվեարկության խցիկում քվեաթերթիկը լրացնելիս արգելվում է այլ անձի ներկայությունն և լուսանկարահանում ու տեսանկարահանում:

Ընտրողը, որը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, իրավունք ունի գաղտնի քվեարկության խցիկ իրեն օգնելու հրավիրել ընտրական տեղամասում գտնվող ցանկացած անձի՝ բացառությամբ.

ա) ընտրական հանձնաժողովի անդամի,
բ) թեկնածուի,
գ) ընտրական սուբյեկտի ներկայացուցչի,
դ) դիտորդի,
ե) մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի:
Եթե ընտրողը փսասել է քվեաթերթիկը կամ հատուկ շրջանակ-ծրարը, նա այդ մասին պետք է տեղեկացնի հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրանցում իրականացնողը պարտավոր է ընտրողի փսասված քվեաթերթիկը/հատուկ շրջանակ-ծրարը փոխարինել նորով:

Հանձնաժողովի նախագահը ընտրողի ներկայությամբ այնպես է ծալում փսասված քվեաթերթիկը, որ անհնար լինի տեսնել ընտրական սուբյեկտներին, ծալված քվեաթերթիկն ամրացնում է մետաղյա կապիչով, կտրում է անկյունը, վրան գրում է «Վնասված է» և ստորագրում է: Հանձնաժողովի նախագահը փսասված քվեաթերթիկը պահում է առանձին:

III. Ընտրողը հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկով գնում է հիմնական քվեատուփի մոտ:

Քվեատուփը և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող հանձնաժողովի անդամն ընտրողին բացատրում է քվեաթերթիկը սարքի մեջ ներմուծելու կարգը.

«Քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով այնպես ներմուծե՛ք սարքի մեջ, որ քվեաթերթիկի այն մասը, որի վրա տեղադրված է փորձնական շրջանը, հայտնվի ներքևում:
Շրջանակ-ծրարը թեթև պահե՛ք, որպեսզի սարքը հեշտությամբ ընդունի քվեաթերթիկը:
Սպասե՛ք, մինչև սարքի էկրանին հայտնվի «Ձեր ձայնը ստացվել է» հաղորդագրությունը և միայն դրանից հետո դո՛ւրս եկեք քվեարկության շենքից»:

Քվեատուփը և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկողը պարտավոր է այն ընտրողից, որի ձեռքին տարբերվող տեսակի հատուկ շրջանակ-ծրար է, պահանջել, որ ցույց տա, թե արդյոք չի արված ընտրություն քվեաթերթիկի բաց սյունակում/սյունակներում այնպես, որպեսզի չխախտվի շրջանակ-ծրարով ծածկված սյունակում ընտրողի կողմից կատարված ընտրության գաղտնիությունը:
Եթե քվեաթերթիկի բաց սյունակը/սյունակները գունավորված/նշված լինեն, քվեաթերթիկը կհամարվի փսասված: Վերոնշյալ դեպքը կտեղեկացվի հանձնաժողովի նախագահին, որի հանձնարարությամբ գրանցում իրականացնողը պարտավոր է փոխել ընտրողի փսասված քվեաթերթիկը նորով:
Հանձնաժողովի նախագահը, ընտրողի ներկայությամբ, փսասված քվեաթերթիկը ծալում է այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրական սուբյեկտներին, ծալված քվեաթերթիկն ամրացնում է մետաղական կապիչով, կտրում անկյունը, վրան գրում է «Վնասված է» և ստորագրում: Հանձնաժողովի նախագահը փսասված քվեաթերթիկը պահում է առանձին:

Ընտրողը քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով ներմուծում է հիմնական քվեատուփի վրա տեղադրված սարքի մեջ: Եթե ընտրողը չի կարողանում հատուկ շրջանակ-ծրարի միջոցով քվեաթերթիկը ներմուծել սարքի մեջ, ապա նրան կարող է օգնել քվեատուփը և ձայների հաշվման էլեկտրոնային հատուկ սարքը վերահսկող հանձնաժողովի անդամը:

Ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ քվեաթերթիկը ներմուծելը

Քվեաթերթիկը հիմնական քվեատուփի մեջ ներմուծելը հաստատող հաղորդագրություն

Եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը չի ընդունում և վերադարձնում է քվեաթերթիկը, հնարավոր է այն կրկին ներմուծել ձայների հաշվման նույն կամ այլ էլեկտրոնային սարքի մեջ: Եթե քվեաթերթիկը նորից վերադարձվի, ապա այն կհամարվի փսասված: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրանցում իրականացնողը պարտավոր է փսասված քվեաթերթիկը փոխարինել նորով:

Քվեաթերթիկը հիմնական քվեատուփի մեջ զետեղելուց հետո ընտրողը հատուկ շրջանակ-ծրարը դնում է դրա համար հատկացված սեղանի վրա և լքում ընտրատեղամասը: Հատուկ շրջանակ-ծրարները փոխանցվում են ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներին:

Ընտրողների անձնական տվյալների պաշտպանության ապահովումը

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց արգելվում է ընտրողների սեղանի ցուցակում եղած անձնական տվյալները, ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը և ընտրողի կողմից քվեաթերթիկում արված ընտրությունը լուսանկարահանել կամ այլ կերպ մշակել (այդ թվում, հավաքել, ձայնագրել, պահել), օգտագործել, երևակել, փոխանցել և/կամ տարածել: Նշված արգելքը տարածվում է նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրողի անձնական տվյալների հետ կապված գործողությունների իրականացումն անհրաժեշտ է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով և ԿԸՀ իրավական ակտերով նախատեսված տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունն իրականացնելու համար:

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների հաշվառումը

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների թիվը (ընտրողների ակտիվությունը) որոշվում է ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին: Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների վերջնական քանակի տվյալները որոշվում է քվեարկության գործընթացի ավարտից հետո:

Քվեարկության գործընթացն ավարտվում է ժամը 20:00-ին, բացառությամբ այն դեպքի, երբ այդ պահի դրությամբ քվեարկությանը մասնակցելու համար հերթում կանգնած են ընտրողներ: Հենց որ հերթում կանգնած հաշվառված վերջին ընտրողը կքվեարկի, քվեարկությունը հայտարարվում է ավարտված:

Առանց ընտրողներին ստուգող սարքերի կիրառման քվեարկության գործընթացը շարունակելիս՝ քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների թիվը որոշելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախքան ստուգող սարքերը տուփերում տեղավորելը, ստուգման սարքից տպում է կտրոն/հաշվետվություն, որն արտացոլում է տվյալ պահին ընտրողների թիվը/ակտիվությունը: Այն դեպքում, երբ ոչ մի ստուգիչ սարքից չի հաջողվում կտրոն/հաշվետվություն տպել, հանձնաժողովի նախագահը ընտրողների թվի հաշվառման համար նախատեսված համապատասխան ժամանակվա համար մեկ անգամ բացում է ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները տեղադրելու համար նախատեսված անթափանց կապարակնքված տուփերը, հաշվում է դրանցում զետեղված կտրոնների քանակը: Հանձնաժողովի քարտուղարն իր մոտ նշում է այդ տվյալները: Դրանից հետո հանձնաժողովի նախագահը կտրոնները կրկին զետեղում է անթափանց տուփերի մեջ, կապարակնքում է և առանձին պահպանում:



Հաջորդ փուլում քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը որոշվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի համար նախատեսված ընտրացուցակներում, այդ թվում, շարժական քվեատուփի ցուցակում առկա ստորագրությունների համաձայն, որոնք հանձնաժողովի նախագահի ցուցումով հաշվում են գրանցում իրականացնողները, առանց քվեարկության գործընթացին խանգարելու: Ընտրացուցակներում հաշվված ստորագրությունների թվին գումարվում են ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները հաշվելու արդյունքում ստացված տվյալները:

Գրանցում իրականացնողների հաշված տվյալների ճշտությունը ստուգելու համար, բացի ընտրացուցակներում ստորագրությունների թվից, նրանք պետք է հանձնաժողովի նախագահին տեղեկացնեն իրենց կողմից տրված քվեաթերթիկների թիվը (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված փսասված քվեաթերթիկների թիվը):

Տրված քվեաթերթիկների թիվը կարելի է որոշել՝ հանձնաժողովի նախագահից ստացված քվեաթերթիկների թվի հետ գրանցում իրականացնողի մոտ մնացած քվեաթերթիկների թիվը համեմատելով:

Հանձնաժողովի նախագահը ստուգում է տվյալների ճշտությունը.

Տրված քվեաթերթիկների թվից	—	Վնասված քվեաթերթիկների թիվը	=	Ընտրողների ստորագրությունների թվին

Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, ընտրողների գրանցում իրականացնողն անհապաղ պետք է բացատրագիր գրի (դրանում արտացոլված տվյալները նախատեսվում են քվեարկության/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը որոշելու և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելու նպատակով):

Վերը նկարագրված կարգով որոշվում է և ստուգվում սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար քվեարկության մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը:

Հանձնաժողովի քարտուղարը քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում և գործավարության մատյանում մուտքագրելիս պետք է նախատեսի հետևյալը.

Քաղաքապետի ընտրությունների համար քվեարկությանը մասնակցող ընտրողների թիվը որոշելու նպատակով սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար որոշված քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվից պետք է հանվի գրանցում իրականացնողների կողմից հաշվառված այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք ընտրություններին մասնակցել են հատուկ ցուցակով և իրավունք չունեին մասնակցել քաղաքապետի ընտրություններին: Հատուկ ցուցակով ընտրություններին մասնակցած այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք իրավունք չունեին մասնակցելու քաղաքապետի ընտրություններին և գրանցում իրականացնողները հաշվառում էին հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը հաշվառելու ձևաթղթում, մուտքագրվում են գործավարության մատյանում:

Սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը որոշելու նպատակով սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների համար որոշված քվեարկության մասնակցած ընտրողների ընդհանուր թվից պետք է հանվի գրանցում իրականացնողների կողմից հաշվառված այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք ընտրություններին մասնակցել են հատուկ ցուցակով և իրավունք չունեին մասնակցել մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին: Հատուկ ցուցակով ընտրություններին մասնակցած այն ընտրողների ընդհանուր թիվը, որոնք իրավունք չունեին մասնակցել մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին, և գրանցում իրականացնողները հաշվառում էին հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը հաշվառելու ձևաթղթում, մուտքագրվում են գործավարության մատյանում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների թիվը հաշվառելու համար նախատեսված համապատասխան ժամանակվա դրությամբ հաշվված քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը պլանշետով փոխանցում է ԿԸՀ (տե՛ս էջ 48, Սխեմա N5. Ընտրողների թվի (մասնակցության) մասին տեղեկությունը ԿԸՀ-ին ուղարկելու գործընթացի նկարագրադում):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը ժամը 12:00-ի և 17:00-ի դրությամբ, ինչպես նաև քվեարկության գործընթացն ավարտվելուց հետո հաշվված ընտրողների վերջնական թիվը նշում է քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունների մեջ և գործավարության մատյանում:

Քվեարկության գործընթացն ավարտելը

Քվեարկության գործընթացն ավարտվում է և քվեարկության շենքը փակվում է ժամը 20:00-ին:

Ժամը 20:00-ի դրությամբ հերթում գտնվող ընտրողների, ձայները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի անդամների, ինչպես նաև, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող այլ անձանց հաշվառման կարգը տեսե՛ք տվյալ Ուղեցույց հրահանգի 52-րդ էջում:

Առանց ստուգման սարքերի քվեարկություն անցկացնելու դեպքում, քվեարկությունն ավարտվելուն պես, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ու անդամները սկսում են պատրաստվել քվեարկության արդյունքների ամփոփման համար: Այս նպատակով հետևողականորեն իրականացնում են հետևյալ ընթացակարգերը.

☐ Էլեկտրոնային սարքերի միջոցով շարժական քվեատուփից քվեաթերթիկների զետեղում հիմնական քվեատուփի մեջ:	էջ 54-55
☐ Քվեարկության նախնական արդյունքների ստացում ձայները հաշվելու էլեկտրոնային սարքերի միջոցով:	էջ 55-60
☐ Ընտրական տեղամասի նախապատրաստում ձայները հաշվելու ընթացակարգի համար և հաշվողների որոշում:	էջ 60-61
☐ Մինչև հիմնական քվեատուփը բացելը ընտրական փաստաթղթերի կապարակնքում: Ծանոթություն. սույն Ուղեցույց հրահանգի 63-րդ էջում տրված կապարակնքման ենթակա ընտրական փաստաթղթերից բացի, հանձնաժողովի քարտուղարը առանձին-առանձին փաթեթների մեջ է տեղադրում. ✔ ընտրողների միասնական ցուցակը, ✔ ընտրողների հատուկ ցուցակը (այսպիսինի առկայության դեպքում): Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր փաթեթի վրա նշում է ընտրատարածքի անվանումը և համարը, ընտրական տեղամասի անվանումը և համարը, ընտրական փաստաթղթի տեսակը: Կապարակնքված փաթեթները, կապարակնքման գծի վրա ստորագրում են հաշվողները և հանձնաժողովի նախագահը:	էջ 62
☐ Հիմնական քվեատուփը բացելը, քվեաթերթիկները հաշվելը/ կապարակնքելը:	էջ 62-64
☐ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելը և հրապարակայնությունը:	էջ 64-69
☐ Գրանցամատյանը փակելը, գործավարության մատյանը փակելը/ կապարակնքելը, հանձնաժողովի հատուկ կնիքը կապարակնքելը: Ծանոթություն. տվյալ Ուղեցույց հրահանգի 71-րդ էջում տրված կանոնակարգը, որը կապված է ստուգման սարքերից տպված վերջնական հաշվետվության, այլ ընտրական փաստաթղթերի հետ ընտրատարածքային հանձնաժողովին փոխանցման հետ, չի գործում, եթե քվեարկության գործընթացը շարունակվել է առանց ստուգման սարքերի:	էջ 70-71
☐ Ընտրական փաստաթղթերի, էլեկտրոնային սարքերի և այլ գույքի փոխանցումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:	էջ 71-72

Քվեարկության գործընթացի շարունակումը առանց ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերի կիրառման

Քվեարկության գործընթացը

Առանց ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերի ընտրողներին քվեարկությանը մասնակցելու ծառայություն իրականացնելու նպատակով, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ հիմական քվեատուփերի վրայից հանում է սարքերը:

Հանձնաժողովի նախագահը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչին հանձնարարում է ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերը սահմանված կարգով պահել սարքերի համար հատկացված տուփերի մեջ:

Ընտրողը հնարավորություն ունի քվեաթերթիկը, առանց հատուկ ծրարի/շրջանակ-ծրարի զետեղել անմիջապես հիմական քվեատուփի մեջ, քվեաթերթիկը զետեղելու հատուկ ճեղքի միջոցով:

Քվեաթերթիկը զետեղելու ճեղք

Առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի քվեարկության ընթացքում ընտրողի համար փոխվում է միայն քվեաթերթիկը հիմական քվեատուփում տեղադրելու ընթացակարգը, այն է՝ գաղտնի քվեարկության խցիկից դուրս եկած ընտրողը քվեաթերթիկը քվեատուփի մեջ պետք է զետեղի ծալված վիճակում (առանց հատուկ ծրարի/շրջանակ-ծրարի):

Ընտրողի՝ քվեարկության շենք մուտքը թույլ տալու կարգը և գրանցում իրականացնողի կողմից ընտրողին մատուցվող ծառայությունը (գրանցումը ստուգող սարքերի միջոցով, քվեաթերթիկը լրացնելու կարգի բացատրությունը) տե՛ս սույն Ուղեցույց հրահանգի 30-37 էջերում:

Հիմական քվեատուփի մոտ կանգնած իրավազոր հանձնաժողովի անդամ ընտրողին բացատրում է քվեաթերթիկը հիմական քվեատուփում տեղադրելու կարգը.

«Գաղտնիության սկզբունքի պահպանմամբ քվեաթերթիկը ծալված վիճակում տեղադրե՛ք հիմական քվեատուփի մեջ»:

Քվեարկության գործընթացի ավարտելը

Առանց ձայների հաշվման էլեկտրոնային հատուկ սարքերի քվեարկություն անցկացնելու դեպքում քվեարկության ավարտից անմիջապես հետո (ավարտվում է ժամը 20:00-ին, կամ նշված ժամին հերթում կանգնած վերջին գրանցված ընտրողի կողմից քվեարկության ավարտից անմիջապես հետո) տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ու անդամները սկսում են նախապատրաստվել քվեարկության արդյունքների ամփոփմանը: Այդ նպատակով հետևողականորեն իրականացվում են հետևյալ ընթացակարգերը.

☐ Ստուգման սարքերի մեջ ստուգման գործընթացն ավարտել։	էջ 53-54
☐ Շարժական քվեատուփից քվեաթերթիկների զետեղում հիմնական քվեատուփի մեջ հատուկ ճեղքի միջոցով և ավարտելուն պես հիմնական քվեատուփերի ճեղքերի կապարակնքում։ Ծանոթություն. շարժական քվեատուփը բացելիս՝ կապարակնիքների ամբողջականության ստուգման ընթացակարգը, հատուկ շրջանակ-ծրարում մեկից ավելի քվեաթերթիկ հայտնաբերելու դեպքում իրականացվելիք միջոցառումները իրականացվում են անփոփոխ, տվյալ Ուղեցույց հրահանգի նշված էջերում արտացոլված կանոնակարգերի համաձայն։	էջ 54-55
☐ Ընտրական տեղամասի նախապատրաստում ձայները հաշվելու ընթացակարգի համար և հաշվողների որոշում։	էջ 60-62
☐ Մինչև հիմնական քվեատուփը բացելը ընտրական փաստաթղթերի կապարակնքում։	էջ 62
☐ Հիմնական քվեատուփը բացելը, քվեաթերթիկները հաշվելը/ կապարակնքելը։ Ծանոթություն. ✔ Սույն ուղեցույց հրահանգի 63-րդ էջում տրված քվեաթերթիկների անվավերության հիմքերից բացի, սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է համարվում, եթե քվեաթերթիկը հատկացված էր այլ ընտրական տեղամասի համար (այսպիսի քվեաթերթիկները կապվում են առանձին փաթեթով և կապարակնքվում են, դրանց թիվը չի նշվում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ և նշվում է միայն քվեարկության օրվա գործավարության մատյանում)։ ✔ Եթե քվեատուփի մեջ հայտնաբերվել է չսահմանված նմուշի քվեաթերթիկ, այսպիսի քվեաթերթիկն առանձին է դրվում։	էջ 62-64
☐ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելը և հրապարակայնությունը։	էջ 64-68
☐ Գրանցամատյանը փակելը, գործավարության մատյանը փակելը/ կապարակնքելը, հանձնաժողովի հատուկ կնիքը կապարակնքելը։ Ծանոթություն. տվյալ Ուղեցույց հրահանգի 71-րդ էջում տրված կանոնակարգը, որը կապված է ձայները հաշվելու էլեկտրոնային սարքից նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքն այլ ընտրական փաստաթղթերի հետ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին փոխանցման հետ, չի գործում, եթե քվեարկության գործընթացը շարունակվել է առանց տվյալ սարքերի։	էջ 69-70
☐ Ընտրական փաստաթղթերի, էլեկտրոնային սարքերի և այլ գույքի փոխանցումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։	էջ 71-72

ՀԱՎԵԼՎԱԾ N4

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվելիք հիմնական միջոցառումների օրացույց

Սեպտեմբեր						
Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
						1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23	24	25	26	27	28	29
30						

4 սեպտեմբերի (քվեարկության օրվանից 30 օր առաջ).

- Սկսում է գործել նորաստեղծ տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցվում են ԿԸՀ-ի կողմից վավերացված ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովի շենքում աչքի ընկնող տեղում փակցնում է ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը՝ առանց լուսանկարների):
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը սկսում է ընտրողների թերթիկների բաժանումը (նախնական ժամկետ):
- Դիտորդները, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները և ընտրողն իրավունք ունեն ընտրողների ցուցակում անճշտության հայտնաբերելու դեպքում դիմում ներկայացնել տեղամասային ընտրական հանձնաժողով և պահանջել փոփոխություն կատարել ընտրողների մասին տվյալներում/ընտրողների միասնական ցուցակում (նախնական ժամկետ): Տեղամասային ընտրական հանձնաժողովը ստացված դիմումները (կից փաստաթղթերով՝ այսպիսների առկայության դեպքում) անհապաղ փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:
- Ընտրողը, որն առողջական վիճակի պատճառով չի կարող գնալ քվեարկության շենք կամ գտնվում է ընտրական տեղամասի տարածքում, բայց դժվարամատչելի վայրում, իրավունք ունի օգտվել շարժական քվեատուփով քվեարկելու ծառայությունից (նախնական ժամկետ): Տեղամասային ընտրական հանձնաժողովը շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկվելիք ընտրողների մասին տեղեկությունն անհապաղ փակցնում է քվեարկության շենքում տեսանելի տեղում:
- Ընտրողն իրավունք ունի դիմել տեղամասային ընտրական հանձնաժողով և պահանջել իրեն ընդգրկել հարմարեցված ընտրական տեղամասերի ընտրողների հատուկ ցուցակում (նախնական ժամկետ):

14 սեպտեմբերի (քվեարկության օրվանից 20 օր առաջ).

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը բաժանում է ընտրողի թերթիկները (վերջին ժամկետ):

16 սեպտեմբերի (քվեարկության օրվանից 18 օր առաջ).

- Դիտորդները, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչները և ընտրողն իրավունք ունեն ընտրողների ցուցակում անճշտություն հայտնաբերելու դեպքում դիմում ներկայացնել տեղամասային ընտրական հանձնաժողով և պահանջել ընտրողների մասին տվյալներում/ ընտրողների միասնական ցուցակում փոփոխություններ կատարել (վերջնաժամկետ): Տեղամասային ընտրական հանձնաժողովը ստացված դիմումները (կից փաստաթղթերով՝ այսպիսինի առկայության դեպքում) անհապաղ փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

23 սեպտեմբերի (քվեարկության օրվանից 11 օր առաջ).

- Անվասայլակից օգտվող ընտրողն իրավունք ունի դիմելու տեղամասային ընտրական հանձնաժողով և պահանջելու ընդգրկվել հարմարեցված ընտրական տեղամասերի ընտրողների հատուկ ցուցակում (վերջնաժամկետ):
- Անվասայլակից օգտվող ընտրողի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողով դիմելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ընտրողի մասին տեղեկությունները տրամադրել վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Այն ընտրողը, որն առողջական վիճակի պատճառով չի կարող գնալ քվեարկության շենք կամ գտնվում է ընտրական տեղամասի տարածքում, սակայն դժվարամատչելի վայրում, իրավունք ունի դիմել տեղամասային ընտրական հանձնաժողով՝ շարժական քվեատուփի քվեարկության ծառայությունից օգտվելու պահանջով (վերջնաժամկետ): Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության շենքում տեսանելի տեղում անհապաղ փակցնում է շարժական քվեատուփում ընդգրկվելիք ընտրողների մասին տեղեկությունները:

24 սեպտեմբերի (քվեարկության օրվանից 10 օր առաջ).

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սահմանում և կարգադրությամբ հաստատում է հարմարեցված ընտրական տեղամասերի ընտրողների հատուկ ցուցակը և այն փոխանցում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը հարմարեցված ընտրական տեղամասերի ընտրողների հատուկ ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը) անհապաղ փակցնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի շենքերում տեսանելի տեղում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները և դիտորդներն իրավունք ունեն վերստուգելու շարժական քվեատուփի միջոցով քվեարկելու պահանջի հիմնավորվածությունը և տեղամասային ընտրական հանձնաժողովի առջև դնել այդ ընտրողներին շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկելու նպատակահարմարության հարցը (վերջնաժամկետ): Տվյալ հարցով որոշումը կայացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովը:

27 սեպտեմբերի (քվեարկության օրվանից 7 օր առաջ).

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանություն է անցկացնում տեղամասային ընտրական հանձնաժողովի գործառույթները բաշխելու համար (վերջնական ժամկետ):

Հոկտեմբեր						
Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
	1	2	3	4 Քվեարկության օր	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30	31			

1 հոկտեմբերի (քվեարկության օրվանից 3 օր առաջ).

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը, ընտրական տեղամասի տարածքում հաշվառված և ընտրողների միասնական ցուցակում ընդգրկված ընտրողներին է փոխանցում ընտրողների թերթիկներ (վերջնական ժամկետ)։

2 հոկտեմբերի (քվեարկության օրվանից 2 օր առաջ).

- Տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցվում են վերջնական, ճշգրտված ցուցակների հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակները (պատի ցուցակ առանց լուսանկարների)։ Պատի ցուցակի սկզբնական տարբերակը հանվում է, և հանձնաժողովը նույն տեղում փակցնում է ճշգրտված տարբերակը։

3 հոկտեմբերի (քվեարկության նախորդ օրը).

- Տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցվում է ամբողջ անհրաժեշտ գույքը, պլանշետային համակարգիչը, ընտրական փաստաթղթերը և այլ ընտրական նյութեր (վերջնական ժամկետ)։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը կահավորում է քվեարկության շենքը։

4 հոկտեմբերի (քվեարկության օրը).

- Ժամը 06:45՝ բացվում է ընտրատեղամասը։
- Ժամը 08:00-ից՝ սկսվում է քվեարկությունը։
- Ժամը 09:00-ից՝ սկսվում է շարժական քվեատուփով քվեարկության գործընթացը։
- Ժամը 10:00-ից (ժամը 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին)՝ որոշվում է քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը։
- Ժամը 19:00՝ ավարտվում է շարժական քվեատուփով քվեարկության գործընթացը։
- Ժամը 20:00՝ ավարտվում է քվեարկության գործընթացը։ Ընտրատեղամասը փակվում է։
- Ժամը 20:00-ից՝ սկսվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը։